

4891



ՊԱՐՏԵԶ

ԲԱՐՁԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ



17

> - 14

գր. 20.թեւ Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ

1907

1907



29 JUL 2009

ՀԱՅՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՎ Ն. ՊԵՐՊԵՐԵՍՆԻ

428
260-ՀԱ

ՊԱՐՏԾԵԼԶ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1907



ԳՐԵՑ

ՅԻԿԻՆ, Փ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ



مغارف հայութ նظارت ջայիլսն է ։ Հշերն թագ 219 տարից և
326 նոմրու բաշտամած մեղ տպա ամենաշ

1907

Յպազր. ԶԱՐԵՎ Ն. ՊԵՐՊԵՐԵՍՆԻ
Կ. ՊՈՂԻՆ

05. 2013

9897



ՕՐ. ԱՐԱՔՍԻՆ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՑԱՇԱԿԻՆ



ԿԾԱԽ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

« Հաստատել խորհելու, զգալու,
զործելու սովորութիւններ, ահա՝ անոր
մէջն է ամբողջ դաստիարակութիւնը » :

Ա. — ԿԵԱՆՔԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԷջ



Ընտանիք մը ունենալու

երջանկութիւնը.

գարակի մը մէջ աղջիկ մը տեսայ, զոր աղջատ գեղջկուհի մը կը պահէր մարդասիրաբար :
Այն աղջիկը թարմ և առողջ էր :
կը թուէր թէ երջանիկ է . սակայն զայն ճանչցողները երբ տեսնէին, կը տիրէին, գլուխնին շարժելով կ'ըսէին . « Խեղճ տըղայ, խեղճ տղայ » :

ինչո՞ւ կը ցաւէին վրան . — Որովհետև ընտանեցուրի մըն եր . հայր մայր չուներ :

Ընտանեղուրկ տղան ամենաթշուառն է տղոց մէջ , անոր անծանօթ են ընտանեկան յարկի ուրախութիւնները , իրեն կեանք տուղղներէն խնամուելու , պաշտպանուելու և սնանելու երջանկութիւնը :

Տղա՛ք , խորհեցէք այն խեղճ աղջկան վրայ , եւ ընտանիք մը ունենալու երջանկութիւնը վայելեցիք :

Տղայ մը ի՞նչպէս կը յայտնէ իր ծնողին
թէ կը սիրէ զիրենք .

Վարդուհի՝ շատ խանդաղատանք ունի իր մօրն ու հօրը համար . իրեն մեծ ուրախութիւն է շատ անգամ զանոնք համբուրել և ըսել թէ շատ կը սիրէ զիրենք : Բայց երբ մայրը պէտք ունենայ անոր օգնութեան , կամ հայրը բան մը ուզէ՝ որով փոքրիկին խաղերը կ'ընդհատուին , ահա այն ատեն վարդուհի քիթը կը կախէ եւ հազիւ հազ կը հաղանդի :

Հաւատացէ՛ք որ վարդուհի իր ըսածին չափ չը սիրեր ծնողքը , և որչա՛փ տղաքներ կան անոր պէս :

Եթէ դուք շատ կը սիրէք ձեր ծնողքը , այս աղջիկն տարբեր կերպով պիտի վարուիք : Ուշադիր պիտի ըլլաք այն ամէն բանի , որ կրնայ զանոնք ուրախցնել և հաճոյք պատճառել անոնց : Պիտի հնագանդիք անմիջապէս և ուրախութեամբ : Անոնց աշխատութեան պիտի օգնէք որչափ կը ներեն ձեր տարիքը եւ ուժը : Վարդուհիի պէս հաճելի պիտի ըլլայ ձեր սէրն անոնց յայտնել . սակայն աւելի գործով պէտք է յայտնիք ձեր սէրն ու խանդաղալաւ ։ Եթիք :

Ի՞նչ կ'ընէ մայրը սիրող տղան .

Պզտիկ աղջիկներ , գիտէ՞ք ինչպէս պէտք է յայտնէք ձեր մօր՝ այն մեծ և բուռն սէրը , զոր ունիք սրտերնուդ մէջ : — Ահա թէ ի՞նչ պիտի ընէք :

Առտուն , արթննալնուդ պէս պիտի ելլէք ու անմիջապէս հագուիք : Կանոնաւոր կերպով պիտի յարդարէք ձեր սենեակը , անկողինը , եւ այն հադուստները որ նոյն օրը չպիտի հագնիք՝ տեղը գնէք : Դպրոցէ ելած ժամանակ փութով տուն պիտի դառնաք ձեր մօրը քով առանց փողոցները և ձամբանդանդաղելու : Պիտի զգուշանաք աղտոտելէ կամ պատռելէ ձեր հագուստները զոր մայրերնիդ այնչափ նեղութիւն կրած է կարելու , լուալու եւ կարկտելու համար : Առտոնին գործերուն մէջ պիտի օգնէք անոր եթէ պատահի որ բան մը զնելու զրկէ ձեզ , կամ որ եւ է յանձնարարութիւն մը ընէ՝ ուրախութեամբ պիտի կատարէք : Եթէ ձեզմէ փոքր եղբայրներ կամ քոյրեր ունիք , անոնց հոգ պիտի տանիք ձեր մօր պէս :

Սիրելի փոքրիկ աղջիկներ , եթէ այս ամէնը ընէք դարձեալ գիտցէք որ չէ՛ կրնա ձեր մայրն անչափ սիրել , որչափ որ ան ձեզ կը սիրէ :

Եեր հայրը .

Երբ դուք դպրոցն էք ու բան կը սորվիք առանց յոդնելու և կամ զբուանքի ժամանակ կը խաղաք , ձեր հայրը կ'ածխատի ձեզի համար :

Անիկա երբեմն շատ ծանր կամ վտանգաւոր աշ-

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Խատութիւններ կ'ընէ, տոմարներու և թուղթերու վրայ ծռած, դժուար հաշիւններու մէջ ընկղմած է. առատուընէ մինչեւ իրեկուն կ'աշխատի, որպէս զի թէ՛ ձեզի և թէ՛ ամրող ընտանիքին համար պէտք եղածը հայթայթէ:

Ամէնէն առաջ արթննալ, ամէնէն վերջը պառկիլ, ահա՞ իր վարած կեանքը, որ ուրախ չէ. իր ամենամեծ երջանկութիւնը կը կայանայ իր զաւակներուն պատճառած ուրախութեան մէջ. ուստի խորհեցք թէ որչա՞փ պարտական էք ձեր սէրը, խանդադատանքը անոր ցուցնելու :

Իրիկուան տուն դարձածին պէս դիմաւորեցէք, եթէ բան մը ունի ձեռքը՝ անմիջապէս առէք որ հանգըստանայ, նայեցէք որ սեղանը շուտով և հաճելի կերպով պատրաստէք:

Ձեր հօր մեկ զոհունակ ակնարկը ձեր ամենամեծ վարձարութիւնը պիտի ըլլայ այդ փոքրիկ հոգաւառութիւններուն համար :

Մամեր, Պապեր.

Մեր մամերը, պապերը ձերացած են ընտանիքին համար ըրած աշխատութիւններնուն և տարած խընամքներնուն հետեւանքով: Անոնք մեծցուցած են մեր հայրը կամ մայրը, մեզի ևս խնամած են փոքր եղած ժամանակնիւ, և նոյն խոր այսօր ուրիշ ուրախութիւն չունին՝ եթէ ոչ մեզի երջանիկ, ուրախ եւ առողջ տեսնել:

Սիրելի՛ ձերունիներ, գրեթէ աչքերնին ալ չտես-

ներ, քալուած քնին առաջուան պէս շիտակ չէ, այլ ևս առաջուան ոյժը չունին և կամաց կամաց, հանդարտութեամբ իրենց կեանքի վախճանին կը հասնին:

Քաղցրացնենք իրենց ձերութեան, աւա՛զ, համբուած օրերը: Մարդասէր գտնուինք իրենց տկարութիւններուն հանդէպ. երբեք չծաղրենք իրենց մոլութիւնները. երբ մենք ալ ծերանանք (որովհետեւ մեզի ալ պիտի գայ ծերութիւնը), թերեւս աւելի ծաղրելի բաններ ունենանք: Մեզի պարտականութիւն համարենք անոնց փափաքները կատարել, շրջագայութեան ատեն թեւերնին բռնենք, իրենց յանձնաբարութիւնները սիրով կատարենք, քովերնին նըստելով հետեւնին խօսինք:

Պզիկ տղու մը սիրով կը նանջցուի ծերութիւններուն ցուցուցած սիրովն ու յարգանենվը:

« Ես անդրանիկն եմ ».

Ծանօթ մանուկներէս մէկը շարունակ կը կրկնէր իրմէ փոքր քոյրերուն. « Ես անդրանիկն եմ ». կը կարծեր թէ ասով իր առաւելութիւնը կը յայտնէ:

Այո՛, եթէ ինք անդրանիկն է, պէտք է առաւելութիւն մը ունենայ միւսներուն վրայ: Գիտէ՞ք, որն է այս առաւելութիւնը, իմաստութիւն, խելացութիւն և վայելչութիւն. բայց ասկէ զատ բան չունի:

Բոլոր քոյրերը հաւասար են, միայն մէկը կայ որ աւելի պարտականութիւն ունի, ան ալ անդրանիկն է:

Անդրանիկ քոյրը կ'որագի փոքր եղբայրներովն ու քոյրերովը, եթէ մայրը չկընար զայն ընել: Զա-

Նոնք կը պաշտպանէ, անոնց կ'օգնէ և քիչ մը աւելի
կը դգուէ ու կը շոյէ, և այս ներելի է իրեն։ Մա-



Նաւանդ անոնց բարի օրինա՛լ կուտայ և կը սորվեցընէ
բարի ու խելացի ըլլալ։ Մեծ ֆոյր պէտք է որ այս ա-
մենք պարտականութիւնները կատակ։



Կրսուեր ֆոյրը

Այն որ « կրտսեր քոյր » կ'անուանեն, ընտանի-
քին ամէնէն փոքրն է, թերեւս դուք էք, « միւրելի
տղա՛ս, կամ ձեր ընկերը»

Կրտսեր քոյրը պէտք է իր մեծ քոյրը սիցէ իր մօրը պէս։ Եթէ ինք փոքր դժգոհութիւն մը ունի։ մեծ քրոջը կ'ըսէ, չնորհալի կերպով կը խնդրէ որ չը հասկած դասը իրեն բացատրէ կամ չկրցած դժուար գործը կատարէ։ Իրեն մեծ հաճոյք, ուրախութիւն է մեծ քրոջը կամ եղբօրը հետ շրջագայիլ։ Անոր հետ կատակ չըներ աշխատած ժամանակ։ Անոր դէմ դանդառատ չըներ ծնողքին։

Կայ օր մը երբ այդ մեծ քոյրը ձեզի համար հօր կամ մօր տեղ բռնէ։ Խորհեցէք թէ պաշտպանուելու համար այդ քրոջ ամրող գուրգուրանքին պէտք ունիք։ Զեր բոյերը սիրելով է որ կրնակ անոնցմէ սիրովիլ։

Ընտանիքին դուրս ազգականները

Ընտանիք կը կազմեն հայր, մայր, զաւակներ, մամեր և պապեր, կան նաև ուրիշ անձեր որ շատ մօտ են ընտանիքին, անոնք են հօրեղբայրներ, մօրեղբայրներ եւ ասոնց զաւակները։

Ասոնք որչափ յաճախ և մօտէն տեսնուին՝ այնչափ աւելի կը սօրեն, եւ որչափ որ մեզ ճանչնան, այնչափ աւելի կը կապուին մեզի հետ։

Ընտանիքը այնչափ լաւ բան է որ երբեք չըսուիր թէ շատ բազմածիւղ եւ բազմանդամ է։ Եթէ հոգ չը տանիք ազգականներու հետ սիրալիր յարաբերութիւն պահելու նոյն իսկ քիչ մը հեռաւորներուն հետ, այն ատեն ընտանեկան կապը կը թուլայ՝ մինչեւ իսկ կ'ոչնչանայ։ Այն ատեն այլ ևս մամերու եւ պապե-

րու շուրջը մեծ, զուարթ եւ բազմաթիւ անդամներ տեսնելու ուրախութիւնը չենք ունենար։ Այս վիճակին արդիւնքն է մեր կզզիացումը եւ եսասիրութեան զարգացումը։ Եսասիրութենէ զերծ մնալու ամենալաւ միջոցն է ընտանեկան զգացումը մօակել։

Ընտանեկան զգացում

Գիտէ՞ք, ի՞նչ ըսել է ընտանեկան զգացում ունենալը։

Ընտանեկան զգացում ունենալ կը նշանակէ այնպէս միացած ըլլալ իրարու հետ, որ մէկ անդամին պատահածը ամէնուն եղած նկատուի։

Իրար այնպէս սիրել, որ մէկ անդամին պատահած վիշտը ամէնուն ալ ազդէ, և թէ մէկուն ուրախութիւնը հաւասարապէս ուրախացնէ միւսները։

Դարձեալ պէտք է շգփուարանաք բանէ մը զըրկուիլ ձեր քրոջ, ձեր հօր, ձեր մօր եւ կամ ձեր ընտանիքին ուրիշ անդամին համար։

Ընտանեկան զգացում ունենալ կը նշանակէ յարգել եւ սիրել ազգանունը եւ ամէն ինչ ընել օր ըստ օրէ պատուաւոր դարձնելու համար զայն։ Անպատիւ աղջիկ մը, գող մը՝ ընտանեկան զգացում չունի, որովհետեւ իրեն պակասութեամբը կ'անպատուէ ընտանեկան անունը։

Երբ կ'ըսէք, « Կը սիրեմ ընտանիքս », յիշեցէք թէ կը նշանակէ՝ պատրաստ եմ անձս նուիրել ընտանիքին օգնելու եւ անոր պատիւ բերելու համար։



Բնտանիքի մէջ բաղախավարութիւն.

— Վարդուհի՛, չնորհալի եղիր սեղանին վրայ :
— Ի՞նչ հարկ կայ, քանի որ օտարական չկայ :
Մենք մեղի ենք :

— Վարդուհի՛, քաղաքավար եղիր քրոջդ հետ :
— Զարժեր, որովհետեւ քոյրս է :
— Վարդուհի՛, կը սխալիս, լնտանիքի մէջ բաղախավարութիւնը պարտաւորիչ է, ինչպէս ուրիշ ամէն տեղ : Երբ քաղաքավար չես, երբ անշնորհք ձեւեր ունիս՝ կարծես ծնողքիդ կ'ըսես թէ՛ « Զէք արժեր որ ես ջանամ սիրելի և չնորհալի ըլլալ ձեզի համար . քաղաքավարութիւնս եւ հաճոյասիրութիւնս կը պահեմ օտարներուն » :

Այնպէս չէ՛, շատ ամօթ է այսպէս ըսելը : Աւելի ամօթ կ'ըլլայ, երբ մարդ մտածածին պէս գործէ :

Տղա՛ք, երբ ընտանիքի մէջ քաղաքավար չէք, երբ խոփոռ ու տմարդի էք, երբ ձեռքերնիդ աղտոտ, մազերնիդ չսանտրուած սեղան նստիք, երբ անշընորհք կերպով կռուիք ձեր եղրայրներուն հետ, պիտի նմանիք փոքրիկ Վարդուհիին :

Մի՛ մոռնաք որ ամէն տեղ, մանաւանդ լնտանիքի մէջ, նւմարիս բաղախավարութիւնը սրտեն կը բելադրուի :

Փոքրիկ զոհողութիւններ .

Ընտանիքի մէջ ամէն վայրկեան առիթ կը ներկայանայ փոքրիկ զոհողութիւններ ընելու միւսներուն հաճելի ըլլալու համար : Օրինակ, դուք կը փափաքիք աղմկալից խաղեր ընել և ատիկա հիւանդ մը անհանգիստ կ'ընէ . դուք կը փափաքիք դուրս ելլել եւ ձեր մայրը չկրնար ձեզ ընկերանալ . դուք կ'ուզէք կար կարել՝ մինչ ձեր մայրը կը փափաքիք որ առանին գործերով զբաղիք եւ այսպէս ուրիշ բաներ :


Եթէ ձեր այս փոքրիկ զոհողութիւնը ու բախութեամբ յանձն չառնէք, ձեր շուրջը ոչ ոք երջանիկ կ'ընէք: Այն ատեն տմարդի, խօֆոռաղէմ կ'ըլլաք, և թերեւս այդ բաներուն համար ձեզի եղած դիտողութիւններուն անամօթաբար պատասխանէք. ահա՝ այսպէսով անտանելի եւ յուզումնալից օր մը կ'անցընէք ու ձեր սիրտը հանգիստ չվայելեր:

Մի՛ սպասէք որ ձեր հայրը կամ մայրը պահանջէ զոհողութիւն մը ընել ձեր ճաշակին եւ ձեր փափաքին համար, այլ ընդհակառակը, դուք ինքնին այդ փոքրիկ զոհողութիւնը պիտի ընէք: Ուրիշներուն համար ինձզինքը մոռնալը՝ ընտանեկան միութեան բանաձեւն է:

Յարգեցէք ձեր ծնողը.

Օր մը փոքրիկ աղջիկ մը մօրմէն սաստիկ յանդիմանութեան արժանացեր էր. բայց որովհեաեւ անիկա բարի էր եւ սրտին խորէն կը սիրէր իր մայրը, բնաւ չպատասխանեց եւ արժանացած յանդիմանութիւնը լուսութեամբ ընդունեց: Օտարական մը որ հոն ներկայ էր, ուզելով տղին բնաւորութիւնը փարձել, սպասեց որ մինակ մնայ անոր հետ և սկսաւ ամբաստանել մայրը, ըսելով թէ շատ խիստ, անիրաւ եւ չարասիրտ էր: Անմիջապէս փոքրիկ աղջիկը լացը դադրեցուց և ուղղակի իրեն հետ խօսող օտարականին աչքերուն նայելով ըսաւ, « կը սիսալիք, մայրս լաւ գիտէ ինչ որ կ'ընէ. արժանի էի յանդիմանուելու: Զեմ ուզեր որ մօրս համար գետ խօսին իմ առջեւս »:

Ահա օրինակ մը այն յարդանքին, որ պէտք է ունենալ դէպի ի ծնողքը: Անոնց հրամանին վրայ բնաւ մի՛ վիճիք, հնազանդեցէ՛ք անոնց կամքին, և մանա-



ւանդ բնաւ մի՛ ծաղրէք և ոչ ալ ուրիշներուն թոյլ տուէք որ անոնց ընթացքը ձեր առջեւ պախարակն: Եթէ կը սիրէք ձեր ծնողքը, գործը աւելի կը դիւրանայ, որովհետեւ սերն առանց յարգանքի չըլլար:

Ընտանութիւն.

Զեր ծնողները երբեմի եղածներուն նման չեն : Առաջ տղայք եզակի չէին խօսէր հօրերնուն հետ , միշտ շատ խոնարհութեամբ կը խօսէին , անոնց հարցումներուն միայն կը պատասխանէին , բնաւ իրենք հարցում չէին ըներ , ընկերաբար չէին խօսակցեր եւ այն ընտանեկան քաղցր յարաբերութիւնը որ դուք ունիք ձեր ծնողքին հետ , անոնք չունէին :

Սովորութիւնները փոխուած են հիմա : Զեր հայրերը , ձեր մայրերը կ'ուզեն բարեկամ ըլլալ և ատոր համար առաջուան խիստ սովորութիւնները մէկ կողմ կը թողուն :

Պէտք չի անոնց այդ բարութիւնը չարաչար գործածէ , երբ ձեզ հետ փոքրիկ կատակներ կ'ընեն , կը խաղան : Զեր հօր հետ ընկերով պէս մի՛ վարութք և ոչ ալ ձեր մօր հետ դպրոցական ընկերուհին մը պէս : Մի՛ մոռնաք այն յարգանքները , որ կը պարտիք անոնց ամէն օր եւ ամէն տեղ , նոյն խիկ երբ ձեղի հետ կը խաղան : Երբէք մի՛ կարծէք թէ ձեզ ներելի է ըսել անոնց « Հսածդ ճշմարիտ չէ » կամ « Սիրտս կը նեղացնես » կամ « Զիս կը բարկացնես » ինչպէս կ'ըսուի երբեմն ընկերներու մէջ . այս կերպ վարմունքը գէշ դաստիարակութեան արդիւնք է :

Զեր հայրեր , ձեւ մայրեր իրաւունք ունին մինչեւ ձեզի խնարհիլ , բայց դուք իրաւունք չունիք մինչեւ անոնց բարձրանալ եւ համարել թէ հաւասար իւ :

Զեր ծնողքին համար մի՛ կարմրիք .

Հիմակուան ընկերական կազմակերպութիւնը այնպէս եղած է որ , ամէն մարդ կրնայ բարձր դիրքի մը հասնիլ իր աշխատառութեան եւ մտաւոր կարողութեան չնորհիւ : Այսպէս երբեմն կը գտնուին այր մարդիկ , կիներ , որոնք նշանաւոր դիրքեր կը գրաւեն , մինչդեռ իրենց ծնողները մնացած են շատ խոնարհ վեճակի մէջ :

Ի՞նչ պիտի մտածէիք երիտասարդ աղջկան մը կամ կնոջ մը վրայ , զոր պարագաներն այսպիսի դիրքի մը հասուցած ըլլային , երբ անկէ ետքը իր մօրը հետ վարուէր իրեւուստորինի մը հետ , թէ զայն չժանչնալ ձեւացնէր և կամ այլ եւս չընկուներ զայն ամէն մարդու առջեւ : Մարդ միայն զգուանք եւ արհամարհանք պիտի զգաք անոր նկարագրին նկատմամբ :

Ընդհակառակն զգացումներու իրական մեծութիւնը եւ ճշմարիտ ազնուութիւնը յայտնի կ'ըլլայ այն եռախատագիտութեամբ ու յարգանքով , զոր մենք պարտինք անոնց , որոնք իրենց ունեցած կը թութենէն աւելի բարձր կը թութիւն տուեր են մեղի եթէ մենք նշանաւոր եւ ականաւոր մարդիկ կը դառնանք , այս բանը մեծ մտամբ կը պարտինք անոնց՝ մեր վրայ տածած խնամքներուն եւ մեզ համար ըրած ամէն տեսակ զոհողութիւններուն : Եր ծնողքին համար կարմրիլ կը նշանակի ինքինքը արհամարհելի դարձել պատուաւոր անձերու աշխին :

Վասահացէք ձեր մօրը


Նորահաս փոքրիկ աղջիկներ, ձեր մօրը վստահացէք ինչ որ ունիք ձեր մտքին ու ձեր սրտին մէջ։ Ձեր մայրը քնքուշ բարեկամ մը, եւ ամենալաւ խորհրդատուն է։ Յայտնեցէք իրեն ինչ որ կը խորհիք, ինչ որ կը փափաքիք, ինչ որ ձեզ կը վշտացնէ կամ մտատանջութիւն կը պատճառէ։ Անիկա միշտ ձեզի կը հասկնայ, որովհետեւ ինքն ալ ձեզի նման երիտասարդ եղած է։ Ան շատ լաւ կ'զգայ թէ իր աղջիկը իրեն կը նմանի եւ պէտք է անոր համար սէր, գուրգուրանք եւ ներողամտութիւն ունենալ, ինչպէս որ իր ձնողըն ալ այս ամէնն ունեցած են իրեն համար։ Սիրեցէք խօսակցիլ ձեր մօր հնտ, կամ առանին գործերով զբաղած ժամանակ կամ իր հսկողութեան տակ ասեղնագործութիւն ըրած ատեն։

Երբ ո՛ եւ է խնդիր մը ձեզի զբաղեցնէ, երբ նոր խորհուրդ մը ունենաք ձեր մտքին մէջ, չուտով ձեր մօր խորհուրդին դիմեցէք։ Անոր՝ ձեր զբայ ունեցած սէրը միշտ պիտի ներշնչէ իրեն բառ մը, խօսք մը, բացարութիւն մը գտնել, որ ձեզի հաճոյք պատճառէ եւ ձեր սիրտն ու միտքը հանդարտեցնէ։ Մայր եւ բարեկամ, այս երկու բառերը պիտի և միշտ միացնել։



Օգնութիւն

Յուսամ հետեւեալ մանրավէպը գիտէք։ Բայց
թոյլ տուէք անգամ մըն ալ ձեզի յիշեցնել։
Ապերտիտ որդի մը բրտութեամբ կը վարուէր իր
ծերունի, հիւանդոտ և անգործ հօրը հետ, մինչեւ իսկ



միեւնոյն սեղանի զբայ հաց չէր ուտեր հետը։ Փայտէ հասարակ ամանի մը մէջ կերակուր կուտար որ անկիւն մը նստած ուտէ։ Օր մը այս մարդը տեսաւ թէ իր որդին դանակով փայտէ բան մը կը շինէր։ «Ի՞նչ

կը շինես, հարցուց անոր : — Հայրիկ պատասխաննց տղան, պասիս փայտէ ամանին պէս հատ մը կը շինեմ, որ երբ ծերանաս անով կերակուր տամ քեզի :

Պատմութիւնը չյայտներ թէ այս խօսքերը ապաշնորհ տղուն ընթացքը փոխեցի՞ն . բայց կրնանք անկէ խրատ մը առնել :

Ապաշնորհ զաւկին դէմ սաստիկ արհամարհանք կ'զգանք և միեւնոյն ժամանակ մեր խղճին, մեր գորովանքին և սիրոյն ձայնը մեզի կ'ազդարարէ անոր չնմանիլ :

Հաստատ կերպով որոշենք մեր ծնողքին օգնել, եթէ այս կարեւոր է, երբ անոնք ծերանան, նոյն իսկ առանց սպասելու որ մեզմէ օգութիւն խնդրեն : Մեր ծնողին կարօտութեան մէջ օգնելին աւելի բաղր հանոյք չկայ :

Ինչո՞ւ համար Տղաֆ պէտք է հնազանդին իրենց ծնողին

Զեր կեանքին առաջի տարիներուն մէջ, դուք այնափ տկար, այնչափ փափուկ էիք որ միայն անոնց հնազանդելով կրնայիք ձեր գոյութիւնը պահպանել, որովհետեւ ձեր սգիտութիւնը եւ տկարութիւնը անդադար ձեզ պիտի ենթարկեին մեծամեծ վտանգներու . բայց ձեր հիմակուան տարիքին մէջ կ'ուսիք փափաքիլ առանց ուրիշի խորհրդին գործել, և ձեզի դժուար կուզայ հնազանդիլ հակառակ ձեր կամքին . բայց և այնպէս դեռ դուք շատ պէտք ունիք ձեր ծնողքին հնազանդելու, որովհետեւ բնաւ փորձառութիւն չունիք, կեանքի վերաբերեալ բաներու մէջ տգէտ էք,

շատ սխալներ պիտի գործէք եթէ՝ միայն ձեր երեւակայութեան հետեւիք : Բաց աստի, խորհրդէք թէ՝ ընտանիքի մէջ կեանքը ուլույլ անտանելի պիտի դառ-



նայ երկ Տղաֆ միայն իրենց հմահանոյին հետեւին, օրինակի համար մէկն այս բանը ուզած ժամանակ միւսն ուրիշ բան ուզէ . մէկն ուզէ որ այսպէս ընեն, միւսը

փափաքի ուրիշկերպ ընել : Հօր և մօր հեղինակութիւնը՝ այս անկանոնութիւնները արդիլելու համար է : Հնազանդութեան և յարգանքի հեղինակութիւնն է որ ընտանիքը ներդաշնակութեան մէջ կը պահէ : Ընտանիք մը ուր տղաքը հնազանդիլ չգիտեն կատարեալ ընտանիք մը չի :

Յօժարակամ հնազանդութիւն

Զեր ծնողքին պահոնջած հնազանդութիւնը՝ անասնային, յիմար հնազանդութիւնը չէ, որ ծեծուելու վախէն յառաջ կուգայ : Զեր հայրն ու մայրը կը փափաքին որ հնազանդիք չէ թէ վախնալէն, այլ սիրելէն : Եթէ գորովանօք կը մտածէք ձեր ծնողքին վրայ, եթէ չէք ուզեր անոնց նեղութիւն պատճառել, պէտք է անմիջապէս և կատարեալ կերպով գործադրէք ինչ որ պահանջեն : Պիտի չըսէք « Այո՛, անմիջապէս » առանց տեղերնէղ շարժելու : Հնազանդելէ առաջ շատ տեսակ բացատրութիւններ պիտի չպահանջէք : Խորամանկութիւններ ու այլ և այլ դարձուածներ պիտի չփնտռէք անոնց հրամանը մասսամբ միայն կատարելու համար : Դժգոհ կերպարանքով պիտի չհնազանդիք : Հնդհակառակը, շատ բախտաւոր պիտի սեպէք ձեզի եթէ կարենաք որքան կարելիէ շուտ և ուրախութեամբ կատարել բոլոր այն բաները զոր կը պահանջեն ձեզմէ :

Եթէ հնազանդութիւնը ձեր սրտէն կը բղխի, պիտի հնազանդիք ձեր ծնողներուն նոյն իսկ այն ժամանակ երբ անոնք չեն տեսներ, մինչեւ իսկ երբ այլ ևս աշխարհիս մէջ չեն, որովհետեւ սրտելնուդ մէջ պիտի պահէք անոնց խօսերուն եւ խրամներուն քաղցր յիշատակը :

Առամինութիւնը բարձր է հնազանդութենէ



Երբեմն կը պատահի, թէև շատ քիչ անգամ, այնպիսի ծնողներ, որոնց խիլճը մաքուր չէ և իրենց

զաւակներուն խղճի դէմ բաներ կը պատռէիրեն . օ-րինակի համար՝ գողնալ կամ ստել :

Նոյն իսկ գորովով սիրուած հօր մը , մօր մը հնա-զանդելու համար պէտք չէ գէշ գործ մը ընել . բայց քաղաքավարութեամբ , քաղցրութեամբ եւ հաս-տատամութեամբ պէտք է բացատրել թէ ինչո՞ւ չեն հնազանդիր : Որովհետեւ կայ բան մը որ ամէնէն բարձր է . նոյն իսկ մեր ծնողքին համար ունեցած գո-րովէն և որդիական հնազանդութեան պարտականու-թենէն , այն է՝ ուրիշներուն չարիք չհասցնել . ուրիշ-ներուն ստացուածքին ձեռք չզարնել , մեր ամէն գործերուն մէջ պատռւաւոր ըլլալու մեծ պարտաւո-րութիւնը :

Բարեբաղդաբար . բացառութիւն են այն պարա-գաներն ուր տղաք կրնան չհնազանդիլ . Յանախ կը տեսնուին ծնողներ , որոնք թեւ իրենց համար շատ խղճամիտ չեն , բայց կը փափաքին որ իրենց զաւակ-ներն արդար ու բարի ըլլան :

Երախտագիտութիւնը սրի յիշատակարանն է

Դեռափթիթ . աղջի՛կ , յիշէ այն երկար տքնու-թիւնները զոր մայրդ կրեր է օրօրանիդ քով և այն բոլոր խնամքները , զոր քեզի շռայլեր է , երբ գուն բոլորովին փոքր էիր և տկար , այն աշխատանքը զոր կը կրէր անդադար քեզի ո' եւ է նեղութենէ ա-զատելու համար :

Ցիշէ՛ նաև թէ հայրդ քեզի համար կ'աշխատի , կը ծերանայ , քեզ կրթելու , սնուցանելու և հագուեցնելու նեղութենէն ու յոդնութենէն :

Քանի յիշես այս բոլորը , սրտիդ մէջ պիտի զգաս որդիական սիրոյ ջերմ եւ կենդանի զգացում մը , որ է երախտագիտութիւնը :

Պիտի փափաքիս մօրդ հատուցանել վայելած բո-լոր բարիքներդ , պիտի փափաքիս աշխատելու կարող ըլլալ որպէս զի ծնողքդ հանգստանան , երբ հարկը պահանջէ . դարձեալ երախտագիտութիւնն է , որ քեզի կը ներշնչէ այս ազնիւ խորհուրդները . Գիտե՞ս , ինչ է երախտագիտութիւնը : Երախտագիտութիւնը սրտի յիշատակարանն է :

Ի՞նչ կ'ըսէ ապերախտ տղայ մը



Ես գիտեմ թէ ապերախտ տղայ մը ի՞նչ կը մտա-ձէ : Ինքնիրեն կ'ըսէ . « Ես չխնդրեցի աշխարհ գալ :

Եթէ զիս աշխարհ բերին ծնողքս, պէտք է զիս մեծ-
ցընեն, պէտք եղածը տան: Օրէնքը զիրենք կ'ստիպէ »:
Այս լեզուն արհամարելի է:

Տղաք, եթէ ձեր ծնողները միայն դէպի ձեզ ու-
նեցած պարտականութիւններնին կատարէին, որչա՞փ
դժբաղդ պիտի ըլլայիք, որովհետեւ բաւական պիտի
ըլլար ձեզի հազիւ հագուեցնել, տանը մէկ անկինը
բնակեցնել և կտոր մը հաց տալ: Փոխանակ այսպէս
ընելու, ձեզի կը խնամեն և իրենց պարտականութիւն-
ներէն հազար անգամ աւելին կ'ընեն: Շատ անգամ,
ձեզի համար կը զրկուին իրենց հաճոյքներէն, բոլո-
րովին ձեզ կը նուիրուին ու իրենց բոլոր կարողու-
թիւնը ձեզի կուտան:

Ապերախտութիւնն այնպիսի պակասութիւն մըն է
որ կը հեռացնէ այն բոլոր անձերը, որոնք կրնային
բարեկամ ըլլալու վրայ խորհիւ Ապերախտը կ'արհա-
մարհեն, անկէ կը փախչին, որովհետեւ եթէ խստա-
սիրտ են հանդէպ իրենց ծնողքին, որ զիրենք այնչափ
սիրեցին, ի՞նչ պիտի ըլլան ուրիշ անձերու համար,
որոնց պիտի մօտենան:

Որդիական ու եղբայրական անձնութրութիւն

Վերջեւս Գաղղիոյ Ակադէմիայի ժողովն Առաքի-
նութեան մրցանակը տուաւ տարիքոտ օրիորդի մը,
որ տասը տարեկան հասակէն սկսեալ կ'աշխատէր իր
ծնողքին և իրմէ փոքր եղբայրներուն և քոյրերուն
համար:

Ամբողջ իր երիտասարդութիւնը անցուցած էր
հիւանդ ու տկար ծնողքը խնամելով եւ իրմէ փոքր

քոյրերն ու եղբայրներուն հոգը տանելով, որոնք տա-
կաւին չէին կրնար աշխատիլ իրենց ապրուստը ճա-
րելու համար: Առաջարկուած ամուսնութիւնները մեր-
ժած էր ըսելով թէ չկրնար երեսի վրայ թողուլ
անոնք որոնք իրեն խնամքին կը կարօտէին: Եւ կըր-
ցած էր իր ծերունի ծնողքին աշքերը գոցել՝ որոնք
երջանիկ ըրած էր, եղբայրներն ու քոյրերը ամուսնա-
ցուցած էր և ինք ծերացած՝ առանց բնաւ ինքինքին
վրայ խորհելու: Իր երջանկութիւնը կը կայանար ու-
րիները երջանիկ ընելուն մէջ:

Զեզմէ չպահանջուիր այս պառաւ օրիորդին պէս հե-
րոս ըլլալ եւ ոչ ալ առաւօտէ մինչեւ իրիկուն ձեր ըն-
տանիքին նուիրուիր: Բայց ձեզի կ'ըսուի որ հիմակուլնէ
որդիական ու ընտանեկան անձնութրութիւնը սովոր-
ութիւն ընէք: Երբեմն գուք ձեզի հակառակեցէք՝
ձեր մօրը, քըողը եւ եղբօրը հաճոյք պատճառելու
համար: Սորվեցէք ո՛ եւ է բանէ մը զրկուիլ անոնց
հաճելի ըլլալու համար, Պիտի տեսնէք որ ձերին ու-
րախութիւնն ու խղճի վկայութիւնը՝ ձեր անձնութրու-
թիւնը պիտի վարձատեն:

Բարի եւ չար օրինակ

Զեր ամենակարեւոր պարտականութիւններէն մէկն
է ձեր ընտանիքին մէջ լաւ օրինակ տալը, ճիշդ այն
պատճառաւ որ գուք եղբայր և քոյր էք և միեւնոյն
ընտանիքէն ըլլալով իրարու վրայ աւելի ազդեցու-
թիւն ունիք և ձեզմէ իրաքանչիւրը տրամադիր է
նմանիլ տեսածին ու լսածին:

Եթէ ձեզմէ մէկը առաջարկէ այնպիսի բան մը
ընել զոր ձեր խիզճը մերժէ՝ մի՛ ընէք: Ընդդիմացէք

գէշ խորհուրդի մը, բարի օրինակ տուէք այնպիսին՝ որ հակամէտ է մոլորելու։ Միշտ քաղցրաբարոյ, քաղցրավար ըլլալով, բոլոր պարտականութիւննիդ ճշդապահութեամբ կատարելով, ուրիշներն ալ ստիպած կ'ըլլաք ձեզի նմանիլ։

Դէշ օրինակը փոխանցիկ հիւանդութեան պէս է. անոր մօտեցողները կը վարակուին մէկը միւսին ետեւէն։ Այսպէս մարդիկ չար եւ մոլի կ'ըլլան՝ միշտ իրենց առջեւ անոնց օրինակը տեսնելով, նրբէ զի օրինակ չտանի։

Դադտնապահ եղէ

Երբեմն ձեր հայրն ու մայրը ձեր ներկայութեան ընտանեկան, շահու կամ սրտի վերաբերեալ գործերու վրայ կը խօսակցին։ Ուրիշ անգամ կը յանդիմանեն ձեր եղբայրը կամ քոյրը։ Երբեմն ալ քիչ թէ շատ տաք խօսակցութիւն մը կ'ունենան օտարականի կամ ազգականի մը հետ եւ կրնայ վիճաբանութիւն մը յառաջ գալ։ Եւ կամ ձեր ճանչցած մարդոցմէ մէկուն կամ միւսին վրայ խորհրդածութիւն մը կ'ընեն։ Երբէք մի՛ երթաք պատմէք ինչ որ լսեցիք կամ տեսաք ձեր տանը մէջ։

Պատիկ եւ դեռատի աղջիկները կը յանդիմանուին անդադտնապահ և շատախօս ըլլալնուն համար կրնանք մեր մէջ խոստովանիլ թէ մասամբ ճշմարիտ է ասիկա։ Պէտք է զգուշանալ այս գէշ պակասութիւնը ունենալին։ Շատ ընտանիքներու մէջ դժբաղդութիւններ հասած են տղոց անդադտնապահութենէն և շատախօսութենէն։ Տղայք պէտք է հեռանան, երբ կը հաս-

կընան որ հայրն ու մայրը կարեւոր բանի մը վրայ կը խօսին։ իսկ եթէ անոնց քով կը մնան, պէտք է իւմացածնին իրենց պահեն։ Դեռամբ աղջիկ մը ու մաղսնիք մը պահել չգիտէ լուրջ կին մը պիտի չկրնայ դառնալ բնալ։

Ընտանիքին ծառաները

Ձեր ընտանիքին ծառաները իրրեւ բարեկամնկատեցէք։ Անոնք ընդոծին կը կոչուին, այսինքն տանը և ընտանիքին կապուած։ Շատ անգամ տղոց քով և մօր տեղ կը բռնեն։ ուրեմն անոնք վստահութիւն շահած են և եթէ անարժան ըլլային՝ ծնողնիդ ձեր քովը չէին պահեր զանոնք։

Հետեւաբար անոնց հետ քաղցրաբարոյ և քաղցրավար եղէք։ Անոնց մի՛ հրամայէք այս կամ այն քննել, հապա չնորդալի կերպով խնդրեցէք, միշտ աւելցնելով « Խնդրեմ » , մի՛ մոռնաք չնորդակալ ըլլաւ ամէն անգամ որ պէտք է։ Մի՛ ծաղրէք զանոնք, անոնց գլուխին խաղեր մի՛ խաղաք։

Փոքրիկ, դեռատի աղջիկ մը շատ լաւ կրնայ տան հին սպասուհին յարգել, առանց անոր հետ մասնաւոր բարեկամութիւն մը հաստատելու։ Պէտք չէ որ իրեն բարեկամ կամ ընկեր ընէ զայն։ Բարեկամի ու մենիմի դերը միայն մօրը կը պատկանի։

Ընտանիքի մէջ վէն մի՛ յարուցանելք

Զգուշացէք ընտանիքի մէջ վէճ յարուցանելէ, ազգականիքն կամ որ և իցէ մէթէ ձեր քրոջը, ազգականին կամ որ և իցէ մէ-

կուն հետ համակարծիք չէք, մի՛ բարկանաք, մի՛ ա-
ղաղակէք, մի՛ հայհոյէք։ Ասիկա բոլորովին անօ-
գուտ է, նախ որ բարկանալով չէք կրնար մէկը
համոզել, երկրորդ՝ թերեւս դուք կը սխալիք։ վեր-
ջապէս՝ վիճարանելով կը տկարացնէք ձեր բարեկա-
մութիւնը։

Աւելի լաւ է հաճութեամբ տեղի առաջ առ հա-



մար պէտք չէ ծաղրական կերպարանքով մը ժպտիլ,
իրրեւ թէ գթալով է որ չէք ուզեր վիճարանիլ։
Այս կերպով լոռութիւն պահելն ամօթ է։ Պէտք է
ըսել. « Զեմ ուզեր վիճիլ երկար ժամանակ, որով-
խօսակցութիւնը ուրիշ բանի վրայ խօսինք »։ Շատ

անզամ հաւտուրեան փոքրիկ միջոցներով է որ բնտանիքին
մէջ խաղաղութիւն եւ համերաշխուրիւն կը պահուի։

Լաւ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ Մը

Զեր մայրը ձեզի բարկացաւ, դուք պահ մը կը
խորհիք հեռանալ անկէ և տրտնջալ. ընդհակառակը
վաղեցէք դէպի ան, անոր գիրկը ինկէք. խընդ-
րեցէք որ ձեզի ներէ Պիտի տեսնէք թէ որչա՛փ
հանգիստ սիրտ պիտի ունենաք։

Դուք վիճած էք ձեր քրոջը հետ, ատոր համար
քէն մի՛ պահէք և իրիկունն առանց հաշտուելու մի՛
քնանաք. քնքուշութեամբ և սիրով համբուրեցէք զի-
րենք. Զեր հասակն աղջիկ մը կը ճանչնամ, մտացի
ու խոհուն, որ երբէք չէր գժկամակեր, երբ կը տես-
նէր որ իրեն քոյրը ո և է պատճառով հետը կը կըռ-
ոի, ըսել անոր. « Ո՛ն, Զապէլ համբուրենք զիրար,
մոռնանք ասիկա. կը կարծես թէ այս փոքրիկ բանին
համար մենք իրարու հետ այլ եւս պիտի չխօսի՞նք
մինչեւ մեր կեանքին վերջը։ Ո՛չ, այնպէս չէ՞ ու-
րեմն անմիջապէս հաշտուինք. որչափ շուտ ըլլայ՝
այնչափ աղէկ է »։ Եւ կը համբուրէր իր քոյրն, որ
չուտով զինաթափ կ'ըլլար։ Երկուքն ալ կը խնդային
և ամէն բան կը լմնար։ — Ինչու համար հաւտու-
րեան մէջ անոնց չնմանիք երբ շատ անզամ նմաներ եկ
անոնց փոքրիկ վեներուն մէջ։

ԳԷ ՊՊԱՋՈՒՄԸ

Երբ հայրդ կամ մայրդ քեզի կը համբուրեն, բնաւ
մի խորհիր թէ արդեօք քեզի աւելի՞ կը սիրեն ու կը

գգուեն քան թէ եղբայրներէդ մէկը : Բաւականացիր զանոնք սիրելու և անոնցմէ սիրուելու ուրախութեամբ :

Եթէ նախանձոտ ես, կը նշանակէ թէ տակաւին քու սիրոդ կազմակերպուած չէ և գու տակաւին չգիտես թէ ի՞նչ է արդարութիւնը : Ծնողները կը բնան տարբեր կերպով վարուի իրենց զաւակներուն հետ առանց մէկը միւսէն նախամեծար համարելու . տղոց տարբեր բնաւորութիւնը զիրենք կ'ստիպէ ոմանց հետ քաղցրութեամբ վարուիլ, ոմանց հետ խստութեամբ :

Կ'ուղէ՞ս այն գէշ զգացումին փորձը երրէք չունենալ, սիրէ ծնողքդ, անոնց հետ այնպէս վարուէ որ քեզի մեղադրելու բան մը չսւնենան և ամէն բանէ առաջ քու խղճիդ վկայութիւնը փնտոէ : Դու ինզի հաւը եղիր, ամէնուն հետ հաւը կ'ըլլաս :

Ծնողներէն հեռու եղած ժամանակ

Արդեօք ծնողնիդ ձեզմէ հեռու եղած ըլլալնուն համար ձեզի աւելի քի՞չ կը սիրեն կամ կը մոռնան : Անշուշտ ոչ, այնպէս չէ՞ : Կամ անոնցմէ հեռի ըլլալով քի՞չ կը խորհիք իրենց վրայ և ձեր սէրը կը քիչնա՞յ . ո՞հ, ոչ, տղաքս :

Հեռուէն ձեր սիրոյն վկայութիւնը տուէք : Գրեցէք անոնց կանոնաւոր կերպով և երկարօրէն պատմեցէք անոնց ինչ որ ձեզ կը շահագրգոէ, ինչ որ կը պատահի ձեզի լաւ թէ գէշ : Վստահ եղէք որ ձեր նախակներուն անհամբերութեամբ կ'սպասեն և թէ

ձեր խօսքերն անոնց սիրտին մէջ արձագանք պիտի գտնեն :

Աւա՞զ, երբ աւելի մեծնաք, թերեւս ստիպուիք զանոնք թողելու : Այն ատեն արտասուալի աչքերով պիտի յիշեք այն գեղեցիկ օրերն որ անոնց քով անցուցած էք : Դուք պիտի տեսնէք անոնց ծերանալը այն տան մէջ որ երբեմն լի էր տղայոց ուրախութեամբ և ծիծաղներով : Եթի հեռով էլ ձեր ծնողին, յիւեցէք որ ձեր նամակներն միայն կրեան անոնց ուրախութիւն պատճառել, ուստի գրեցէք :

Ընտանիքին մեծարանիք


« Որդիական մեծարանք » խօսքը որ երբեմն կը գործածեն, կըն երկայացնէ այն բոլոր զգացումներուն ամրողութիւնը զոր կ'ունենանք մեր հօր, մեր մօր և այն ամէնուն համար որ անոնց կապուած են :

Որդիական մեծարանք պէտք է ունենալ . պէտք է ընտանիքն յարգել : Գիտէ՞ք ինչպէս : Զեր եղբայրներուն և քոյրերուն կատարեալ միացած մնալով և անոնց հետ յաճախ ձեր մանկութեան օրերուն յիշատակին վրայ խօսելով :

Ընտանեկան մեծարանք ու յարգանք ի գործ դըրած կ'ըլլաք սիրելով ձեր հայրենի տունը . այն վայրն ուր ծնած էք, ուր մեծցած էք, ուր ամէն բան ձեզի կը յիշեցնեն ձեր հայրը, մայրը, ձեր եղբայրներն ու քոյրերը, փափաքելով այն սիրելի տունը պահել և կարելի եղածին չափ յաճախ հոն վերադառնալ : Դարձեալ ընտանեկան մեծարանք կիրակած կ'ըլլաք ընտանիքի մէջ ինամքով պահելով այն առարկաներն

որ ձեզի հասած են ձեր նախահայրերէն, այսիքն ձեր մամերէն, պապերէն։ Կը տեսնէք, այս բոլորը խորապէս կը յուզեն ձեր սիրողը և ձեր ընտանեկան սիրոյ կապը կը հաստատեն, դուք, տղաք՝ որ ապագան էք, ձեզի կը միացնեն ձեր սիրելի ծնողքն՝ որ ներկան են և ձեր մեռած նախնիքն՝ որ անցեալն են։

Այսպէս ընտանիքը կը շարունակուի մեծ շղթայի մը պէս, որուն իւրաքանչիւր օղակը հաստատուն կերպով միացած է իրացու՝ գորովանենով, յարգանենով, յիշատակով։



Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Ի՞նչ է դպրոցը

Դպրոցն, ուր կը յաճախէք, միայն բան սորվելու աել մը չէ։ այս ալ մեծ ընտանիքի մը պէս է, ուր պէտք է ամէնքդ իրար իրեւ քոյր նկատէք։

Եթէ դպրոցը ձեզի ճանձրալի թուի, եւ եթէ աըհաճութեամբ յաճախէք, կը նշանակէ թէ չէք ըմբռներ հոն ձեզի սորվեցուցած բաներուն օդտակարութիւնը, եւ պէտք եղածին պէս ալ զիրար չէք սիրեր։

Դեռատի՛ աղջիկներ, ձեր ապագան ձեզմէ կախում ունի։ Դպրոցի մէջ ձեր ստացած դաստիարակութիւնը անշուշտ ձեզի աշխատութենէ չազատեր, բայց աւելի հաճելի կ'ընէ եւ աւելի դիւրին կը դարձնէ ձեր աշխատութիւնը։ Ձեր միտքը կը բանայ, լաւ գրքեր

կարդալու ձաշակ կուտայ : Միթէ այս բոլորը ոչի՞նչ
բան է : Դպրոցը ձեզի կը սորվեցնէ նաեւ թէ ի՞նչ
պարտականութիւն ունիք մէկդ միւսիդ հանդէպ .
վերջապէս դպրոցը կեանքի նախափորձ վարժութիւնն է :

Պէտք է անընդհատ յաճախել դպրոց

Վարդուհին շաբաթը գոնէ անգամ մը բացակայ
կ'ըլլայ դպրոցէն : Անցեալ օր վարժուհին կը յանդի-
մանէր վարդուհին ատոր համար եւ անիկա կը պա-
տասխանէր . «ի՞նչ նշանակութիւն ունի օր մը աւելի
կամ պակաս . միշտ բաւական բան պիտի սորվիմ ,
վերջը աշխատելու պէտք պիտի չունենամ » :

Ահա շատ յիմար եւ անխոհեմ խօսք մը : Վարդու-
հի չկրնար երեւակայել ինչ որ ապագան վերապա-
հած է իրեն համար : Զգիտեր թէ ունեցած քիչ մը
ստակը կրնայ գործերու մէջ կրոսովիլ եւ ինք կրնայ
ստիպուիլ աշխատիլ ապրելու համար : Այն ատեն շատ
պիտի ցափ կորուսած ժամանակին վլայ , որովհետեւ
իր յարատեւ աշխատող ընկերներուն չափ ուսեալ պի-
տի չըլլայ , որոնք ստացած գիտութիւնովին պաշ-
տօններ պիտի վարեն : Ասկէ զատ , երբ մեծնայ Վար-
դուհի եւ պէտք չունենայ իսկ կիրարկել իր գիտ-
ցածը , կը կարծէք թէ մեծ անպատեհութիւն մը չէ
ըրածը՝ կանոնաւոր կերպով ներկայ չինելով դասե-
րուն : Այնչափ կարեւոր դասերը այլ եւս պիտի չլսէ
եւ իրեն համար պիտի չկրկնեն եւ քերեւս ամբողջ
կեանքին մէջ զգինայ այն լաւ ու օգտակար բաները ,
զոր իր բացակայութեանը աւանդած է վարժուհին :

Առաջուան եւ հիմակուան դպրոցները

Եթէ կ'ուղէք գիտութեան արժէքը գիտնալ եւ
անոր կարեւորութիւնը ըմբռնել , խորհուրդ հարցու-
ցէք այն մարդոց , որ բան մը սորուած չեն կամ շատ
քիչ բան գիտեն : Ամէնքը ձեզ պիտի ըսեն թէ «Դուք
շատ երջանիք էք , գեռատի աղջիկներ , որ այսչափ
դիւրութեամբ բան կը սորվիք » :

Առաջ ուսումը ձրի չէր , եւ աղքատները բան մը
չգիտէին :

Այն ատեն դպրոցները սակաւաթիւ էին , աղքատ
տղաքներ նեղութիւններ պէտք էին կրել հոն մտնելու
համար . միայն ճմեռը կ'աշխատէին ուսման , որովհե-
տեւ գարնան երկրագործութեամբ կը պարապէին :

Առաջ դասարանները փոքր , անյարմար , մութ եւ
տիուր էին մինչ հիմայ խոչըր , լուսաւոր եւ զարդա-
րուն են : Վերջը շատ օգտակար բաներ պիտի սով-
որիք , նամակ գրելու համար այլ եւս պիտի չստիպուիք
ատոր անոր դիմել եւ ոչ ալ կարեւոր թուղթ մը կար-
դալու համար : Ահա , որչափ երջանիկ էք դուք :
Օր մը , ժամ մը , վայրիկեան մը մի խնայէք այն ժա-
մանակէն , որ ձեզի տրուած է ձեր միտքն համելի
կերպով մշակելու համար : Աշխատութեան մէջ յա-
րաւել եղէ՛ , վերջը պտուղը պիտի բաղէ :

Դպրոցէն փախչողները

Ընդհանրապէս մանչերն են որ կը սիրեն դպրո-
ցէն փախչիլ , այսինքն նախամեծար կը սեպեն աս-
դին անդին չըլագայիլ քան թէ դպրոց երթալ : Բայց
երեմն աղջիկներն ալ այս յիմարութիւնը կ'ընեն :

Ասիկայ թէ՛ պակասութիւն է եւ թէ՛ անպիտառ նութիւն։ Պակասութիւն է, որովհետեւ անհնազանդութիւն է՝ անպիտառ նութիւն է՝ որովհետեւ մարդինք իր գէմ անիրաւութիւն կ'ընէ իր ժամանակը կորանցնելով եւ վարժուհին դասերուն ներկայ չգըտնուելով։

Ասիէ զատ, դպրոցէն փախչելով կ'ստիպուին ստել, որովհետեւ պէտք կ'ըլլայ վարժուհին բացատրութիւն տալ թէ ինչո՞ւ համար չեն եկած, եւ յետոյ պիտի տաեն ծնողքին առջեւ, որպէս զի անոնք չդիտնան թէ դպրոց չեն գացեր, եւ անհնազանդութենէ անհնազանդութիւն, ստախօսութենէ ստախօսութիւն, վերջապէս ծուլութեան եւ կեղծաւորութեան կը վարժեցնեն ինքոյնքնին։

Յիշեցէ՛ որ ժամանակը քանկազին է. անհնազանդութիւնը՝ պակասութիւն եւ սուտն՝ արհամարհելի է։

Ճշդապահութիւն

Նապաստակն ու կրիան գրաւ կը դնէին թէ ո՞րն առաջ պիտի հասնի որոշեալ նպատակէտի մը կ'երեւէր թէ նապատակն իր յաջողութեան վրայ վստահ էր քանի որ շատ արագ կը վազէր, մինչ կրիան շատ ծանր կը քալէր. բայց նապատակն իր արագընթացութեան վրայ վստահելով սկսաւ կէս ճամբռոն վրայ զբօնուել և կրիան առաջինը հասաւ նպատակակէտին։

Այսպէս, շատ անգամ դպրոցականներ կան, որ « ժամանակ ունիմ, կ'ըսեն, որոշեալ ժամին դպրոց հասնելու, կամ այս պարտականութիւնը կատարելու, կամ այս դասը սորվելու », կ'զբունուն, ժամանակը

կ'անցնի (որովհետեւ ժամանակը շատ արագ կ'անցնի երբ խաղալով անցնեն), վերջապէս դպրոց կ'երթան կամ կ'սկսին դասերը սորվիլ : Բայց ուշ է՝ դասարան մտնելու քանի մը վայրկեան կայ . ժամանակին չեն հասնիր և կամ հազիւ հազ կը հասնին եւ մտքերն այնպէս կը շփոթի որ ինչ ընկելիքնին չեն գիտնար :

Ճշդապահութիւնը սովորութիւն ըրէք, որոշեալ ժամանակին եկէք և աշխատութիւնը պէտք եղած ժամանակը ըրէք : Բայց վերջի վայրկենին մի՛ սպասէ որոշելու համար :

Հեղաբարոյ ըլլալ

Հեղաբարոյ ըլլալ կը նշանակէ քաղցրաբարոյ եւ հնազանդ ըլլալ :

Դեռասի աղջիկներ կան, որ հրաման մը շատ անդամներ կրկնել տալէ ետք կը հնազանդին . անոնք հեղաբարոյ չեն : Ոմանք ալ կը հնազանդին տրանջալով . ասոնք ալ հեղաբարոյ չեն : կան որ հնազանդած ժամանակ խոժոռագէմ, անհամրեր կամ բարկացած կերպարանք ունին . ասոնք ալ հլու և քաղցրաբարոյ չեն :

Հլու ըլլալ, կը նշանակէ դիւրաւ առաջնորդուիլ այն անձէն որ թէ՛ տարիքով և թէ՛ դիրքով հեղինակութիւն ունի ձեր վրայ նատ բնական է անոր հընապանդիլ . ի՞նչ գիտենք փոքր եղած ժամանակնիս : Մեր ճշմարիտ շահը կը ճանչե՞նք արդեօք : Բաւական մտածեցի՞նք, բաւական փորձաւութիւն ունի՞նք մեզի յարմար եղածը անյարմարէն որոշելու համար : Անշուշտ ոչ, ահա ասոր համար պէտք է հեղա-

բարոյ ըլլանք, որպէսզի բնաւ յիմարութիւն մը չդորձենք: Տղայ մը հեղարարոյ ըլլալով կրնայ վստահ ըլլալ թէ պիտի ազնուանայ:

Լոռութիւն պահել

Պղտիկ աղջիկ, քեզի գժուար կուգայ լուռ մնալ: Դուն կը կարծես թէ շատ հաճելի բան է մտքէդ ան-



ցած ամէն բան դրացիներուդ պատմելը: Բայց դիտիր որ լաւ բան մը պիտի չկրնաս ընել, եթէ լոել

չգիտես: Պիտի նմանիս այն անտանելի ջութակներուն, որ իրենց շաղփաղփովը իրենց մօտեցողին գըլումաք կը տանին:

Դասարանին մէջ ի՞նչպէս կրնաս բան մը սորվիլ եթէ բոլոր ժամանակը կը խօսիս: Վարժուհին բացատրութիւններէն ի՞նչ պիտի հասկնաս, որ հազիւ կը լսես կամ բնաւ: Երբ քեզ հարցնեն, ի՞նչ պիտի պատասխանես: Երբ հարի ըլլայ պարտականութիւն կատարել, ի՞նչ պիտի գրես տետրակիդ վրայ. նա մանաւանդ երբ քու դպրոցական տարիներու լրանան, ի՞նչ սորված պիտի ըլլաս քու ներկայութեանդ աւանդուած ու կրկնուած դասերէն. ոչինչ կամ գրեթէ ոշինչ:

Շատախօսութիւնը զրօսանքներու մէջ ամենէն անօգուտն է, մարդ թէ՝ իր ժամանակը կը կորսնցնէ և թէ ուրիշներունը կորսնցնել կուտայ: Խօսելու մարմաջէն շատ անգամ յիմար բաներ կ'ըսենք:

Յարգանք դէպի վարժուհին

Փոքրիկ աղջիկ մը մօրը կը պատմէր իր ըրած կատակները վարժուհին հետ, որ շատ գեռատի օրիորդ մըն էր: — Բայց, ըստ մայրը, ինձի կը թուի, աղջիկս, թէ դու գրեթէ վարժուհիդ չես յարգեր: — Ի՞նչու պիտի յարգեմ, պատասխանեց աղջիկը քանի որ ճերմակ չեն անոր մազերը:

Շատ աշակերտուհիներ այս աղջկան պէս կը խորհին: Կը կարծեն թէ ծերութիւնը միայն արժանի է յարգանքի: Մինչդեռ ծերութեան մէջ չկայանալ յարգանքը: Զեր վարժուհին ինչ տարիք ալ ունենայ, յարգանքով վարուեցէք անոր հետ, ճեղի ներելի չէ

ո՞չ մի կատակ . ո՞չ մէկ անտեղի ընտանութիւն անոր նկատմամբ : Խորհեցէք , թէ անիկայ յարգելով՝ կը յարգէք իր պաշտօնը , իր գիտութիւնը , մանաւանդ իր անձնութիւնները դէպի ձեզ : Այս բոլոր լաւ յատկութիւնները զինք յարգելի կ'ընեն , ուստի պէտք է որտանց յարգէք զայն :

Ձեր վարժուհին ձեզի համար նոյնն է ինչ որ է ձեր մայրը կամ մեծ բոյը :

Ի՞նչ ըսել է անպատկառ ըլլալ

Իր վարժուհին դէմ անպատկառ ըլլալը՝ անոր հետ ընկերոջ մը պէս ընտանութեամբ խօսիլն է . անոր հետ այնպիսի կատակներ ընելն է՝ զոր դպրոցական-ները «Սալ» կ'անուանեն . անոր փոքրիկ պակասութիւն-ներուն վրայ խնդալ , եթէ ունի , և այդպէսով զին-քը նեղացնել . անոր անմիջապէս չհնազանդիլ եւ մերթ այնպէս ձեւացնել . թէ զինքը ոչ տեսած , ոչ իրեն ըսած եւ ոչ ալ նկատած էք :

Անպատկառ ըլլալ դարձեալ կը նշանակէ թերա-նալ անոր նկատմամբ քաղաքավարութեան մէջ . ա-նոր առջեւէն անցնիլ առանց ներողութիւն խնդրե-լու . սանդուխէ մը կամ դռնէ մը անկէ առաջ անցնիլ :

Անպատկառ ըլլալ դարձեալ կը նշանակէ անոր պատասխան տալ անաօթաբար . անհամբեր կերպա-րանքով ուսերը վեր բարձրացնել եւ կամ ուշադրու-թիւն չդարցնել անոր ըսածներուն :

Խորհեցէք պպտիկ աղջիկներ , թէ այս մասին ինք-զինքնիդ յանդիմանելու բան մը չունի՞ք , ձեր խիդ-ը ձեզի չըսե՞ր թէ շատ անգամներ թերացած էք



յարգանքէ այն անձին նկատմամբ , որուն կեանքը կ'անցնի ձեզի օգտակար ըլլալով , ձեզի բան սորվեցնե-լով , ձեզի սիրելով :

Ե՞րբ աւակերտը կը սիրէ իր վարժուհին

Սոկրատ յոյն փիլիսոփան աշակերտ մը ունէր, որ յարատելութեամբ կը հետեւէր իր բոլոր հրահանգներուն. բայց եւ ոչ մէկ յառաջդիմութիւն կ'ընէր: Այս երիտասարդին հայրն եկած էր փիլիսոփայէն տեղեկութիւն առնելու իր որդույն վրայ. «Տա՛ր զաւակդ, ըստ Սոկրատ, երբէք բան մը պիտի չկընամ սորվեցնել իրեն որովհետեւ զիս չսիրեր»:

Ասիկայ շատ ճշմարիս է: Դպրոցին մէջ յառաջդիմելու և հոն երջանիկ ըլլալու առաջին պայմանն է ուսուցիչը սիրել: Եթէ չէք սիրեր ձեր վարժուհին բնաւ մի յուսաք թէ պիտի յաջողիք:

Կ'ըսէք թէ միշտ դիւրին չէ սիրելը. կը սխալիք: Խորհեցէք թէ ի'նչ կը պարտիք անոր, խորհեցէք իր սորվեցուցածներուն կարեւորութեանը վրայ, տեսէք իր կրած նեղութիւնը ձեզ ուսուցանելու համար, դիւցէք ձեզ հետ ունեցած համբերութիւնը, և այն ատեն պիտի սիրէք զայն, որովհետեւ պիտի զգաք թէ արժանի է սիրուելու: Եթէ կը սիրէք ձեր վարժուհին, պիտի փափաքիք անոր համելի ըլլալ ձեր աշխատասիրութեամբ: Չեր վարժուհին սերը պիտի օգնէ ձեր պարտականութիւնը կատարելուն:

Երախտագիտութիւն՝ ուսուցիչներու հանդէպ

Կը պատմուի թէ Տրուօ զօրապեաը, որ իր գիւղէն մեկնած էր իրեւ պարզ զինոր, հոն վերապարձած ժամանակ միայն մէկ փափաք մը ունէր, այն էր գտնել իր նախկին ուսուցիչը և որտին վրայ սեղմել:

Եւ ստուգիւ գտաւ զայն. և չճանչցողներուն ներկայացուց ըսելով: «Ահա այն մարդը որուն կը պարտիմ ինչ որ եմ: »

Տակաւին չէք կրնար գնահատել այն մեծ ծառայութիւն որ ձեզի կ'ընեն ձեր ուսուցիչները ձեզի բան սորվեցնելով: Թերեւս վերջը գուք ալ հասկնաք թէ անոնց իննամքին և հոգատարութեան կը պարտիք ինչ որ էք: Ամէն պարագայի մէջ, գիտութեան առաջին ծանօթութիւնները, պատուաւորութեան առաջին ըսկդրունքները անոր կը պարտիք, ան ձեզի սորվեցած է իմաստութիւնն ու պարկեշտութիւնը: Այս ամէնը խորին երախտագիտութիւն չե՞ն արժեր ձեր կողմէն և եթէ հնազանդութեամբ և բազմաթիւ փոքրիկ ծառայութիւններով ձեր ուսուցչին յայտնեք ձեր երախտագիտութիւնը, որ շատ դիւրին է, պիտի ցուցնեք ձեր սրբին ազնւութիւնը, վեհանձնութիւնը եւ ուղղամբ-սութիւնը:

Ի՞նչու համար ձեզ կը պատմեն

Միշտ ձեր բարիքին համար է որ ձեր վարժուհին կը յանդիմանէ կամ կը պատէք ձեզի:

Անցեալ օր Վարդուհին իր պարտականութիւնը լաւ կատարած չէր և վարժուհին ստիպեց կրկին ընել:

Վարդուհի առանց բան մը ըսելու կրկին ըրաւ. բայց զրօսանքի ժամանակ գնաց վարժուհիին քով և ըսաւ: — Օրի՛որդ, գուք շարունակ կը կրկնէիք, թէ պէտք է չարութեան փոխարէն բարիք ընել: Արդեօք ինձի բարի՞ք ընելու համար զիս պատեցիք, որովհետեւ պարտականութիւնս լաւ չէի կատարած:

— Հսէ ի՞նձ, պատասխանեց վարժուհին, ինծի՞նամար կը սովորիք:

— Ո՞չ պատասխանեց վարդուհի, ինքզինքիս համար, որպէս զի պապային ուսեալ ըլլամ:

— Լաւ ուրեմն, վրայ բերաւ վարժուհին, քու բարիքիդ համար էր որ քեզի պատժեցի: Քեզի կը յանդիմանեմ, որովհետեւ կը սիրեմ և կը փափաքիմ որ երբ մեծնաս, ուսեալ ըլլաս, մինչեւ իսկ կ'ուզեմ որ կատարեալ ըլլաս: Ուրեմն կը հասկնաս թէ պարտականութիւնդ կրկին կատարել տալով քեզի բարիք ըրի չարիքի փոխարէն, ուզեցի քեզի վարժեցնել ըրած գործդ միշտ լաւ ընելու:

Զեր վարժուհիները այսպէս կը խորհին: Անոնց համար երբէք փափաթելի չէ ձեզ պատճել:

Դպրոցի մէջ ֆննադատութիւն:

Շատ մը փոքրիկ աղջիկներ կը խօսակցէին պարտէզին մէկ անկիւնը: — Սնոնցմէ մէկը միւսին կ'ըսէր. « Զգիտեմ ինչո՞ւ այսօր Օրիորդը գեղեցիկ ըզգեստը հագած է » . — Զարածճի մը ըստաւ. « Զարմացնելու համար, կամ մեր մէջ նախանձ գրդակլու համար » :

Այսպէս խօսելով. քիչ մը ծաղրական կելսպարանու վարժուհին կը նայէին:

Թանի մը վայրկեան յետոյ երկու վարժուհիներու խօսակցութիւնը լսեցին, երբ մէկը կը պատմէր թէ իրեն, ամէնօրուան զգեստին վրայ իւղ թափեր էր, այնպէս որ հակառակ կամքին ստիպուեր էր պահեստի զգեստը հագնիլ դպրոց գալու համար:

Աս որ լսեցին պղտիկ աղջիկները՝ իրարու երեսնայեցան կարմրելով: Խղճահար եղան որ քննադատեր էին իրենց վարժուհին, պճնասիրութեան կամ ցուցամութեան վերագրելով անոր զգեստ փոխելը:

Տղա՛ ուրիշներուն գործերը մի՛ ֆննադատէի, որովհետեւ միշտ չէք կրնար անոնց գործին ճշմարիտ պատճառը գիտնալ:

Խոստվանինք մեր յանցանիք

Միթէ շա՞տ դժուար է ընդունիլ թէ անիրաւ ենք՝ երբ սոսուգիւ յիմարութիւն մը գործած ենք: Անշուշտու միայն թէ պէտք է քաջարարութիւն ունենալ իր հպարտութեան յաղթելու համար:

Վարդուհի և Շուշանիկ երկու լաւ բարեկամուհիներ են: Ոնցեալ օր Շուշանիկ վարդուհիին պայուսակէն գիրք մը առած էր բան մը նայելու, եւ ապա մոռագիրք մը առած էր տալ: Վարդուհին կը փնտոէ գիրքը դասուցած էր ետ տալ: Վարդուհին կը փնտոէ գիրքը դասուցած էր համար և չգտներ, վարժուհիին տուած դասը չկրնար սորվիլ, հետեւեալ օրը չլրնար դասը պատմել, յանդիմանութիւն կը լսէ:

Այն ատեն Շուշանիկ կը յիշէ որ այդ յանդիմանութեան պատճառն ինքն է: Ոտքի ելնելով վարժուհիին կը պատմէ իր ըրածը, խոստվանելով թէ յանցաւորն ինքն է և արժանի է անոր տեղը պատճուելու:

Կան տղաք, որոնք այսպէս պիտի չճանչնային իրենց յանցանքը, պիտի փորձէին խորամանկութեամբ տեղը դնել գիրքը և առանց բան մը ըսելու պիտի թողէին որ փոքրիկ ընկերուհին պատժուի: Թա-

Հասրառութիւն ունեցէք ձեր գործերը ճանչնալ որչափ ալ գէշ լինին։ Այսպէս վարուիլը թէ՛ անկեղծութիւն է եւ թէ արդարութիւն։

Պէտք է իրարու օգնել

Դպրոցի մէջ միշտ իրարու պէտք ունիք։ Կը պատահի որ այսօր դուք մատիտի մը պէտք ունիք և ուրախ կ'ըլլաք երբոր ձեր ընկերը հաստ մը փոխ կուտայ։ Վազը կրնայ անիկա իր ասեղը մոռցած ըլլալ, դուք ձերինը փոխ կուտաք։ Այսպէսով ամէն մէկդ կրնաք իրարարու օգնել, դուք ընկերնուդ համար պիտի ընէք ինչ որ անիկա ըրաւ կամ պիտի ընէ ձեզի համար։

Դպրոցի մէջ իրարու օգնելը ձեր կողմանէ միայն խոհեմութեան հայեցակէտով պիտի չկատարուի, այն առեն վեհանձնութիւն չըլլար, ան պիտի ըլլայ արդինքը բարութեան, արդարութեան, Խորհեցէք որ միասին ժամանակ կանցնէք, միասին կը սորվիք և է պյտպէս ալ վարուիլ։

Իրարու փոխադարձաբար օդնելը սովորութիւն ըրէք։ Յետոյ կեանքի մէջ այս սովորութիւնը ձեր վրայ կը հաստատուի, այսպէսով առանց նշմարելու ձեր նմաններուն օդնելու մեծ պարտականութիւնը կատարած պիտի լինիք։

Այն պարագաները՝ ուր պէտք չէ իրարու օգնել

Փոքրիք չար աղջիկ մը կուզէ գէշ խաղ մը խա-

զալ իր ընկերներէն մէկուն և ձեզմէ կը խնդրէ իրեն օգնել։ ուրիշ մը, որ գասը չգիտեր, ձեզմէ կը խնդրէ գիրքը բաց բռնել իր մօտը, երբ ինքը դասը պիտի արտասանէ։ մէկ ուրիշը ձեզմէ կը խնդրէ իրեն համար ստել պատիժէ մը ազատելու համար։ Ահաւասիկ, տղաք, պարագաներ երբ պէտք չէ իրարու օգնել։ որովհետեւ երբէք պէտք չէ օգնել մէկուն գէշ գործ մը ընելու համար։

Ձեր ընկերոջը օգնելով որ ուրիշ ընկերի գէշ խաղ մը խաղայ, կամ վարժուհին խարէ, դուք ալ անոր պէս յանցաւոր կ'ըլլաք առանց անոր յանցանքը պակեցընելու։

Երբեմն շատ քաջասրութիւն պէտք է ունենալ որ կարելի ըլլայ պղտիկ բարեկամուհիներու սիրոյն դիմագրել անոնց արժանի եղած պիտիժը կը ել չարդիլու համար։ Զարեն խուսափելու համար նոյնչափ վարժ պէտք է ըլլայ որչափ բարիք ընելու համար։

Չեր վարժուհիին նեղութիւն տալի զգուշացիկ

Փոքրիկ անուշադիր աղջիկներ կան, որոնք կ'ըստիպեն իրենց վարժուհիները շատ անգամ կը կնել բացատրութիւն մը, զոր առաջին անգամ ըմբռնած չեն։

Վարժուհին կը կրկնէ նորէն անգամ մը, և թերեւս ա'լ աւելի։ Վերջապէս կը յոգնի, ձայնը կը տըկարանայ, կը հիւանդանայ, որո՞ւնն է յանցանքը։

Դուք ամէնքդ կը պատասխանէք։ « Յանցանքը անուշադիր, մտացիր և ծուլասիրտ աշակերտներունն է, որ վարժուհիին շատ նեղութիւն կը պատճառեն, մինչդեռ կրնային այս բանէն խուսափիլ »։ Կը կար-

ծէք թէ այս փոքրիկ աղջիկները յանցաւոր չե՞ն և թէ իրենց խլզը հանդի՞սա է ըրած այն չարիքներուն համար :

Տղա՛ք, անոնց մի' նմանիք : Յիշեցէք, որ ձեր դպրոցական պարտականութիւնն է ձեր ժամանակէն վայրիկան մը չկորսնցնել, եւ ոչ վարժուհինը կորսնցնել տալ :

Թիւեցիք որ պէտք չէ մարդու չարիք հասցընել, մասւանդ անոնց, որ ձեզի բարիք կ'ընեն :

Երբ բան սորված չեն

Փոքրիկ աղջիկներ, եթէ կ'ուզէք գիտութեան արժէքը գիտնալ, յիշեցէք այն պայմաններն, որոնց մէջ կ'ապրին տգէտ կիները :

Անոնք նամակ մը դրելու համար ուրիշին օգնութեան պէտք ունին, ինչպէս եւ ստացած նամակին կարդացնելու համար : Անոնք իրենց գործերը չեն կրնար կատարել, վասն զի չեն հասկնար եւ միշտ կը կասկածին անոնցմէ, որոնց պարտաւոր են իրենց գործերը յանձնել և շարունակ կը վախնան թէ զիրենք կը խարեն :

Անոնք ընթերցանութեամբ չեն կրնար հաճոյալի կերպով անցնել իրենց ժամանակը, առտնին գործերը վերջացնելէն ետքը իրենց տղոց պարտականութիւնները կատարելու համար անոնց օգնելու գոհունակութիւնը չունին: Ուսում չունեցող կիները շատ անգամ իրենց շուրջը հազարաւոր շահեկան խօսակցութիւններ կը լսեն, բայց չեն հասկնար : Իրենց երիտասարդութեան ժամանակ ուսած չեն և որչափ կը

ցաւին կորսուած ժամոննակին համար : Անոնց մի' նըմանիք, վերջը դուք ալ անոնց պէս պիտի նեղուիք, նոյն ձանձրութիւնները եւ նոյն խլզի խայթերը պիտի ունենաք :

Տգէս կիները միայն կիսովլին կ'ապրին, անոնց ձեռները կ'աւսասին, բայց մտերը բնացած կը մնան :

Զեր վարժուհիին ներկայութենէն մի' վախնակ

Վարդուհի շատ վախկոտ է : Երբ վարժուհին իրեն հետ կը խօսի, կը հարցաքննէ . իրեն կը մօտենայ աշխատութիւնը դիտելու համար, վարդուհին կը կարմրի, կը դողայ եւ տրամադիր է լալու : Կ'ըսէ թէ կը վախնայ իր դաստիարակուհիէն :


Անշուշտ յանդուղն եւ համարձակ լինելէն աւելի լաւ է յարգել ձեր ուսուցչուհին, որ ձեզ կ'ուսուցանէ եւ կ'առաջնորդէ, բայց անկէ վախնալը աւելորդ է : Ինչո՞ւ պիտի վախնաք ձեր ուսուցչուհիէն : Ի՞նչ չարիք կրնայ ընել ձեզ : Ընդհակառակը շարունակ իր բարեացականութեան և բարութեան փորձը չի տար ձեզ : Կ'ըսէք թէ կը վախնաք որ ձեզ յանդիմանէ : Բայց եթէ յանդիմանելու արժանի բան մը չէք ըներ, ինչո՞ւ կը կասկածիք անոր ներկայութենէն :

Զեր խլզին հետ հաշտ եղէք, ինքզինքնիդ յանդիմանելու բան մի' ունենաք, ձեր կարողութեան ներածին չափով աշխատեցէք ձեր պարտականութիւնները կատարելու, յետոյ սիրեցէք ձեր ուսուցչուհին, այն ատեն ալ վախնալու բան մը պիտի չունենաք :

Նատ սիրած անձեն բնաւ չեն վախնակ :

Փոքր ուշադրութիւններ

Դեռատի աղջիկ մը կը ճանչնամ, որ շատ բարի է, բայց այնպէս չերեւիր, դիտէ՞ք ինչու. որովհե-



տեւ իր շուրջը եղողներուն համար փոքրիկ ուշադրութիւններ չըներ, ինչ որ ընդհանրապէս բարի ուրախի յայտարար նշանն է: Եւ այդպիսիները արժանի կերպով չեն գտնուիր, որովհետեւ ինչպէս կարելի է սրտի մէջ անցածն երեւակայել, եթէ արտաքին ընթացքը բարութեան վկայական չէ:

Բաւական չէ սրտով բարի ըլլալ, պէտք է նաեւ արդիւնքն ուրիշին ցուցնել: Եթէ մեր ընկերներէն մէկը բան մը ձգէ գետինը, անմիջապէս վերցնենք և իրեն տանք, կամ մէկ ուրիշը երբ հիւանդ է, չուտով անոր օգնենք, խնամենք: Եթէ տեսնենք որ ծերունի մը փողոցէ անցնելու ժամանակ նեղութիւն կը կրէ, պէտք է ձեռքէն կամ թեւէն բռնելով օգնենք անոր: Երբեմն պէտք է գուշակենք թէ մէկը կը փափաքի մեզի յանձնարարութիւն մը ընել և չհամարձակիր ու պէտք է յայտնենք մեր պատրաստակամութիւնը: Չմոռնանք որ նույտիս բարեսուրիւնը կը կայանայ աւելի առօրեայ հազարաւոր փոքրիկ պարագաներու՝ քան թէ կեանքի մեծ պատահարներու մէջ:

Ի՞նչպէս պէտք է ընդունիլ խրամներն
ու խորհուրդները

Փոքրիկ աղջիկներ, երբ ձեր վարժուհին ձեզ խըրատ մը, խորհուրդ մը կուտայ, երբ ձեզի կ'ըսէ. « Ուզի՞ղ կեցէք. աւելի ուշադրութեամբ սովորեցէք, ձեր անմիտ կամ թեթեւ ընկերոջը մի՛ հետեւիք » . ձեր անմիտ կամ թեթեւ ընկերոջը մի՛ հետեւիք . այն ատեն դուք փափաք կ'ունենաք կիրքով պատասայն ատեն մտքին մէջ փոքրիկ հակառակութիւն խանել կամ ձեր մտքին մէջ փոքրիկ հակառակութիւն մը կ'զգաք եւ կուզէք ձեր վարժուհին այնպէս խօսիլ:

Փոքրի'կ աղջիկներ, փոխանակ այսպէս փափաքելու եւ խորհելու, պէտք է անոնցմէ չնորհակալ ըլլաք: Դուք պէտք է զրուանքի կամ տուն դառնալու ժամանակ, անոր մօտենաք եւ ըսէք. « Տիկին կամ օրիո՞րդ, չնորհակալ եմ զիս կշտամբելնուդ և նոյն իսկ երբեմն յանդիմանելնուդ համար: Գիտեմ որ ինձի տհածութիւն պատճառելու համար չէ որ խրատներու խորհուրդներ կուտաք: Ասոր համար երախտապարտ եմ եւ բնակ պիտի չի մոռնամ »:

Բաղրաւոր է այս տղան, որ իր մօսն այնպիսի մեկն ունի, որ միշտ գուրզուրանօք եւ անձնուիրութեամբ խրատներ ու խորհուրդներ կուտայ:

Քաղաքավարութիւնն ու բարութիւնը բոյեր են

Որչափ որ իրարու հետ ընկերներ եւ լաւ բարեկամներ ըլլաք և մօտաւորապէս նոյն տարիքն ունենաք դարձեալ իրալու հանդէպ քաղաքալար պէտք է ըլլաք՝ եթէ իրար կը սիրէք ու բարի էք:

Գիտէ՞ք, ուր կը գտնուի քաղաքավալպութեան սկզբունքները, կը կարծէ՞ք թէ գրքերու մէջ, ձեզի տըրուած խրատներո՞ւն մէջ: Ո՞չ, ո՞չ, ձշմարիտ քաղաքավարութիւնը սրտի մէջ գրուած է, հոն դրոշմուած են այն սկզբունքները որ քաղաքավալպութիւնը կը կազմեն:

Եթէ դուք բարի էք, եթէ դուք սիրտ ունիք, պիտի ընբռնէք թէ պէտք է չնորհակի կերպով լիսոսիք ձեր ըմկերոջ հետ, թէ պէտք չէ դաժան ըլլաք, ձեր վարմունքով տհածելի պիտի ըլլաք, թէ պէտք է անոր ըսէք. « Խնդրեմ » երբ որ եւ է բան մը կ'ու-

զէք, երբ ձեզի փոքր ծառայութիւն մը ընեն, պէտք չէ մոռնալ չնորհակալ ըլլալ: Դուք քաղցր, մարդասէր, ուղղամիտ պիտի ըլլաք. անոնց հետ խօսած ժամանակ չնորհակի բառեր պիտի գործածէք եւ ոչ թէ յոսի մակդիրներով, օրինակ, յիմար, անպիտամն, անտանելի. ձանձրալի ինչպէս ՈՐ ԵՐԲԵՄՆ Կ'ԼՍՈՒԻԻ, Բարի' ելիք եւ բաղաբավար պիտի ըլլաք:

Վիճաբանութենէ մը ետքը

Վարդուհի եւ Սիրանոյշ ոչինչ բանի մը համար վիճեր էին: Վերջապէս Վարդուհին, որ անիրաւ էր, ըստ Սիրանոյշին: « Լա՛ւ, մի մոռնար, տեղը պիտի հանեմ »: Այն օրուընէ ի վեր այս երկու փոքրիկ աղջիկները իրարու հետ գժտած են, իրարու դէմքէն ունին:

Տեսէ՞ք փոքրի'կ աղջիկներ, Վարդուհին եւ Սիրանոյշը անիրաւ են գժտած մնալնուն համար. առաջ երկու փոքրիկ լաւ բարեկամուհիներ էին եւ իրարու հետ խաղալու մեծ հաճոյք կ'զգային, որովհետեւ իշմար կը հասկնային եւ նոյն ճաշակն ունէին, ըստ լաւ կը հասկնային եւ նոյն ճաշակն ունէին, Հիմա որ բաժնուած են երկուքն ալ առանձին են, Հիմա ցաւին իրենց ընկերուհին վրայ, իրարու ներելու քաջութիւնը չունին:

Անոնց պէս մի' ընէք, տղա՞քս, խորհեցէք, որ քէնք գէշ զգացում մըն է, որ կը կարծրացնէ սիրտը եւ հետեւարար ձեզ աննդունակ կը դարձնէ սիրելու Մտածեցէ՞ք, որ դուք ալ ձեր պակասութիւններն ունիք, եւ շատ անգամ ձեր դաստիարակը, ձեր բարենիք, եւ շատ անգամ ձեր դաստիարակը, կամ ներելու ձեզի ներած են: Դուք ալ փոխադարձար կամները ձեզի ներած են:

ներեցէք։ Գացէք ձեզի վշտացնող բարեկամին, համբուրեցէք զայն, ըսէք իրեն։ « Վերջացաւ, մուցուեցաւ ». Երբ ներել, պիտի տևանէք քե որչափ գոհ կ'ըլլափ։

ԹԵՐԵՎԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Սիրանոյշ, որ պարտականութիւնը չկատարելու պատրուակ կը փնտուէր, շարունակ կը կրկնէր, թէ թանաքս շատ թանձրէ, չեմ կրնար գրել։



Դաստիարակուհին կը մօտենայ, թանաքամանին մէջ կը նայի — Ո՞չ, Սիրանոյշ թանաքդ թանձր չէ դեռ շատ լաւ կրնաս գործածել։ Պէտք է դուրս ել-

նելէ առաջ պարտականութիւնդ վերջացնես։ — Բայց Սիրանոյշ կը յամառի, գրիչը ձեռք չառներ եւ շատ անդամ կիսաճայն կը կրկնէ « Աւելի գէշ, պիտի չը-գրեմ, ա՛լ չեմ կրնար գրել »։

Զբօանքի զանդակը հնչեց, տղաք դասարանէն գուրս կ'ելլեն. միայն Սիրանոյշ կը մնայ իր նստադուր կ'ըլլայ. անգործ, յամառելով չէր վերջացնէր ի՞ր պարտականութիւնը՝ պատրուակ բռնելով թանաքի թանձրութիւնը։

Քիչ մնաց որ զրօյանքի ամբողջ ժամանակն անցնէր եւ այդ փոքրիկ աղջկիը խաղալու չերթար. որովհետեւ դաստիարակուհին այդ բանով չէր խարուեր. կը տեսնէր որ Սիրանոյշ թեթեւամորէն կը յամառէր եւ պիտի չժողովր դասարանէն ելնել, մինչեւ որ պարտականութիւնը չկատարէր։

Արդ՝ հոս ո՞վ պատժուեցաւ, Դաստիարակուհին. ո՞հ, ո՞չ։ Սիրանոյշն է որ կը յամառի ու չուզեր համակերպիլ եւ անհնազանդութեամբը զբօսնելու յարմար առիթ մը կորսնցնէ։ Տղոց յամառութիւնը միշտ գէշ բան մըն է. շատ անգամ տղաք փորձառու մարդիկներու խրափին հնտեւելով մեծ վիշտերէ կ'ազատին։

ԲՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՓԱՎԻԿՈՒԹԻՒՆ

Փոքրիկ աղջկիներ, նայեցէք փափուկ կտորի մը՝ եթէ գեղեցիկ չնորհալի կերպով մը ծալծէք, սիրուեւ համելի ցոլք մը կուտաք իր գոյներուն։ Աը տեսնէք նաեւ որ յարմար է գործածուելու։

Գործաւորուհին պիտի կրնայ անով ուզածն ընել այլ եւ այլ ձեւերով զգեստներ կամ կահերու որ եւ

է զարդարանք շինել։ Այս փափուկ կերպասի կտորը ամէն տեսակ բանի կը յարմարի եւ արժէքն աւելի կը բարձրանայ երբ գործածուի։

Չեր բնաւորութիւնն ալ թանկագին կերպասի կը տուր մըն է, զոր կարող գործաւորուհի մը, ձեր դաստիարակուհին պաշտօն ունի արժէքը բարձրացնել, ազնուացնել, կարգի դնել ձեր բարիքին եւ ձեր երջանկութեան համար։ Ի՞նչ պիտի ընէ, եթէ փափուկ չէ, խիստ եւ յամառ է ընդունելու այն լաւ սովորութիւններն, ու կ'ուզէ ձեր մէջն արմատացնել։ Այս սովորութիւնները բնաւորութեան ծալքերն են, որ աւելի հաստատուն կը մնան քան թէ կերպասի ծալքերը։

Փոքրիկ աղջիկներ, իլու եւ փափուկ եղէք. ձեր երջանկութիւնը եւ ձեր յառաջդիմութիւնը հոն կը կայանայ։

Մի՛ ՏՏԵՆԴԱՔ

Փոքրիկ աղջիկներ կան, որ բնաւ գոհ չեն, Պարապ տեղը անոնց դաստիարակուհին բարութեամբ լեցուած է իրենց համար. միշտ առիթ կը դանեն տրտնջալու անոր որոշման կամ տուած հրամաններուն դէմ։

Շարունակ այն ցած ճայնով փսփսուքը այն կցկը-տուր բառերը, այն կարձ նախադասութիւններն, ոռով միշտ իրենց տհաճութիւնը կը յայտնեն, ահա ասոնք յարգանքի պակասութիւն, նոյն իսկ անամօթութիւն են, որուն կարելի չէ համբերել։

Փոքրիկ աղջիկներ, ամէն բանի համար եւ ամէն բանի դէմ տրտնջալու սովորութիւնը մի՛ ունենաք։ Ասիկայ ո՛չ միայն անյարմար է, այլ եւ ծաղրելի։

Գիտէք, ինչ կը պատահի։ Խրատի մը կամ կարծիքի մը դէմ որու տրտնջած էիք, թերեւս վայրկեան մը յետոյ պիտի համակերպիք. Շատ անգամ ձեզի պատահած չէ ըսել « Ասիկա գէշ է, պէտք չէր այսպէս ընել » եւ յետոյ գոհ էք մնացեր, որ ամէն ինչ ձեր առջի կարծիքին հակառակ եղած է։

Չեր դաստիարակութիւններ ձեզ կարգիլ է տենջակ։

ՊՈՐԾԱԿՋՈՒԹԻՒՆ

Երեւակայեցէք թէ՝ պարտէզի մը մէջ կը գտնուիք եւ երկու խոռոչի բաժնուած կը խաղաք. Եթէ ձեր



խոռոչին մէջ դիւրաշարժ տղայ մը կը գտնուի. որ չըռնուիք, ձեր ամիողջ խոռոչը կ'օգտուի անոր ձարպիկութենէն եւ յաղթանակը դուք կը տանիք. Եթէ ընդհակառակը ձեզմէ մէկը ձախլիկ է, ահա ձեր խոռոչի յաղողութիւնը վտանգի ենթարկուած է։

Նոյնն է նաեւ ձեր դասարանի աշխատութեան համար Ձեր ընկերներէն մէկը յաջողութիւն մը ունեցա՞ւ, ամբողջ դասարանը կը չնորհաւորեն եթէ մէկ ուրիշը շատախօս, անկա՞րգ է, ահա' ամբողջ դասարանը նեղութիւն կը կրէ . կրնայ ընդհանուր պատիժ սահմանուիլ, երբ մէկ ընկերը յիմարութիւն մը ըրած է եւ հեղինակը չեն գտներ :

Ուրիշին ըրած բարի կամչար գործին հետեւանքը կրել, կը նշանակէ անոր գործակից ըլլալ :

Որովհետեւ ամէնքդ գործակից էք, տեսէք ի՞նչպէս անպիտան եւ անիրաւ պիտի ըլլայիք չարիք պանառելով մեկուն որ վնաս մը բրած չեր :

Ի՞նչ է բարեկամութիւնը

Փոքրիկ աղջիկներ, թերեւս աջ ու ձախ բարեկամուհի անունը անխտիր կը գործածէք : Ամէն ընկերի այդ անունը կուտաք, եւ կամ այսօր մէկուն, վաղը միւսին :

Ձեզի պիտի ըսեմթէ՝ ի՞նչ է բարեկամութիւնը և պիտի տեսնէք թէ կարելի չէ՝ շատ բարեկամներ ունենալ :

Ձեր բարեկամը, իմաստուն, խելացի, ուրախ զրուաթ տղայ մըն է, որ ձեզի պիտի քաջալերէ բարի ըլլալ, լաւ աշխատիլ, ձեր պարտականութիւնը կատարել : Ձեր բարեկամ անուանածը այսպէս է :

Ձեր բարեկամը անիկա է որ ձեզի հետ գտնըուելուն հաճոյք կ'զգայ, նոյն իսկ եթէ տիսուր ըլլաք կամ հիւանդ, և մինչեւ իսկ եթէ չկրնաք անոր հետ զրօսնուլ : Ձեր բարեկամ կոչածը այսպէս կը վարուի :



Ձեր բարեկամն անիկա է որ չքաշուիր կամ չը վախնար ձեզ զգուշացնելէ՝ երբ սխալ մը գործելու վրայ էք, կամ եթէ գործէք՝ ձեզ կը յանդիմանէ, այնպէս ձեզի կը քաջալերէ ներողութիւն խնդրելու և կ'օգնէ լաւ որոշում մը տալու : Ձեր բարեկամ անուանածը այս ամէնը կ'ընէ :

Ճշմարիս բարեկամութիւնը երկու ազնիւ սրտերու միջեւ միայն գոյութիւն ունի :

Բարի նախանձ

Վարդուհի անցեալ օր գաղղիերէն գեղեցիկ շարադրութիւն մը գրած էր եւ ուսուցչուհին զայն շնորհաւորեց բարձրաձայն աշխատափրութեանը եւ ջանափրութեանը համար :

Այն ատեն Սիրանոյշ ինքնիրեն ըստ, « ինչու համար զիս ալ չչնորհաւորեն : Միայն պէտք է ջանամ աշխատիլ, Վարդուհիին պէս ընել, թերեւս յաջողիմ անոր պէս՝ վարժուհիէն գովեստ ընդունիլ » :

Ահա բարի նախանձը : Կը տեսնէ՞ք, որ Սիրանոյշ չէր նախանձեր վարդուհիէն, երբէք չեր փափաքեր անոր ստանալիք գովեստները պակսեցնել կամ արգիլել, բայց կ'ուզէր անորմէ օրինակ տռնել եւ անոր նմանիլ :

Բարի նախանձը լաւ բան է, ձեր ընկերոջ յաջողութեան նկատմամբ անտարբեր մի՛ ըլլաք : Մի՛ ըսէք « ինչ փոյթս », ընդհակառակն՝ պէտք է փոյթտանիք ձեր ընկերոջ յաջողութիւնը տեսնել : Պէտք է որ ան ձեզի քաջալեր ըլլայ եւ անոր նմանիք : Ինչ որ կ'ընէ լաւ աշակերտ մը, ուրիշ մը կրնայ ջանափրութեամբ անոր պէս ընել :

Կանոնի հնազանդիլ

Փոքրիկ տղա՛յ, այնպէս չէ՞ շատ ձանձրանալի է դպրոցի կանոնին հնազանդիլը: Կը փափաքիք խօսիլ,

պէտք է լսել: Կ'ուզէք խաղալ, պէտք է աշխատիլ: Կարդալ կը ցանկաք, պէտք է գրել: Հաճելի է թըուաբանութեան պարտականութիւնը կատարել, բայց պէտք է ասեղնագործութիւն ընէք:

Ասոնք բոլորը շատ սիրու նեղացնող բաներ են: Բայց արգեօք օգտակար է: Անշուշտ այո՛: Տեսէք ինչ կրնար պատահիլ, եթէ դպրոցի մէջ մինակ կանոն մը չըլլար եւ թէ ամէն ոք իր ուզածը ընէր: Գոյութիւն չէր ունենար ո՛չ դաս ո՛չ կարգապահութիւն, ո՛չ կանոն, ո՛չ գիտութիւն եւ ո՛չ յառաջդիմութիւն: Քմահաճոյքը միայն պիտի կառավարէր ձեր գործերը եւ վարժուհին պիտի պարտաւորէր նայիլ որ ձեզի հաճելի եղածը միայն ընէ:

Ամենայն յօժարութեանը պէտք է կանոնի հնազանդիլ: Կանոնը դրուած է ամենուն համար առանց բացառութեան: Նախատեսուած է ինչ որ պէտք է ընել և աշխատութիւնը յարմար կերպով բաժնուած է: Կանոններու հնազանդիլը աւակերտները կը վարժեցնէ կարգապահութեան որուն լետոյ կեանի մէջ պէտք պիտի ունենան:

Փոքրիկ նախանձ մը

Ինչու համար Արուսեակ առանձին է պարտէզին մէկ անկիւնը, մինչդեռ իր ընկերներն ուրախութեամբ կը խաղան միասին: Ինչու համար Արուսեակ սմսեկուկ կերպով կը նայի անոնց որոնք իրմէ աւելի գեղեցիկ զգեստ մը հագած են: Ինչու համար չփրեր առաջինն է շարադրութեան մէջ:

Արուսեակ նախանձու է, անոր համար բնաւ բա-

բեկամ չունի: Անոր հետ մարդ չիրնար խաղալ, որովհետեւ կը կարծէ թէ իրեն համար անիրաւովթիւն կ'ընեն խաղի մէջ: իր ընկերներուն ունեցած առարկաներուն կը ցանկայ, կը նախանձի Սիրանոյշին որ խելացի, բարի եւ աշխատասէր է: Ինքը կ'ուզէ միշտ և ամէն տեղ առաջինը եւ ամենէն նշանաւոր ըլլալ:

Փոքրիկ աղջիկներ, տեսէ՞ք Արուսեակի վիճակը, ինչպէս տխուր է դպրոց եղած ժամանակ. տեսէք ինչպէս մէկ կողմ լքուած է: Ետքը աւելի գէշ պիտի ըլլայ որովհետեւ կեանքի մէջ շարունակ պիտի պատահի իրմէ աւելի հարուստ, աւելի խելացի եւ աւելի կարող կիներու:

Նախանձը սրի եւ բանականութեան կատարեալ նիւանդութիւնն է որ կ'առողջանայ հաստատակամութեամբ:

Բարի հետամրութիւն

Բարի հետաքրքրութիւն մը կայ, որ ձեզի ներելի է և նոյն խև յանձնարարելի, ատիկայ ձեր ուսման կը վերաբերի:

Բարի հետաքրքրութիւն է վարժուհին բացատրութիւն մը խնդրել հատուածի մը պարունակած անհասկնալի մէկ կէտի մը համար, որ պէտք է սովորիք եւ չէք հասկնար: Բարի հետաքրքրութիւն է, երբ կը փափաքիք գիտնալ, օրինակի համար թէ ինչո՞ւ կ'անձրեւէ, ի՞նչպէս կը շինեն կերպասները, ո՞վ հնարած է այս մեքենան, այն ինչ գործիքը: Խաղալով կամ դիւրութեամբ բան չի սովորիր մարդ, գիտութեան համար պէտք է հետաքրքրութիւն ունենալ:

Բայց ո՞չ մի բան չափազանցնելու է: Բարի հե-

տաքրիրութեան տակ դասը մի՛ ընդհատէք, դասարանի լուսութիւնը մի՛ խանգարէք բացատրութիւն խնդրելու այնպիսի բանի մը համար, որու վրայ այդպահուն ոչ ոք կը խորհի: Զօսանքի ժամին սպասեցէք կամ այն պահուն երբ վարժուհին այդ նիւթին վրայ դաս մը տայ: Պետք չի որ ձեր ուսանելու փափաք դասարանին մեջ աղմուկ եւ անկարգութիւն առաջ բերէ:

ԱՅներելի հետամրութիւն

Սիրելի փոքրիկ աղջիկներ, չգիտեմ ինչո՞ւ համար շատ կը փափաքիք ուրիշներու նամանաւանդձեր ընկերներու գործերուն ի՞նչպէս եւ ինչու համար վինելը գիտնալ: Ձեզի ի՞նչ օգուտ ունի, օրինակի համար, երեւան հանել թէ ձեր ընկերուհին իր մօրմէն յանդիմանութիւն լսած է, այնպիսի բան մը որ ոչ ոք գիտէ, եւ կամ ամէնէն առաջ գիտնալ թէ ձեզմէ մէկուն ազգականին գործերը լսւ չեն երթար եւ բնակած քաղաքէն պիտի մեկնի: Այս աեղեկութիւնները առնելու համար հարկ եղած հարցում հարցման վրայ ընել. գիտարութեամբ կցկտուր բառեր խելի որ չուզելով կը հաղորդէին: Թերեւս դրացիին կողովը խուզարկեցիք նամակ գտնելու համար, թուղթմը որ գաղտնի կարդացիք եւ գիտցաք ինչ որ կուզէք գիտնալ:

Աւելի ծաղրելի եւ շատ անգամ աւելի ամօթալի բան չկայ քան թէ այս անօգուտ, անխորհուրդ կամ վատանգաւոր հետաքրքրութիւնը: Ինչ որ ուրիշին կը վերաբերի անող մի՛ զբաղիք, համբերեցէք որ ձեզի ըսեն ձեր չգիտցածը: Հետամրիք պատիկ աղջիկը աղէտ մըն է դպրոցին մեջ եւ իր տունը:

ՔԱՌԱՐԻՑԻ

Բակին մէջ ո՞վ թուղթ նետած է, ըստ վարժու-
հին: Լաւ գիտէք որ արգիլած եմ այդ, Տեսնենք ո՞վ
ցրած է:

Ոչ ոք կը շարժի, որովհետեւ դպրոցականները
գիտեն որ լաւ ընկերները պէտք չէ իրարու հետ
անհաշտ ըլլան:

Բայց եւ այնպէս փոքրիկ ձայն մը կը բարձրա-
նայ, Շուշանին ձայնն է, որ կ'ըսէ «Օրիորդ՝ Դեղ-
ձանիկը նետած է»:

Միւս բոլոր փոքր աղջիկները «Օ՛հ . . .» կ'ընեն
տխուր զարմացումով մը: Կ'ամաչեն որ իրենց ընկեր-
ներէն մին քառ ըլլայ եւ նոյն իսկ Շուշանը շատ կը
կարմրի, որովհետեւ կը հասկնայ թէ ըրածը գէշ բան
մըն էր:

Այս, գէշ գործ մը ըրաւ: Եթէ մէկը յիմարութիւն
մ'ընելէ ետք խոստովաներու քաջութիւնը չունի, դուք
լոեցէք: Եթէ ընդհանուր պատիժ մը որոշուի, ան-
մէնքդ ալ հաւասարապէս կրեցէք, բայց բանսարկու-
թեան դեր մի՛ կատարէք: Քառի դերն անարգ, զծուծ
ցած եւ արհամարելի է:

Դարձեալ գործակցութիւն

Շատ անգամ կը տրտնջան ընդհանուր պատժի մը
պէմ, որ երբեմն կը տրուի ամբողջ դասարանին՝ մէկ
աշակերտին գործած յանցանքին համար, զոր չխոս-
տավանիր: Եւ, սիրելի տղաքս, ասիկայ անիրաւ չէ,
որովհետեւ դուք իրարու գործակից եք:

Հսէ՛ք ինձ, եթէ ձեր ընկերներէն մէկը աղէկ
գործ մը կատարէր ու ատիկա յայտնուէր, բայց
առանց գիտցուելու թէ ո՛վ ըրած է, եւ գային
ամբողջ դասարանը չնորհաւորէին, ձեզի զամանալի
կը թուէ՞ր: Ասոր համար գոհ պիտի չըլլայի՞ք եւ ձեր
սրտին մէջ քիչ մը հապարտութիւն պիտի չզգայի՞ք
իբր թէ այդ բարի գործին մէջ դուք ալ մաս ու-
նենայիք:

Լաւ ուրեմն, ինչպէս որ ձեզմէ մէկուն ըրած լաւ
գործին համար ամբողջ դասարանն ուրախութեամբ
պիտի ընդունէր եղած պատիւը, նոյնպէս ալ յօժարա-
կամ պիտի տանիք յանդիմանուրիւնները, ձեզմէ մէկուն
տրուած պատիւը, որ յանցանք մը գործած է եւ շխոս-
տվածիր:

Երբ յանցանք մը ըրած են պէտք է խոստովանին

Փոքրիկ աղջիկ, զրոսանքի ժամանակ դուն դա-
սարան մտար, վարժուհին սեղանին վրայէն գիրք
մը առիր եւ թղթատելու մէծ փափաք ունէիր. յետոյ
մոռցար տեղը դնելու, եւ երբ վարժուհին դասարան
մտաւ, տեսաւ որ գիրքը հոն չէ. այն ատեն բարձր
ձայնով կ'ըսէ թէ՝ պէտք է յանցաւորը խոստովանի:
Քու ընկերուհիներդ առնելլդ տեսած են, բայց բարի
ըլլալնուն համար չեն ուզեր քեզի մատնանիշ ընել:
Դուն բան մը չես ըսեր ու նախամեծար կը սեպէս
թողուլ որ բոլոր ընկերներդ պատժուին քան թէ ը-
րած յանցանքը լոստովանիս:

Ահաւասիկ ասիկա շատ գէշ բան է: Քու խիղճդ-
քեզ հանգիստ պիտի չթողու, փոքրիկ աղջիկ, այնու-

հետեւ ամբողջ օրը տրտում տխուր եւ ամօթահար պիտի ըլլաս :

Պիտի զգասթէ ընկերներուդ համակրանքը կորաբնցոցիր, մանաւանդ պիտի զգասթէ այլ եւս բարի փոքրիկ աղջիկ մը չես, եւ ուրիշներուն կրել տուիր այն պատիժը որուն միայն դուն արժանի էիր : Երբ յանցանելի խոստվանիս, այն ժամանակ միայն հանգիս կ'ըլլաս :

Վայելուչ կեցուածք

Աշակերտուհիներ, դասարանին մէջ կանոնաւոր կեցէք : Նի փութութեամբ, թոյլ կերպով մի՛ մտենաք գրատախտակին վրայ գրելու : Մարմիննիդ, գլուխնիդ ու թեւերնիդ ուղիղ պահեցէք, ոտքելնիդ կանոնաւոր կերպով գրէք :

Որովհետեւ, գիտէք որ, ոչ մէկ բան աննշմարելի կը մնայ երբ հարկ կ'ըլլայ ուրիշին մեր նկատմամբ լաւ կարծիք մը կազմել տալ, եւ երբ կը փափաքինք մեր մարմոյն, մեր կերպարանքին արժանաւորութիւնը պահել, ինչ որ լաւ դաստիարակութեան նշան է :

Շատ անգամ ձեզ կը դատեն ձեր կերպարանքէն, կեցուածքի ձեւերէն : Եթէ մէկը ներկայանայ ձեզի՝ խառնուած մազերով աղտոտ ձեռքերով, անհոգ կերպով հագուած, վստահութիւն չներչնչեր : Նոյնպէս եթէ մենք անհոգ ըլլանք եւ ծոյլ կերպարանք ու ձեւեր առնենք, մենք մեզի յարգած չենք ըլլար եւ ապագային ալ այս կերպարանքներն ու ձեւերը պահելով, ուստի դժուարութիւն կը կրենք մեզի ուրիշներուն յարգել տալու :

Տեսրակներու եւ գրերու խնամք

Հինգ փարա, տասը փարա, քսան փարա, տետրակի մը կամ փոքր գիրքի մը գինն այս է : Անձ ըստակ մը չէ, բայց յաճախ պէտք է գնել գրքեր, տետրակներ, այսպէսով կը տեսնէք որ մեծ գումար մը կը կազմէ : Ծնողները կ'աշխատին որ ձեր կրթութեան համար պէտք եղածը գնեն, եւ կամ հասարակութիւնն է որ կը վճարէ այս առարկաներուն համար հաւաքուած տուրքերու ստակէն . միեւնոյն բանն է, որովհետեւ երկու պարագային մէջ ալ ուրիշները ստակով ձեր գովրցական պիտոյքները կը հոգան :

Ահա ասոր համար պէտք է խնամէք ձեր գրքերը թերթերու վրայ բիծ մի՛ ընէք ուր այնչափ գեղեցիկ բաններ տեղուած են, ձեր տետրակները մի պատռէք որ հարկ ըլլայ յաճախ նորոգել: Խորհեցէք որ այս ամենը շատերու աշխատութեան եւ գիտութեան արդիւնք են: Խորհեցէք նաեւ որ այս բոլոր առարկաները արժէք մը ունին եւ կը կորանցնեն, երբ մաքուր ու անհղծ չեն: Պետք չէ, ո՞ր եւ է բան մը զուր տեղը ոչնչացնել, բանի որ անկարող ենք վերածինել ինչ որ կը վնասենք :

Գտնուած բաները չիւրացնել

Դասարանի մէջ աշակերտոները շարունակ բան մը կը կորսնցնեն: Գրիչ մը գետինը կ'իյնայ, մատիտը մը մեղանին վրայ կը մոռցուի, փոքրիկ պատկեր մը գըրքի մը մէջէն կը սահի կ'իյնայ: Սակայն այս առար-

կաները բոլորովին կորսուած չեն. ուշ կամ կանուխ մէկը պիտի գտնէ զանոնք:

Այն աշակերտուհին որ այս տողերը կը կարդայ թերեւս դուն ըլլաս, որ գտած ես կորսուած գրիչը, մոռցուած մատիտը, վար սահած պատկերը. Ուստի յիշէ որ այս առարկաները քեզի չեն պատկանիր եւ դուն չես կրնար քեզի պահել: Եթէ առնես ու պահես՝ գողութիւն ըրած կ'ըլլաս, Թէ՛տ կարեւոր գողութիւն մը չէ, բայց թերեւս ուրիշ կարեւորներ ընելու սովորութիւնը տայ: Եթէ պահես այս առարկաները, քու խիդէդ անհանդիսա պիտի ըլլայ, անիկա քեզի պիտի ըսէ « գո՞ղ, գո՞ղ » եւ դու պիտի ամէնսա ասիկա լսելով: Խորհէ՛ նաեւ որ այդ բաները կորսնցնոլ ընկերիդ անիրաւութիւն ըրած կ'ըլլաս, կը փնտռեն եւ եւ երբ չգտնեն կը ցաւին: Յիշեցէֆ վերջապէս թէ անիրաւ կերպով ձեռք բերուած բաները, նեմարիս գոհունակութիւն չեն պատճառեր:

Փոքրիկ շատախօսութիւններ

— Օրիորդ, չե՞ս գիտեր, ըստ Աննիկ իր վարժուհին, եղբայրս վաղը կուգայ. հայրս չէր ուզեր որ արձակուրդ առնէ, մայրիկա կ'ուզէր, մինչեւ անդամ ասոր վրայ օր մը վիճարանեցան եւ մայլա ամբողջ օրը լացաւ, այն ատեն հայրս « Այո՛ » ըստւ: Բայց գիգիտէ՞ս, ճամբորդութիւնը սուզի կը նստի եւ հայրս մայրիկէս աւելի անտեսադէտ է. ուստի . . . » :

Վարժուհին, որու Աննիկ կը պատմէր այս պատմութիւնը, ընդհատեց « Լա՛ւ, լա՛ւ, Աննիկ, բնաւ պէտք չունիմ այդ բաները գիտնալու եւ դուն ալ բը-

նաւ պէտք չունիս անոնք պատմելու: Մորվեցէք ձեր տան մէջ անցածը ուրիշին չպատմել: Ծնողնիդ հաւանակարար շատ պիտի ցաւէին, Եթէ կասկածէին որ ձեր ընտանեկան գործերու մանրամասնութիւնները ուրիշներուն կը յայտնէք: Բարերախտաբար բան մը պիտի չըսկեմ անոնց, բայց Եթէ ես ալ ձեզի պէս ըլպիտի չըսկեմ իմանար որ հայրդ ու լայիր շուտով ամէն մարդ պիտի իմանար որ հայրդ ու մայրդ երբեմն իրարու հետ կը վիճին եւ մայրդ բաւական տնտեսագէտ չէ: Ասոնք այնպիսի բաներ են որ ուրիշին չեն վերաբերիր. լաւ է որ օտարները չը գիտնան » :

Շատ փոքրիկ աղջիկներ Աննիկին պէս կ'ընեն, եւ քիչերը գիտեն իրենց լեզուն կառավարել ու պէտք եղածին պէս խօսիլ: — Կ'ուզէք միշտ լաւ խօսիլ, քիչ խօսեցէք:


Երբ վարձուին բացակայ է

Առակ մը կայ, գիտէ՞ք, « Երբ կատուն տունը չէ՝ մկները պար կը խաղան » . այսինքն՝ երբ վարժուհին ներկայ չէ, աշակերտներն իրենց պարտականութիւնը չեն կատարեր եւ փոխանակ աշխատեկանութիւնը: Ինչո՞ւ համար անմիտ մկներուն նըմանիք՝ որ մէկ բանէ կը վախնան, կատուին տուն դառնալէն: Ուրեմն ձեր վարժուհին ձեր թշնամի՞ն է: Ո՛չ, դուք կը սորվիք որովհետեւ կը փափաքիք ուսնի. դուք հնաղանդ էք, որովհետեւ գիտէք որ առանց հնաղանդութեան ոչ մէկ յառաջադիմութիւնն պիտի ընէք: Գիտէք նաեւ որ՝ կատարեալ հնաղանդութիւնը, ինչպէս եւ կատարեալ բարեկամութիւնը

կը գործադրուի նոյն իսկ այն ժամանակ երբ ներկայ չեն այն անձերը որոց հետ կազուած են : Չեր վարժուհին վայրկեան մը դասարանէն հեռանալուն համար պէտք չէ որ մոռնաք գէպի ան ունեցած հնագանդութիւննիդ ու յարգանքնիդ : Վարժուեցիք հրնազանդի՝ սիրով եւ ձեզի պարտականութիւն սեպելով եւ չէ քէ վախնալով :

Աշխատութեան մէջ յարատեւութիւն

Երիտասարդութեան մէջ փոփոխութիւն եւ այլա-



գանութիւն կը սիրուի : Շարունակ մի եւ նոյն աշխատութիւնը ձեզ կը ձանձրացնէ , ձեր եռանդը կը

թուլնայ ու ձեր ճաշակը կը պակսի : Այսօր եռանդով լի էք . որովհետեւ նոր տետրակ մը առեր էք եւ կամ նոր ձեռագործ մը կ'սկսիք : Քանի մը օրէն յետոյ այդ տետրակը կամ այդ ձեռագործը այլ եւս ձետոյ չէն հետաքրքրել . դուք յարատեւութիւն չունիք :

Զանացէք ձեր աշխատութեան մէջ յարատեւել , առանց ասոր ոչ մի յառաջադիմութիւն կրնաք ընել որովհետեւ այսօր լաւ կ'աշխատիք , վաղը գէշ , եւ գէշ աշխատութիւնը կ'ոչնչացնէ լաւ աշխատութեան պատուղը :

Դպրոցական կեանքը պատկերն է ձեր ապագայ աւելի դժուար եւ ընդարձակ կեանքին : Կուցէ այն ժամանակ ալ այս օրուան պէս աշխատութիւններ պիտի ունենաք ընելու , պարտականութիւններ՝ կատարելու , տուն մը՝ հոգալու , ծնողներ՝ որոց պիտի նըստիրէք ձեր բոլոր խնամքը : Եթէ հիմա յարատեւութեանք չաշխատիք՝ յետոյ գէշ տանտիկիններ պիտի ըլլաք , որովհետեւ վարժութիւն չըրիք ձեր գործերը շարունակարար ընելու :

Ի՞նչ որ կ'ընես՝ լաւ ըրէ

« Լաւ ըրէ , ինչ որ կ'ընես » կ'ըսէ առած մը . եւ այս խօսքը որ գրատախտակին վրայ գրուած կը տեսնէ վարդուհին , կը խնդայ , որովհետեւ անոր իմաստը չի հասկնար . « — Օրին'րդ , ըստ վարժուհիին , այս ի՞նչ կը նշանակէ . Ինձի կը թուի թէ՝ մարդ լաւ կ'ընէ ինչ որ կ'ընէ » : Այն ատեն վարժուհին կը բացատրէ այս առածին նշանակութիւնը :

— Վարդուհի՝ ըստ անոր , երբ գրքէ բան մը

կ'օրինակես կամ ձերմակեղէն կ'արդուկես, արդոք լաւ կ'ընե՞ս: Երբ կար կը կարես եւ կամ բանի մը եզերքը կը դարձնես, արդեօք հակառակ կողմը լաւ կ'ընե՞ս. ինչ որ կ'ընես, լաւ կ'ընե՞ս. ո՛չ, միտքդ ուրիշ տեղ է, մատներդ ուրիշ, միտքդ ուրիշ բանով կ'զբաղի, մատներդ ուրիշ, ահա ասոր համար է որ



այն բանը չես ըներ, ինչ որ ընել կը ձեւացնես, կամ լաւ եւս է ըսել, կէս մը կ'ընես, գէշ կ'ընես:

Լաւ ըրէ . ինչ որ կ'ընես: Այսինքն խորհէ միայն ըրածիդ վրայ, ուրիշ բան մի՛ խորհիր: Զանք ըրէ գործդ ամբողջ եւ կատարեալ ընել:



Զբոսանիներու ժամանակ

Զբոսանքները ձեզի տրուած են աշխատութենէ հանդստանալու եւ մտքերնիդ ուրիշ բանով մը հանդարտեցնելու համար, որպէս զի աւելի թարմանաք եւ աւելի եւանդով վերակարգ ձեր գործը. Երբ դասի զանդակը հնչէ:

Զբոսանքներու ժամանակ պէտք է սրտանց ուրախանաք, նոյնպէս պէտք է բոլոր սրտով աշխատիք դասի ժամանակի:

Խղճամիտ լաւ աշակերտ մը այնչափ գոհ է, երբ իր պարտականութիւնը լաւ կատարեր է, եւ մեծ ուրախութեամբ կը վայելէ խաղի հաճոյքը: Պէտք չէ զոյդ զոյդ ծանրութեամբ քալել՝ փոխանակ խաղալու, անկիւններ փնտուել արտառոց բաներ խօսելու համար. պէտք չէ նաև նստիլ կարդալու կամ կարելու համար այն միջոցներուն, որ ձեզի տրուած են մարմնական մարզանքներ ընելու համար: Ամէնքդ միասին կատարեցէք ձեր զբոսանքը, անջատ խումբեր մի՛ կազմէք. բիրտ կերպով իրալ մի՛ հրմշտկէք, ձեր տըկար կամ խեղանդամ ընկերները մի՛ արհարմարհէք: Զբոսանին ժամանակ ինչպէս եւ կեանի ամբողջ ընթացքի մեջ, պէտք է լլամբ բարի, բաղր, սիրալիր եւ ազնիւ:

Զանասէր լլամբ ձեռարուեսներու մէջ

Սիրանոյշ կ'արհամարհէ ձեռագործը: Կ'ըսէ թէ երբ դպրոցէն ելլէ՛ շատ ժամանակ պիտի ունենայ

կարել, գուլպայ հիւսել, նշանագրեր դնել ողբուելու համար: Կ'ըսէ նաեւ թէ դպրոց կ'երթայ իր ուսման վկայականը պատրաստելու համար եւ թէ ծրագրին մէջ եղած դասերէն և պարտականութիւններէն աւելի կարեւոր բան չկայ:

Սիրանոյշ կը սիսալի, լաւ չխորհիր: Դպրոցին մէջ ինչ որ կ'ուսուցանեն՝ կարեւոր է եւ օգտակար: Ձեզի



տրուած ձեռագործի դասերը դպրոցէ ելլելէ վերջ ա՛լ պիտի չգտնէք: Երբէք ձեր մայրը ժամանակ պիտի չունենայ ձեր վարժուհին պէս ձեզի վարժեցնելու: Եւ խորհեցէք որ ձեռագործի վարժութիւնով է որ պիտի կրնաք փոքր եղած ժամանակնիդ իսկ ձեր ընտանիքին մեծ ծառայութիւններ ընել: Ձեր ասեղը պատուական միջոց մը պիտի ըլլայ ձեր մօրը օգնելու, որ միշտ աշխատութեամբ ըեռնաւորուած է.

կրնաք դուք ընել նորոգութիւնները որոնք զինք կը յոգնեցնեն եւ պիտի կրնաք անտեսել այն ստակը, որ պիտի վճարէք դործաւորուհիի մը՝ ձեր ըրածն ընել տալու համար: Սիրեցէք ձեռագուեստները, այսպէսով երբէք պիտի չձանձրանաք:

Ինչո՞ւ համար կ'աշխատին դպրոցին մէջ

- Մարիամ, ինչո՞ւ համար կ'աշխատիս:
- Մրցանակներ ստանալու համար:
- Իսկ դո՞ւ, Վարդուհի՞:
- Ծնողքիս հաճոյք պատճառելու համար:
- Դո՞ւ, Սիրանոյշ:
- Ծատ լաւ չգիտեմ թէ՝ ինչո՞ւ . . . թերեւս ծընողքիս եւ վարժուհիս հնազանդելու համար, որոնք կը փափաքին որ ես աշխատիմ:

Երեքդ ալ իրաւունքունիք, տղաքս, սակայն ձեզմէ ոչ մին ըստ բուն պատճառը, որուն համար ձեզի դպրոց կը դրկեն և դուք կ'աշխատիք: Միայն հնազանդելու, սիրելու կամ նմանելու համար չէ՝ որ աշխատելու էք: Դպրոց կուգան մասնաւորապես բան սորվելու, ուսանելու, աղնուանալու, կատարելագործուելու համար:

Ծատ լաւ է մօրմէն կամ վարժուհիէն ստանալիք մրցանակին վրայ խորհիլ, բայց աւելի լաւ է ինքնիրեն ըսել. Ուսանելով միտքս, հոգիս, նկարագիրս կը բարձրացնեմ. իմացականութիւնս, ծանօթութիւններս կ'ընդարձակեմ եւ կեանքի մէջ կրնամ լաւ տեղ մը բնել, պարտականութիւններս լաւագոյն կերպով կատարել եւ ուրիշներուն աւելի բարիք ընել:

ՄԵՐ դպրոցական ընկերները չմոռնանք

Պղտիկ աղջիկներ , դուք չէք կրնար երեւակայել և ոչ ալ կրնաք գիտնալ , թէ կեանքը ձեզի ի՞նչ վերապահած է : Զեր մէջէն ոմանք թերեւս բարձր դիրք մը ունենան , ոմանք համեստ դրութեան մէջ մնան եւ ոմանք ալ աննշան կեանք մը ունենան՝ թշուառ եւ տխուր :

Եթէ զպրոցական տարիներնուդ մէջ իրար սիրած էք , միշտ ուրախութիւն պիտի զգաք զիրար կրկին տեսնելով եւ կրկին իրար գտնելով որչափ ալ ձեր կենցաղավարութիւնը տարբեր ըլլայ : Ուրախութեամբ պիտի յիշէք ձեր երիտասարդութեան օրերը , ձեզի ուրախութիւն պիտի պատճառէ իրարու փոխադարձ ծառայելը , օգնելը , ինչպէս կ'ընեն մէկ ընտանիքի անդամները :

Զեր մէջէն անոնք , որ երջանիկ պիտի ըլլան , ամէն կերպով պիտի աշխատին նեղութեան մէջ գտնըսուողին օդնել , սիօփել ու մսիթարել զայն : Հաստատ միտքերնիդ դրէք զիրար չմոռնալ և ձեր միջեւ բարեկամութեան եւ անձնուիրութեան կապ մը կազմել , որ ոչ մի բանով խզուի :



Գ. — ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ



Մենք միայն մեզի համար չենք աշխատիր

Դպրոցական աշակերտուհի մը դեղձ մը ուտելէ ետք կուտը նետեց ճամբուն վրայ : Ծերունի մը առաւ զայն եւ մօտակոյ դաշտին մէջ տնկեց : Փոքրիկ աղջիկը սկսաւ խնդալ ըսելով . « Ի՞նչ զաղափար , խեղճ ծերունին պիտի մեռնի գեղձին բուսնելին առաջ » :

Շատ տարիներ անցան : Ծերունին մեռաւ : Այն աշակերտուհին , որ շատ տարիներէ ի վեր այդ քաղաքէն մեկնած էր՝ ամուսնացած վերադարձաւ : Ամառուան մէջ օր մը այն ճամբէն կ'անցնէր , շատ ծարացած : Երիտասարդ մը տեսաւ , որ անոր մօտիկը եղած ծառէ մը դեղձեր կը հաւաքէր : Հատ մը ինդրեց զովանալու համար : Երիտասարդը շուտով կա-

տարեց իննդիրքը անոր ըսելով: « Այս ծառը իմ պապու տնկած է, որ փոքրիկ աղջկան մը նետած կուտը առած է եղեր »: Այն ատեն կինը կը յիշէ իր պատմութիւնը, և մտքէն կ'օրհնէ ծերունին, որ նախատեսած էր չէ թէ ինքզինքը՝ հապա իրմէ ետքը եկողներ :

Երբ իրականապես բարի ենք, աւելի ուրիշներուն համար կը մտանենք քան թէ մեզ, եոյն իսկ փուր պարզաներու մեջ :

Մարդկային Ընկերութիւնը

Երբեմն գուք ճեզի հարցուցած էք, թէ ինչո՞ւ համար եւ ինչպէ՞ս կազմուած է գիւղը, քաղաքը, ուր կը բնակիք. թէ ինչո՞ւ համար այս տուները խմբուած են, ինչո՞ւ համար ամենուն աւելի յարմար չէ երեւցած դրացիներէ հեռանալ :

Որովհետեւ մարդիկ բոլորն ալ իրարու պէտք ունին: Իւրաքանչիւր ոք ամենուն օգտակար արհեստ մը ունի :

Ահաւասիկ մարդկային ընկերութիւնը, ահա թէ ինչո՞ւ համար կազմուած է և թէ ինչո՞ւ համար շինուած են քաղաքներն ու գիւղերը:

Փոքրիկ աղջիկներ, գպրոցն, ուր կը գտնուիք՝ ընկերութեան պատկերն է: Հոն թերեւս տարբեր կերպով կ'աշխատիք, բայց մի եւ նոյն նպատակով կը գաստիարակուիք, կ'ուսանիք, որպէս զի վերջը իրարու օգնէք աւելի գիւրութեամբ: Դպրոցական կեանքը՝ ընկերական կեանքի նախափորձն է: Հոն կը պատրաստուիք կատարելու ձեր ապագայ դերը, լուրջ կին եւ տնարար ընտանիքի կատարեալ մայր մը ըլլալու:

Մարդկային Ընկերութեան բարերարութիւնը



Փոքրիկ աղջիկ, շատ համով կը գտնես այն հացի կտորն որ մայլոդ տուած է քեզ եւ ախորժակով կ'ու-

տես : Տաք հագուստ մը շատ յարմար կը գտնեմ : Ճըմ-
րան համար . յարդէ մեծ գլխարկ մը՝ արեւին դէմ և
կը կնակօշիկ՝ անձեւոտ օրերու համար : Կ'ըսես թէ
հաճելի է գիշերը լուսաւորուած, մաքուր եւ լաւ պահ-
ուած փողոցներու մէջ քալելը : Որո՞ւ կը պարտիս
այս բոլորը : Ընկերութեան . այսինքն անհատներու
խումբին, որոնք միացած են իրարու օգնելու համար :
Թո՞ղ երկրագործն այլ եւս չմշակէ երկիրը , ո՞չ ալ
ցորեն ցանէ , դուք հաց պիտի չունենաք . թո՞ղ ոչ-
խար չպահեն, այլ եւս բուրդ պիտի չունենաք , ո՞չ
վերարկու եւ ոչ ալ ուրիշ զգեստ : Դարձեալ ընկերու-
թեան կը պարտիս սովորած բոլոր լաւ բաներդ, որոնք
միտքդ կը մշակեն եւ սիրուդ կը կազմակերպեն . Դուն
կրնաս ապրիլ միայն մարդկային ընկերութեան մէջ
և ընկերութեամբ : Խորհէ քու նմաններուդ օգտակար
ըլլալ քու գործունէութեամբդ, եւ լաւ ընթացքովդ :

ՍԵՎԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱԺԽԱՏՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՀԸ

— Մարիամ, ի՞նչ ունիս :

— Օչ, Տիկին, շատ քիչ բան, իմ գրքերս, տետ-
րակներս, մատնոցս, ասեղներս եւ եթէ աւելի ճիշդն
ըսեմ, գիտեմ որ այս ամէնը իմս չէ , այլ ճնողքիս,
որոնք իրենց աշխատութեան ստակովը գնած են :

— Սակայն, Մարիամ, եթէ մատնոցդ, ընթերցա-
նութեան գիրքդ գողնային, շատ պիտի վշտանայիր,
թէպէտ եւ դու գնած ըլլայիր քու խնայած դրա-
մովդ :

— Ոչ, այո՛, Տիկին :

— Ուրեմն ի՞նչ պիտի ըլլայիր . եթէ վերջը՝ շատ

տորիներ աշխատէիր ու աշխատէիր , խնայողութեամբ
ապրէիր : Որչա՞փ պիտի վշտանայիր եթէ չարա-
գործ մը առնել կողոպտէր կամ պարտէզիդ ծառերը
արմատախիլ ընէր ու բանջարեղէններդ կորպէր :

Ուրիշներու սեփականութիւնը նուիրական է : Ան
որ իր աշխատութիւնով բան մը ձեռք բերաւ, պէտք
է խաղաղութեամբ զայն վայելէ : Ոչ ոք իրաւունք
ունի անոր դպչելու :

Ա.Ա.Կ. մարդու հանգատութիւնը յարգենի

Փո՞քրիկ աղջիկ, աւելորդ է ըսել թէ ազատ ես
բարիք կամ չարիք ընելու : Ատիկա քու խիզճդ
կ'ըսէ քեզի : Թերեւս չգիտես թէ աջակողմի ըն-
կերդ, ինչպէս եւ ճախակողմինդ , նոյնպէս նաեւ միւս
ընկերներդ, քեզի պէս ազատ են :

Ճետեւաբար եթէ դուն կարող ես նստարանը
շարժել եւ ընկերներդ նեղացնել՝ երբ անոնք կը
գրեն, անոնք ալ կարող են քեզի պէս ըսել եւ քեզ
նեղացնել երբ դու կը գրես : Բայց դուն այս բանը
պիտի չընես, ոչ ալ անոնք, լրովիչետեւ ամէնքդ
ալ գիտէք թէ պէտք է ուրիշին հանգստութիւնը
յարգել : Ընկերներդ կ'ուզեն գրել զանոնք մի՛նեղա-
ցըներ : Կ'ուզեն դասերնին սորվիլ, աղմուկ մի՛ հաներ,
հետերնին մի՛ խօսիր : Նոյնպէս երբ դուն ուզես գրել
կամ դասալ սորվիլ՝ անոնք ալ բան մը պիտի չընեն
քեզի անհանգիստ ընելու համար, որովհետեւ քու
հանգստութիւնդ սահմանուած է ուրիշներուն հան-
գստութիւնովը : Դուն իրաւունք ունիս քու հանգստու-
թիւնդ գործածել, բայց այն պայմանով որ քովի տը-
ղաքներու հանգստութիւնը չխանգարես :

Հոգի մը ունիմ

Հոգի մը ունիմ. ասիկա կը նշանակէ թէ հաստատապէս գիտեմ որ աշխարհի վրայ եմ բարիք գործելու, առաքինի ըլլալու, զիս շրջապատողները երջանկացնելու. համար :

Հոգի մը ունիմ. ասիկադարձեալ կը նշանակէ թէ ես անասուններէն բարձր եմ, որովհետեւ պարտականութիւններ ունիմ կատարելու եւ անոնք չունին, որովհետեւ գիտեմ թէ ամէն ըրածիս պատասխանատու եմ եւ թէ անոնք պատասխանատու չեն :

Գիտեմ որ հոգի մը ունիմ, եւ տեսած նիւթական բաններուս պէս չեմ: Անոնք երբ քանդուին՝ անոնցմէ բան մը չմնար :

Ես հոգի մը ունիմ, հանճարեղ եւ անտեսանելի՝ զոր ոչ մէկ բան կրնայ եղծանել, որովհետեւ նիւթէ շինուած չէ ան :

Գիտեմ որ հոգի մը ունիմ, կենդանիներու նման չեմ. պարտականութիւններ ունիմ եւ կ'ուզեմ կատարել, որպէս զի ինքինին կատարելագործեմ :

Խօսող ձայնը

Անցեալ օր Վարդուհի իրենց դրացի հայր Վահանին մրգաստանին քովէն կ'անցնէր: Խնձորներ կախուած էին ծառէ մը, որմէ խեղճ մարդը մրգողի կը շինէր ամէն տարի: Վարդուհի անմիջապէս ձեռքը երկնցուց երկու երեք հատ քաղեց ամենալաւերէն:

Մարդ տեսած չէր զինքը, շուտ մը անկէ հեռա-

նալով ճամբան շարունակեց: Վարդուհի ձայն մը կը լսէր, որ իրեն կ'լսէր. « Գո՛ղ, գո՛ղ »: Քովը մարդ չկար. Վարդուհի ատոր վրայ վստահ էր, բայց եւ այնպէս ամբողջ ճամբուն երկայնութեանը կը լսուէր նոյն ձայնը. « Գո՛ղ, գո՛ղ »:

Աղջիկը տուն մտաւ. վազեց իր սենեակը, որպէս զի ուտէ խնձորները առանց մէկէ մը տեսնուելու, բայց, ինչպէս մրգաստանին քով, ճամբուն վրայ, իր սենեկին մէջ ալ, դարձեալ կը լսէր սոյն երկու բառերը. « Գո՛ղ, գո՛ղ », և Վարդուհի այն խնձորներն ուտելու քաջութիւնը չունեցաւ: Վերադարձաւ այն տեղը ուրկէ քաղած էր, նետեց զանոնք խնձորենիին տակ՝ յուսալով թէ հայր Վահան կը տեսնէ ու կը ժողուէ, եւ վերադարձաւ իր եկած ճամբով: Զայնը, այսինքն իր խղձին ձայնը, այլ եւս չէր աղաղակեր այն երկու բառերը, որ իրեն այնչափ նեղութիւն պատճառած էին: Բայց սրտին խորէն պըզտիկ աղջիկը զեռ անհանդատութիւն կ'զգար, որովհետեւ նոյն իսկ սրբագրուած զէս գործ մը տիրուբեան հետք կը քողու:

Լաւ խորհրդատու մը

Օր մը պզտիկ աղջիկ մը շատ շփոթած էր: Դասպանին մէջ, քովը քիչ մը ծոյլ բարեկամուհի մը ունէր որ դասը չգիտնալով պիտի պատժուէր: Պզտիկ աղջիկը կը փափաքէր անոր հարցուած ժամանակ ետեւէն ըսել: Բայց սկսաւ խորէիլ եւ իր խղձին հարցնել ըսելով. « Պէտք է ետեւէն ըսել »: խիղճը իրեն պատասխանեց. « Ո՞չ, պէտք չէ ըսել, որովհետեւ արդիլուած է տափկա, եւ քու առաջին պարտականու-

թիւնդ է հնազանդիլ եւ ոչ թէ բարեկամիդ հաճելի ըլլալ վարժուհին խաբելով »։ Եւ աղջիկը հնազանդեցաւ իր խղճին թէպէտ եւ սիրտը լեցուած էր, որովհետեւ իր բարեկամը յանդիմաննեցին եւ պատժեցին։

Տղա՛ք, երբ կը հակամիտիք ընել գործ մը որ ձեզի վարանում կը պատճառէ, ձեր խղճին հարցուցէք։ Դժուար չէ ատիկա։ Վայրկեան մը խորհեցէք եւ ինքնիրեննուդ ըսէք. «Պէտք է ըսեմ ասիկա»։ Զեր խիզդը ձեզի պիտի պատասխանէ։ Լսեցէք անոր եւ հնազանդեցէ։

Սորվեցէք ձեր պարտականութիւնը նախնալ

Կը կարծէք թէ կատարելապէս գիտէք, ի՞նչ որ ձեզի ներելի է կամինչ որ արդիլուած է։ Կը սխալիք դուք, դեռ ամէն բան չգիտէք, պէտք է լաւ սորդիք ձեր պարտականութիւնը եւ լաւ ճանչնաք։

Ձեր պարտականութիւնը լաւ չճանշնալնուդ համար է որ շատ անդամ կատարած էք այն պակառութիւնը որուն համար ներովութիւն խնդրած էք ըսելով. « Զգիտէի, եթէ գիտոցած չըլլայի . . . »։ Լաւ ուրեմն, պէտք է գիտնաք թէ ի՞նչ բան կարելի է ընել, ի՞նչ բանէ պէտք է զգուշանալ, որպէս զի բարի եւ պատուալոր աղջիկ մը ըլլաք Ասոր համար ուշադրութեամբ լսեցէք ձեր վարժուհիին խրատներն ու խորհուրդները. ուշադրութեամբ կարդացէք այս գրքին խրատները, որ ձեզի կը սորվեցունեն ձեր պարտականութիւնները։

Զանացէք ձեր պարտականութիւնները լաւ ճանչնալ։

Թիբեւամութիւնը պարտականութեան
թենամի է

Ահաւասիկ խելացի եւ բարի տղայ մը, որ լաւ սիրտ ունի, կատարելապէս գիտէ թէ ի՞նչ պիտի ընէ եւ ի՞նչ բանէ պիտի զգուշանայ, բայց միշտ պակառութիւններ կ'ընէ։ Ինչո՞ւ համար. — Որովհետեւ թեթեւամիտ է։

Իր պարտականութիւնն է դասերը սկսելէն քանի մը վայրկեան առաջ դպրոցը գտնուիլ. բայց կը մոռնայ ժամացոյցը նայիլ եւ ուշ կը մնայ։

Միտքը չպահեր տուն տանիլ այն գիրքերը որոնք պէտք են դասերը պատրաստելու համար։ Զեռագործը տունը կը մոռնայ։ Տրուած պարտականութիւններէն տարբեր պարտականութիւն մը կը կատարէ, և ասոր պատրաստութեան ժամանակ ինչ որ պէտք է ան չխորհիր, ուրիշ բանի վրայ կը մտածէ։

Մայրը հիւանդ է, կը մոռնայ նշանակուած ժամուն դեղ տալ։ Իր դրացին ծանր բեռի մը պատճառ շփոթած մնացեր է, քովէն կ'անցնի առանց տեսնելու եւ անոր օգնելու։

Կը տեսնէք որ թեթեւամութիւնը ի՞նչպէս թըշնամի է պարտականութեան։ Կը տեսնէք. թէ ի՞նչպէս արգելք կ'ըլլայ այս տղուն պէտք եղածն ընելու. որպէս զի իր անձն օգտակար ըլլայ թէ՛ ուրիշներուն լսեցէք իրեն համար. Յաճախ խրովի ըսելով. « Զեմեւ թէ՛ իրեն համար, Յաճախ խրովի ըսելով. « Զեմեռ ուզեր թեթեւամիտ ըլլալ »։ Վերջապէս կրնայ մարդ թեթեւամիտ ըլլալ։

Պարտականութիւնը կատարելուն մէջ
արժանիք կայ

Վարդուհի կ'ըսէ. « Դպրոց երթալը զիս կը ձանձրացնէ » : Մայրը կը պատասխանէ « Պէտք է երթալ » :

Վարդուհի կ'ըսէ. « Բան մը գտայ, ինծի պիտի պահեմ » : Մայրը անոր կ'ըսէ. « Ոչ, պէտք է տէրոջը վերադարձնես » :

Վարդուհի անհամբեր է, անշնորհք պատասխան մը պիտի տայ հօրը, որ հրաման մը կուտայ իրեն : Մայրը անոր կ'ըսէ. « Լոէ, Վարդուհի, պէտք է հնագանդիս » :

Դպրոց երթալ, գտած առարկան իրեն չպահել, հնազանդիլ հօրը, չպատասխանել անամօթարար, ահա Վարդուհիի մի քանի պարտականութիւնները, ահա ինչ կը նշանակէ պարտականութիւն :

Վարդուհի գեռ ուրիշ շատ պարտականութիւններ ունի, զոր գուք ալ ունիք : Այս բոլոր պարտականութիւնները կատարելը հաճելի չէ, որովհետեւ մեր ձաշակին, մեր հակումներուն, մեր գաղափարին հակառակ են : Եւ գլխաւորաբար անոր համար, որ ձանձրանալի, նեղացուցիչ են եւ թէ աւելի ինամքով պէտք է զանոնք կատարել : Որչափ պարտականութիւն մը դժուար է, այնչափ աւելի յարգի է և զայն կատարելն աւելի արժանիք կ'ունենայ :

Երշանկութեան առաջին գաղտնիքը՝ Մահուր խիղն ունենալ

Փոքրիկ աղջիկ, այն ձայնը, որ քեզ կը խօսի, կը յանդիմանէ երբ գէշ բան մը ընես՝ խիղճդ է : Դարձ-

եալ խիղճդ է, որ քեզ կը քաջալերէ եւ կը չնորհաւորէ երբ բարի գործ մը կ'ընես ու խելացի կ'ըլլաս : Քու խիղճդ՝ քու հոգիդ է, զոր Աստուած ստեղծեր է բարի գործերու համար եւ կը տիրի երր չար գործես : Բարիին համար ստեղծած է խիղճդ, որովհետեւ այնշափ գոհ եւ ուրախ կ'ընէ քեզ երբ բարի գործես, երբ պարտականութիւնդ լաւ կատարես, երբ մէկուն ծառայութիւն մը՝ օգնութիւն մ'ըննս, որու ան պէտք ունի : Կ'ուզե՞ս միշտ երջանիկ ըլլալ : Լսէ, մօտեցիր հոս, շատ մօտիկ, քեզի երջանկութեան գաղտնիքը պիտի տամ, երբէք բան մի՛ ըներ որ խիղճդ քեզ յանդիմանէ, եւ ըրէ ինչ որ քեզ կը յանձնարարէ : Ոչ հարստութիւնը, ոչ լաւ դիրքը, ոչ գեղեցկութիւնը երջանիկ կ'ընէ մարդ : Մահուր խիղճը կուտայ երջանկութիւն :

Երշանկութեան երկրորդ գաղտնիքը՝
Ուրիշներուն անձնուեր լինի

Մարիամ դպրոց կ'երթայ, ճամբուն վրայ կը հանդիպի խեղճ կոյր կնկան մը, որ չէր համարձակեր փողոցին միւս կողմն անցնիլ եւ Մարիամ անոր կ'օգնէ անցնելու համար :

Դպրոցին մէջ Մարիամ լուռ կը կենայ, ուշադըռութեամբ կը լսէ վարժուհիին տուած բացատրութիւնները : Զեռագործի դասի ժամանակ իր փոքր եղբօր բուրդէ գուլպաները կը նորոգէ . որովհետեւ իր մայրը շատ զբաղած ըլլալուն պիտի չկրնար ան օրը բոգել, եւ թերեւս տղան պիտի նեղուէր ցուրտէն : Դպրոցէն վերադառնալով Մարիամ կ'օգնէ մօրը առ-

տընին գործերու մէջ . սեղանը կը պատրաստէ . կերակուրին կը հակէ՝ եւ ամանները կարգի կը դնէ :

Դիշերը , Մարիամ պառկելէ առաջ կը բացազանչէ . « Ես շատ գոհ եմ » :

Ի՞նչ բան է որ Մարիամին այսչափ գոհունակութիւն կը պատճառէ :

Դպրոցի ճամբուն վրայ գա՞նձ մը գտած է , գեղեցիկ ընծա՞յ մը ստացած է , իրեն գովասա՞նք մը ըրած են , զրօսա՞նք մը ըրած է : Ո՞չ , ասոնց մէ ո՞չ մին : Մարիամ կատարած է իր բոլոր պարտականութիւնները : Ուրիշներուն անձնուէր եղած է : Եւ ասիկայ իր սիրու ուրախութեամբ լեցուցեր է : Ուրիշներուն համար ինքիններ մոռեալ՝ ահա երջանկութեան մէկ ուրիշ գաղտնիքը :

Երջանկութեան երրորդ գաղտնիքը Ունեցածովը գոհաննալ

Կը գանգատիս , փոքրիկ աղջիկ , անիրաւ ես :

Դուն առո՞ղջ ես : — Այո՛ : — Լաւ ուրեմն , նայէ եւ ցաւէ հիւանդներուն վրայ :

Մարմինդ ուղի՞ղ է , լաւ աչքեր ունի՞ս , թեթեւաշարժ սրունքներ ունի՞ս : — Այո՛ : — Լաւ ուրեմն նայէ եւ տե՛ս խեղճ խեղանդամները :

Լաւ ախորժակ ունի՞ս , հաճութեամբ կ'ուտե՞ս տանըդ մէջ պատրաստուած պարզ կերակուրը : — Այո՛ : — Լաւ ուրեմն , նայէ անոնք որ պատառ մը չոր հաց չունին իրենց անօթութիւնը մեղմելու համար :

Ունեակ մը ունի՞ս ուր կը բնակիս , անկողին մը՝ ուր քնանաս , հագուստնե՞ր՝ օդի փոփոխութեան դէմ պաշտպաննելու : — Այո՛ , — Լաւ ուրեմն նայէ այն

դժբախտներուն , որ ոչ ապաստանարան ունին եւ ոչ ալ հագուստ :

Հայր մը ունի՞ս , մայր մը . եղբայրներ , ընտանի՞ք մը սիրելու և անկէ սիրուելու համար : — Այո : — Լաւ ուրեմն , նայէ անոնց , որ ամէնքը կորուսած են , որ կեանքի մէջ մինակ են , առանց սիրոյ եւ առանց գուրգուրանքի :

Տղայ շուրջդ նայէ , քեզմէ վա՛ր նայէ , տե՛ս թէ որքչափ թշուառներ կան : Մի՛ գանգատիր , այլ ցաւէ անոնց վրայ , եւ ջանա՛ անոնց օգնել :

Գիտցիր Աստուծոյ տուած ֆիշովը երջանիք ըլլալ :

Երջանկութեան չորրորդ գաղտնիքը Բնութիւնը

Տղա՛յ , բնութեան նայէ , տե՛ս թէ ինչպէս գեղեցիկ է գարունը՝ իր անուշ կապոյտ երկինքովը . իր փափուկ կանանչովը եւ հազարաւոր ծաղիկներովը զոր դաշտին մէջէն կը քաղես :

Տե՛ս , թէ ի՞նչպէս հրապուրիչ է ամառը իր ոսկեգոյն ցորեններով , իր բարձր խոտերով , վարդենիներուն վրայ բացուած վարդերով եւ անուշաբոյր հոտերովը որ իրիկունները երկրէն կը բարձրանայ :

Տե՛ս , թէ ի՞նչպէս հարուստ է աշունը իր պտուղներով , որոնց տակ ծառերու ճիւղերը կը ճկին , ոսկեներով , պղնձագոյն յակնթագոյն տերեւներովը , որով գոյն , պղնձագոյն յակնթագոյն տերեւներովը , որով անտառները զարդարուած են :

Տե՛ս թէ ի՞նչպէս արգահատելի եւ տխուը է ձմեռը , ճիւնով կը ճերմիկ դաշտը , եղեամը որ կը փայլի մերկացած ճիւղերուն վրայ եւ տժգոյն արեւը , որ հազիւ կը թափանձէ մառախուղի քողը :

Նայէ՛ բնութեան . բայց նայած ատեն փորձէ հասկընալ : Ո՞վ ստեղծեր է այսպէս : Ո՞վ ստեղծեր է երկինքը աստղերով լի : Ո՞վ ստեղծեր է այս երկիրը մարդիկներով , կենդանիներով եւ տունկերով լի : Վայելէ այս տեսարանը , խորհէ այս մեծ հրաշալիքին վրայ . հիացիր բոլոր այս գեղեցկութեան վրայ : Դու հոգիիդ մէջ շատ քաղցր բանի մը արթննալը պիտի զգաս եւ անով պիտի ուրախանաս : Սիրել բնուրիւնը , հանուրեամբ անոր նայիլ , դարձեալ երջանկուրեան գաղտնիք մ'կ :


Երջանկուրեան նինգերրարդ գաղտնիքը
Ընթերցանուրիւն սիրել

Չես կրնար երեւակայել , փոքրիկ աղջիկ որ պիտի գայ օր մը , երբ մազերդ ճերմիկն , պիտի ծերանաս , խորշոմիս եւ տգեղնաս : Չես կրնար հաւատալ թէ պիտի գայ վայրկեան մը , որ պիտի չկրնաս վազել , ցատկել , զրօսնուլ , մանաւանդ չես կրնար երեւակայել , որ պիտի գայ ժամանակ մը երբոր դու մինակ մնաս կեանքի մէջ մեկուսած , որովհետեւ ծընողներդ , բարեկամներդ անհետացած պիտի ըլլան : Այն ատեն ի՞նչ պիտի ընես զքեզ զրօսցնելու համար , դեռ միտքդ սնուցանելու եւ վիշտերդ մոռնաւու համար :

Պիտի կարդաս . պիտի կարդաս կրթիչ եւ հաճելի բաներ : Պիտի հետաքրքուիս գիտուններուն գիւտերովը , օգտակար հնարքներովը , որ պիտի երեւակայեն այն ատենուան իմաստութեամբ լի երիտասարդները :

Դու պիտի կարդաս գիրք գրելու ձիրք ունեցող-ներուն գրուածները . այնպիսի բաներ , որ կը խընդացնեն , կը լացնեն եւ անուշ կերպով սիրա կը յուղեն : Երբէք պիտի չձանձրանաս եւ դեռ երջանիկ պիտի ըլլաս թէպէտ' ծեր , տկար եւ տգէղ , որովհետեւ բովի միւս բարեկամ մը պիտի ունենաս , որ ինչ գիշմիւս հաւատարիմ պիտի ըլլայ , այն է յաւ զիրք մը :





Դ. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԱՆՁԻՆ ՀԱՆԴԵՐ

Ուսանիլ պարտաւոր ես

Արդեօք միայն հնագանդա՞ծ ըլլալու համար է որ
պէտք է բան սորվինք: Ո՞չ, որովհետեւ եթէ այդ-
պէս ըլլար, այս պարտականութիւնը միայն երիտա-
սարդութեան ժամանակ պիտի ունենայինք, այ-

սինքն այն տարիքին ուր պարտաւոր էինք հնագան-
գիլ: Բայց այդ պարտականութիւնը ամբողջ կեանքի
մէջ կը տեւէ: Ինչո՞ւ համար ուսանելու, կրթուելու
պարտականութիւնը ունինք որովհետեւ հոգի մը ու-
նինք մշակելու, տմէն կերպով ազնուացնելու եւ կըր-
թութիւնն ու ուսումը ամէն բանէ աւելի կարեւոր են:
Բան սորվելու, կրթուելու պարտականութիւնը ու-
նինք, որովհետեւ ասոնք մեզի գիւրութիւն, միջոց
կրտսան մեր շուրջը եղաղներուն ծառայութիւն մա-
տուցանելու: Բարիք ընել խնասութեամբ եւ խել-
քով, օգնելու անոնց՝ որ շփոթութեան մէջ են, հայ-
թայթելով անոնց այն ծանօթութիւնները զոր չեն
գիտեր, որուն պէտք ունին եւ զոր ուսումը կուտայ.
ահա՛ ուսման եւ կրթութեան գլխաւոր արժանիքը:
Ամենեն մեծ զիտուններն անոնք են որ մարդկային եր-
շանկութեան համար օգտակար զիւտեր կ'ընեն:

Օգտակար հունս մը եւ վնասակար հունս մը

Մարգարիտ իր փոքրիկ պարտէզին ածուին մէջ
քանի մը հունտեր ցանեց: Ի՞նչ պիտի տան այդ
հունտերը: Մարգարիտ չգիտեր:
Ահա օր մը հունտերը սկսան ծլիլ. հազարաւոր
տեղեր փոքրիկ կանաչ կէտեր կ'երեւան: Շուտով հո-
տած ծածկուեցաւ կարծը խոտելով, որոնց տերե-
ղը ները իրարու նման չէին. ցօղունները կը մեծնան,
ոմանք բանջարեղէնի լաւ խոտեր են, ոմանք ալ
հասարակ խոտեր՝ որ ամէն տեղ կը բուսնին, բանի մը
չեն գործածուիր եւ օգտակար տունկերուն աճմանը
կը վնասեն: Մարգարիտ ասիկա նշանակով կը քաշէ,

հեռուն կը նետէ անօգուտ խոտերը եւ կրցածին չափ լաւ կը խնամէ միւսները զոր մայրը պիտի դործածէ ընտանիքին սնունդին համար :

Տղա՛ք, մենք ամէնքս ալ այն հունտերէն ենք զոր Աստուած ցանած է տիեզերքի ընդարձակ դաշտին մէջ : Մեզի կը պատկանի անօգուտ խոտ ըլլալ՝ զոր ամէն ոք կ'արհամարհէ, որովհետեւ օգուտ մը չունենար : Օգտակար տունկին պէս ըլլանք և բարիք դործենք : Մեր շուրջը եղողներուն տանք մեր լաւ յատկութիւններուն ծաղիկները եւ սրտին պտուղները : Ոիրալիր եւ բարի ըլլանք :

Գիտցիր գաղտնիք մը պահել

Փոքրիկ աղջիկ, դու շատ պղտիկ ես հասկնալու համար գաղտնիք մը պահելու կալեւորութիւնը, ասոր համար է որ լուրջ բան մը քեզի չեն վստահիր, որովհետեւ առանց ուղելու, նոյն իսկ առանց նշմարելու կլնաս ըսել ուրիշներու ինչ որ պէտք չէր գիտնային :

Բայց երբեմն կը պատահի որ դիպուածով ուրիշին գաղտնիքը կ'իմանաս կամ կը տեսնես առանց ուզելու : Գիտցիր լուռ կենալ, բան մի՛ ըսեր տեսածիդ կամ լսածիդ վրայ : « Ատիկա շատ դժուար է » կ'ըսես : — Այո՛, շատ դժուար է քու տարիքդ տղու մը համար, բայց դուն կրնաս ընել ատիկա եթէ ուզես, Ամէն անգամ որ շատ հակամէտ ես խօսելու, գնա՛մօրդ բաէ . միմիայն անոր, կը լսե՞ս . ո՛չ եղբայրներուդ, ո՛չ քոյրերուդ, ո՛չ բարեկամներուդ բան մի ըսեր :

Ստուգիւ, խիստ լաւ բան է լոել գիտնալը . կ'ըս-

ուի թէ այս շատ հաղուադէպ բան է : Յիշէ թէ ով որ ուրիշին գաղտնիքը պահել չգիտեր, իրենն ալ չպիտի կրնայ պահել եւ օր մը պիտի պատժուի :

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ըսէ

Զապէլ գաւաթ մը կոտրեց, զոր մայրը շատ կը սիրէր, — Ո՞վ կոտրեց ասիկա, հարցուց մայրը . գո՞ւն ըրիր, Զապէլ : Ան վայրկեան մը վարանելէ ետքը ճիգ մը կ'ընէ իր վրայ :

— Այո, մայրիկ, ես կոտրեցի, կ'ըսէ :

Մայրը կը նայի Զապէլին . անոր կարմրութենէն կը հասկնայ որ աղջիկը ճիգ ըրած էր : Մօտը կը կանչէ եւ կ'ըսէ անոր :

— Սիրելի՛ աղջիկս, ճշմարտութիւնն ըսելուդ համար մեծ գովեստ մը պիտի չընեմ քեզի, որովհետեւ պէտք է միշտ ճշմարտութիւնն ըսել եւ դուն պարտականութիւնդ կատարեցիր :

Միայն թէ՝ կը գովեմ քեզ որ ինքզինքիդ յաղթեցիր սուստ չխօսելու համար, որովհետեւ յայտնի կը տեսնէի թէ կը վարանէիր : կը տեսնե՞ս թէ որչափ օդտակար է ճշմարտութիւնը ըսելդ : Եթէ դուն չը պատասխանէիր « Ես եմ », ուրիշ մէկը պիտի դատապարտէի եւ պիտի կարծէի թէ՝ « Ո՛չ » պատասխանէիր « Ես եմ » , ուրիշ մէկը պիտի դատապարտէի եւ պիտի կարծէի թէ՝ « Ո՛չ » պատասխանէլով կը ստէ ան : Անկեղծ եղիր եւ նեմարտութիւնը իսանելով կը ստէ ան : Անկեղծ եղիր եւ նեմարտութիւնը լարացնէր :

Սուտը մեզ կ'սորնացնէ

Երբեմն կ'ըսուի . « Անիկա որ սովորաբար կը ստէ եթէ օր մը ճշմարտութիւնն ալ ըսէ . չեն հաւատաբ» : Շատ անգամ մեծ նեղութեան եւ ձանձրոյթի կը հանդիպի մարդ ստելով , ուստի բնաւ պէտք չէ ստել : — Բայց միայն ասոր համար չէ որ պէտք է ճշմարտութիւնն ըսել :

Այս պատճառը շատ անձնասիրական է . ուրիշ աւելի ազնիւ պատճառ մը կայ , ան ալ սա է որ մեր հոգին կ'ստորնանայ , նոյն խոկ մենք ալ կ'ստորնանանք ճշմարտութիւնը ըսելով : « Եւ ինչո՞ւ համոր մենք կ'ստորնանանք ստելով » , կը հարցնէք :

— Որովհետեւ մեր հոգին ստեղծուած է ամենէն առաջ ճշմարտութիւնը փնտոելու . մեր հոգին կը յարգէ ու կը սիրէ ամէն բան որ ուղիղ է , բնականաբար սուտին ու խարէսութեան չկրնար համբերէլ . ուստի ստելով՝ ինքզինքնիս արհամարհելի առարկայ մը կը դարձնենք նոյն խոկ մեզի համար : Եթէ սախօսը վայրիեան մը իր հոգիին նայի , այիսի սոսկայ :

Ի՞նչ է անձնական արժանապատութիւնը

Դուն կ'ուզես որ քաղաքավարութեամբ վարուին հետդ , չես ուզեր որ քեզի ծաղրեն սուտ բաներ հաւատացնել ջանալով , միւս կողմէ վրադ գլուխդ մաքուր կը պահես , փողոցին մէջ կանոնաւոր կերպով կը քաւլես եւ կ'ուզես որ քեզի համար ըսեն . « Ահա՝ կըր-

թեալ աղջիկ մը » : Եթէ շատ կը փափաքիս ուրիշներուն յարգանքի զգացումը ներշնջել քու վրադ , որչափ ալ փոքր ըլլաս , կը նշանակէ թէ՝ արժանապատութիւն ունիս , այսինքն թէ՝ զու քեզ պատուաոր , քաղաքավար եւ չնորհալի կ'ըզգաս եւ պիտի նեղուէիր եթէ քեզի այդպէս չնկատէին :

Արժանապատութիւն ունիս՝ եթէ կ'աշխատիս ինքզինքդ կանոնաւոր պաշել , միշտ մաքուր ըլլալ , մոլութիւններէ եւ անշնորհք բաներէ փախչիլ . դարձեալ արժանապատութիւն ունիս , եթէ գիտնալով քու մեծերուդ բարձր արժանիքը , անոնց առջեւ չես ստորնանար , չափազանց մեծարանքներ , ստրկութիւններ , գովեստներ չես շայլեր անոնց համելի ըլլալու համար : Համեստ եղիր , որովհետեւ քիչ բան գիտես եւ շատ յատկութիւններ պիտի ունենաս : Բայց շահու եւ ողոքորդութեան համար մի՛ սորնանար . այն ատեն արժանապատութիւն ունեցած չես ըլլար :

Պատուաւոր պօտիկ աղջիկը պատուաւոր կին մը կ'ըլլայ

ի՞նչ ընելու է պատուաւոր փոքր աղջիկ մը ըլլալու համար : Սուտէն զգուշանալ , աշխատութիւնը սիրել , նաեւ սիրել անոնք որ զինքը կը սիրեն , արդարասէր ըլլալ , ամէնուն իրաւունքը յարգել : Տղաք , այս ամէնը ձեր մէջ կ'ըզգա՞ք Երբէք չէ՞ք ստեր , աշխատութիւնը կը սիրէ՞ք , ո՞չ ոքի անիրաւութիւն չէ՞ք ըներ :

Եթէ այսպէս էք , պատուաւոր աղջիկներ էք եւ յետոյ պատուաւոր կիներ պիտի ըլլաք , որովհետեւ

պատուաւոր կինը ուրիշ յատկութիւն չունի, եթէ ոչ պատուաւոր աղջկան յատկութիւնները, բայց աւելի զարգացած, աւելի ազնիւ եւ սրտով աւելի հաստատուն է:

Մէկ օրէն միւսը յանկարծ պատուաւոր չեն ըլլար, հապա առաքինութեան երկար սովորութիւններով է որ խվապէս առաքինի կ'ըլլան: Եթէ կ'ուզէք վերջը պատուաւոր կիներ ըլլալ, հիմակուրճէ սկսեցէք պատուաւոր ըլլան վարժուիլ:

Ի՞նչպէս կը վարժուին համեստութեան

Փոքրիկ աղջիկ, ամէն օր դուն քեզի հարցուր, « Ի՞նչ կ'արժեմ, կատարեալ առաքինի⁰ եմ, կատարեալ գիտնակա՞ն եմ, կատարեալ բարի⁰ եմ: Արդեօք բոլոր կատարելութիւնները ստացա՞ծ եմ, ալ սորվելու բան չունի՞մ » :

Խիզճդ քեզի պիտի պատասխանէ. « Ո՞չ, տղայ, դուն գեռ կատարեալ չես եւ ասոր համար հպարտանալու բան չունիս: Այլ ընդհակառակը շատ տեսակ պատճառ ունիս համեստ ըլլալու, որովհետեւ տակաւին շատ պակասութիւններ ունիս եւ գեռ շատ օգտակար բաներ չես գիտեր: Ինչ որ են, ինչ որ ունիս բոլորը կը պարտիս ծնողքիդ եւ վարժուհիներուդ: Որչա՞փ մարդիկ կան քեզմէ աւելի խելացի, աւելի մտացի եւ աւելի ուսեալ: Ուրեմն համեստ եղիր, դու քեզմէ կասկածէ, քեզմէ աւելի փորձառու մարդոցմէ աւելի խելացի ըլլալու կերպարանք մի՛ ունենար: Գու փոքրիկ գիտութիւնդ ի ցոյց մի՛ դներ, մանաւանդ եթէ բարի գործ մը ընես՝ ուրիշներու մի՛ պատմեր » :

Զիւնը եւ Ցողը

Հնդիկ գիրքի մը մէջ սա խրատը կար. « Խորհէ քու տանդ առջեւ եղած ձիւնը աւլել, փոխանակ դըրացիիդ տանիքին վրայի սպիտակ ցողը դիտելու » :

Գիտէ՞ք, երիտասարդ աղջիկներ, ի՞նչ կը նշանակէ այս խորհրդանշանական առակը: Շատ կրթիչ է, եւ ով որ կ'ուզէ ինքզինքը կատարելագործել, պէտք է միտքը պահէ: Զիւնը որ լեցուելով մեր գուռը կը գոցէ՝ մեր մեծ պակասութիւններն են, գէշ սովորութիւններն է որոնցմէ պէտք է ազատինք: Մեզի կը նեղացնէ, անհանգիստ կ'ընէ, մեզի կ'արդիլէ ուզած կերպովնիս շարժի կեանքի մէջ: Պէտք է աւլել, հեռուն քշէլ, այսինքն մեզի անկէ ազատել:

Սպիտակ ցողը, որ կը նշմարենք դրացիին տանիքին վրայ, անոր փոքր պակասութիւններն է: Անմիջապէս զայն կը տեսնենք, մերինէն աւելի շուտ, անոր համար զանոնք կը մեղադրենք, Այսպէս, կը կարծենք թէ ընկեր մը ձանձրալի է, գէշ բնաւորութիւն ունի, շատախօս է եւ չենք տեսներ թէ՝ շատ անգամ մեր շուրջը եղողը կը ձանձրացնենք, թէ՝ մեր բնաւորութիւնը երբէք կատարեալ չէ և թէ՝ մենք խօսիլ շատ կը սիրենք:

Ակսինք մեր պարտականութիւնները կատարել « Աւելով մեր դրան առջեւ հաւաքուած ձիւնը », յետոյ ուրիշներուն պակսութիւնը դիտենք:

Համեստ Եղիի

« Կ'ուզէ՞ք որ ձեզի համար լաւ բաներ ըսեն, դուք մի՛ ըսէք », կը գրէ բարոյախօս մը:

Պարզեւաբաշխութիւնէն ետք. վարդուհի շատ հպարտ էր իր արժանիքին համեմատ վարձատրուելուն համար. ամէնուն կը պատմէր թէ ինչո՞ւ համար եւ ի՞նչպէս ստացաւ պարզեներ. « Ես՝ ամէնէն մտացի աշակերտն եմ, ամենէն խելացին, իմ դասարանիս մէջ ամէնէն աշխատամէրը: Սա ըրի, նասարանիս մէջ ամէնէն աշխատամէրը: Սա ըրի, նասարանիս մէջ ամէնէն աշխատամէրը: » Ահա ասոնք կրկնելէ չէր դադրեր:

Մէկը, որ անոր ըսածները կը լսէր, ըսաւ. « Իսկ քու դասարանիդ ամէնէն համեստն ո՞վ է »:

Վարդուհի գլուխը կախեց եւ դառը հասկցաւ: Անշուշտ ինքը չէր ամէնէն համեստը, խորհելով նըկատեց որ երբ ինք իր գովեստը կ'ընէր, ոչ ոք բառ մը ըսաւ: Ի՞նչ կրնային աւելցնել իր խօսքերուն, ինքնիրեն սահմանած գովեստներուն: Յիշեց նաեւ զինքը մտիկ ընողներուն ժայիտը եւ հասկցաւ որ ինքինքը գովելով ծիծաղելի եւ անշնորհք կ'երեւէր:

Երբէք քեղի համար լաւ մի՛ ըսէր, նոյն իսկ երբ ճշմարտութիւնն է յայտնածդ: Այն ատեն է որ պիտի խորհին փոքրիկ արժանիքդ ճանչնալ:

Պատույ խօս

Տղաք կան, որ ամէն բանի համար կ'ըսէն. « Պատույ խօսքս կուտամ ասոր համար »: Ահա՛ գէշ սովորութիւն մը: Երբ դու բանի մը համար կը հաստատես թէ գիտես կամ կը կարծես թէ ճշմարիտ է, բաւականացիր առ առաւելն ըսել, « Կը հաստատեմ, կը ստուգեմ »: Եւ պատույ խօսքդ պահէ կարեւոր

պարագաներու մէջ միայն տալ:

Գիտօս թէ ինչ է պատիւդ, որ ամէն վայրկեան խաղի կը գնես: Քու պատիւդ, քու առաքինութիւնդ, քու իմաստութիւնդ, արժանապատռութիւնդ է: պատուաւոր անունն է որ ծնողքդ քեղի տուած են եւ դու պարտական ես յարգելու: Երբ կ'ըսէս « Իմ պատիւս » թէ այս ամէնը թուած կ'ըլլաս: Պատույ խօսք տալովդ, ըսել կ'ուզես թէ, « Կ'երդնում ասոր վրայ եւ իրը վկայ կը բերեմ իմ ընտանիքիս առաքինութիւնը »: Կը տեսնե՞ս, այս արտայայտութիւնը որչա՞փ լուրջ է: Մի՛ վարժուիր այսպէս ծանրակշիռ բառերով երդնուլ: Բայց գիտցիր խօսք տալ, պատույդ վրայ երդուիլ, երբ հարկ ըլլայ կարեւոր ճշմարտութիւն մը հաստատել ընտանիքիդ պատույն կամ ուրիշներուն պատույն համար:

Խօսիցը կ'անցնին, գրուածիը կը մնայ

Փոքրի՛ք աղջիկ, վերջը դուն շատ անգամ պիտի ըսես սա խօսքը. « Սսիկա խոստացա՞յ: Շատ կարելի է: Զեմ յիշեր: Բայց որովհետեւ գրուած չէ, խոստացած չեմ »: « Խօսքերը կ'անցնին, գրուածքը կը մնայ »:

Յիշէ՛, որ եթէ խօսքդ կը պահես, բերանացի բան մը խոստացած ատենդ, բացարձակապէս խղճմորէն պալատաւոր ես ըսածդ ընել: Եթէ սովորութիւնը կը պահանջէ որ շատ կարեւոր խոստումները, շատ լուրջ երաշխատորութիւնները միայն գրաւոր ըլլան, անոր համար է որ կրնան մոռցուիլ, եւ լաւ է որ չօշափելի բան մը գտնուի աչքի առջև՝ արուած խոստումը յի-

շելու : Ուրեմն աւելի խոհեմութեան համար արձա-
նագրութիւն մըն է քան թէ գրաւոր ապացոյց : Բայց
պատուաւոր կինը , պատուաւոր մարդը , երբ ըսէ թէ
խոստացած է՝ ա'յնպէս պիտի կատարէ իբր թէ գլած
բլամը :

Եթէ դուն արտասանած խօսքի չես պահեր, կը Ալլայ ըլլալ որ գրաւոր խոստումի ալ չպահես :

Խոսումդ պահէ

Կին մը՝ իր դրացիին, որ վայրկենաբար պէտք
ունէր, փոխ առած էր ոսկի մը։ Դրացին շատ չնոր-
հակալ եղաւ ու ըստու։ « Իսկապէս ո՞ր օր վերադար-
ձնելս չեմ կընար ըսել, բայց ապահով եղիր որ պի-
տի չուշացնեմ եւ այս փոքր պարտքս երթէք պիտի
չմոռնամ » :

Ծատ ամիսներ անցան եւ դրացին չխօսեցաւ ըլքած
այս պարտքին վրայ։ Այն ատեն փոխ տուող կինը
քաղցրութեամբ եւ շատ պատշաճ կերպով յիշեցուց։
« Դրացիս, ըստաւ, կը յիշե՞ս . . . գիտե՞ս, մէկ ոս-
կին, որ քեզի այնչափ գոհացուց, այսօր ալ ինձի
մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ »։ Բայց
դրացին զարմացաւ։ « Ի՞նչպէս, ի՞նչ, ինձի երբէք
բան մը փոխ տուած չես։ Ասկէ զատ՝ ի՞նչ ապացոյց
կայ, գրուած բան մը կա՞յ »։

Փոխ տուող կինը շատ վշտացած տուն դարձաւ :
Կը կին վշտացած, որովհետեւ բացի կորուսած ստա-
կէն, ամօթ կ'ըգգար որ այս դրացին պատուաւոր մէկը
կարծեր էր, մինչդեռ ցած եւ ստորին մէկն է եղեր
որ իր խոստմանը կարեւորութիւն չէր տար, եւ կը

կարծէր թէ բան մը պարտական չէ քանի որ գրուածը չէ կար։ Պղտիկ աղջիկնե՛ր, թեթեւութեամբ բան մի՛ խոստանաք։ բայց եթէ անդամ մը խոստանաք, կատարեցէք ձեր խոստումը։

ԳԵՐ զՆՐԾ ՄԻ ԲԵԼ ՄԻ' ԽԱՏՎԱԿ

Մարիամ անունով սպասուհի մը կը ծառայէր այն-
պիսի մարդոց քով՝ որոնք մեծ վստահութիւն ունէին
իր վրայ։ Օր մը, մէկը կուգայ զինք կը գտնէ եւ
կ'ըսէ։ «Մեծ շահ մը պիտի ունենամ, եթէ տիրու-
հիդ մէկ թուղթը կարդամ, որ իր սենեակի սեղա-
նին վրան է։ Վաղը, այս ինչ տեղը քեզ պիտի ըս-
պասեմ, այն թուղթը ինձի բեր, կարդամ ու անմի-
ջապէս քեզ կը յանձնեմ։ Գողութիւն մը չէ ըրածդ,
հետեւաբար խիղճդ քեզի յանդիմանելու բան մը չ'ու-
նենար։ Կրնա՞մ վրադ վստահ իինել, խոստացիր ինձ»։

Մարիամ տկար էր : Խոստացաւ : Բայց հետեւեալ
օրը մեծ խոռվութիւն մը, յուզմունք մը ունեցաւ
սրտին մէջ : Պէտք էր իր տիրուհիին վստահութիւնը
չարաչար գործածել .թէ տուած խոստումը չպահել :

Այն ատեն իր խղձին ճայնին միայն լսեց որ
կ'ըսէր. Ստիպուած չես խոստումէ պահել, որով-
հետեւ այդ խոստումն ըրիր գէշ գործ մը կատարե-
լու համար : Բնդհակառակը դուն պարտաւոր ես հա-
ւատարիմ ըլլալ, եւ տիրուհիիդ վատահութիւնը չա-
րաչար չզործածել : « Այն թղթին մի՛ դպչիր, « ոչ
ոքի մի՛ տար: Ուրիշներուն գործերը քեզի փոյթ
չեն: Հաւատարիմ եւ աննենդ եղիր »: Աւելի լաւ է
պատուաւոր ըլլալ, քան թէ աններելի խոստում մը
կատարել :

Գէտ զործի մը օգնել պէտք չէ

— Վարդուհին գրչին տուփը տեսա՞ր, ըստ ցած ձայնով կատարինէ իր բարեկամուհի Մարիամին։ Այս առաւօտ շատ գեղեցիկ գրիչներ կային մէջը։ Գալտնի առ եւ հատ մըն ալ ինծի տուր։

— Ո՛չ, ըստ Մարիամ, չեմ ուզեր, գողութիւն կըլլայ ըրածնիս։

— Լաւ, կը պատասխանէ կատարինէ, ես կ'առնեմ, երբ դու անոր հետ խօսակցիս թիչ մը զբաղեցուր զինքը ուրիշ կողմ, որ զիս չտեսնէ։

— Ո՛չ, ըստ Մարիամ, որ պատուաւոր պզտիկ աղջիկ մըն էր. չեմ ուզեր քեզի օգնել գողութեան համար։ Այն ատեն ես ալ քեզի պէս յանցաւոր կը լինիմ։

Կատարինէ կալմրեցաւ, լսեց եւ խորհեցաւ։ Յիշեց այն խօսքերը, որ վարժուհին հաղար անդամ կրկնած էր։ Պէտք չէ գէշ գործ մը ընենք եւ ոչ ալ ուրիշին օգնենք այնպիսի պարագայի մէջ։

Կատարինէին չօգնելով՝ Մարիամ իր բարեկամուհին գէշ գործ մը ընելէ արդիլեց։ Ընդհակառակը լաւ բան մը ըրաւ, որովհետեւ զգուշացուց իր բարեկամը գէշ աղջիկ մը ըլլալէ եւ միւս ընկերոջը անիրաւաբար գըրիչէ մը զրկուելէ։ Մարդ երբէք չափազանց խղճամիտ չըսուիր, երբ ուղղամտութեամբ չէ կատարած իր գործն։

Լաւ բնաւորութիւն մը սիրելի կը դարձնէ

Ամէն վայրկեան ձեր ընկերներէն մէկուն համար

կ'ըսէք. « Շատ կը սիրեմ անիկա, ամէն մարդ զայն կը սիրէ, այնչափ լաւ բնաւորութիւն մը ունի»։ Ուրեմնի ի՞նչ է այն լաւ բնաւորութիւնը, որ ամէնէն կը սիրուի, ի՞նչ բանի մէջ կը կայանայ։

Ստիկա գիտնալու համար ուսումնասիրէ Սիրանոյշ բարեկամիով բնաւորութիւնը, երբեք չափանջար ան։ Ընկերներուն դէմ քսութիւն չըներ։ Կատակներ կ'ընդունի եւ փոքր վիրաւորանքէ մը չի վշանար։ Միշտ զուարթ է, ո՛չ թէ երբեմն։ Ուրախութեամբ կ'ընդունի ընկերներուն առաջարկած խաղը խաղալ։ Իր փոքրիկ բարեկամներուն փափաքներուն չիհակառակիր։ Ո՛չ մէկուն հետ կը վիճաբանի։ Շատ անգամ տեղի կուտայ, թէպէտ եւ ինքն իրաւունք ունեցած ըլլայ, բայց ասիկա կ'ընէ որ վիճաբանութիւնը չերակարի եւ կուտի փոխուի։

Ամէն մարդ կը սիրէ Սիրանոյշը եւ զարմանալի ալ չէ։ Ինքինքը սիրցնելու գաղտնիքը՝ սիրալիր ըլլալն է, եւ Սիրանոյշ այնպէս է, որովհետեւ լաւ բնաւորութիւն ունի։

Լաւ բնաւորութիւն պիտի ունենաս,
եթէ ուզես

Պատիկ աղջիկ, եթէ կամք ընես, լաւ բնաւորութիւն կ'ունենաս։ Յեզի կը կրկնեմ, միայն թէ հաստատապէս պիտի ուզես եւ կամենալու համար ալ համոզուելու է որ լաւ բնաւորութիւնը քեզ մեծարելի, յարգելի կը դարձնէ։

Երբ խոժոս ու տրտնջող ըլլաս, դժբաղդ ես։ Երբ ընկերի մը հետ վիճաբանիս, դժբախտ ես։ Եթէ

կատակէ մը բարկանաս, ցաւիս՝ վիշտ ունիս : Երբ յա-
մառիս այս կամ այն խաղը խաղալու քեզի մէկ կողմ
կը թողուն եւ դուն կը ձանձրանաս :

Ուրեմն ամէն բանի մէջ լաւ բնաւորութիւն, ու-
րախ եւ ժամուն կերպարանք ունենալով . սիրալիք
ու համակերպաղ ըլլալով՝ շահաւոր կ'ելլաս : Լաւ բնա-
ւորութենէդ առաջ եկած բոլոր առաւելութիւններէն
պիտի օգտուիս : Ասկէ զատ քովիններուդ հաճոյք,
ուրախութիւն պատճառելու գոհունակութիւնը պիտի
ունենաս : Ասոր համար միայն պէտք է կամենաս :
Թարի ըլլալ գիտցիր :

Հպարտութիւն մը

— Վարդուհի՛, ըստ քաղցրութեամբ մը վարժու-
հին, ուղղագրութեան սխալ մը ըրած ես :

— Ո՛չ, օրիորդ, կը պատասխանէ Վարդուհի
կարմրելով, սխալած չեմ: Գրքի մը մէջ այնպէս կար-
դացեր եմ:

— Վարդուհի՛, կը կրկնէ վարժուհին, այդպէս
չես կարդացած: բայց դու հպարտ ես, չես ուղեր
անիրաւ ելլել եւ կը յամառիս :

— Ո՛չ, օրիորդ, չեմ յամառիր, վստահ եմ, որ
այսպէս գրուած էր :

Վարժուհին համբերող է: Բան մը չ'ըսեր, բայց
կ'երթայ յիշուած գիրքը կը բերէ եւ փոքրիկ աղջը-
կան կը ցուցնէ, որ սխալած է: Այն ատեն Վարդու-
հի գլուխը կը կախէ խիստ ամօթապարտ: իբր թէ
շատ մեծ պակասութիւն է սխալած ըլլալը :

Ո՛չ, պակասութիւն չէ սխալիւր, բայց հպարտու-

թեամբ յամառիլն անմիտ գործ մըն է: Վարդուհին
ուսման մէջ յառաջադիմութիւն պիտի չընէ, որով-
հետեւ հպարտ է, իբր թէ ամէն բան դիտէ, արժանի
չիսեպեր ըստածները լսել: Հպարտութիւնը որ կ'ար-
գիլէ մեզի ճանչնալ ինչ որ ենք, մեր ամէնէն գէջ
թշնամին է:

Սայլի մը ամենազէց անիւր

Մեծ ճամբէն սայլ մը կ'անցնէր: ի՞նչ աղմուկ կ'ը-
նէ: Տեսնենք ի՞նչ է: Կը մօտենան կը նային: Անիւ-
ներէն մէկը խիստ լաւ է եւ իր պաշտօնը լաւ կը կա-
ապէ, անձայն կը դառնայ եւ ոչ մէկուն ուշադրու-
թիւնը կը գրաւէ: Միւսը բան մը չ'արժեր, չրջանա-
կի մասերը կը տատանին եւ երկաթէ շրջանակը որ
բոլոր մասերը կը պաշտպանէ այլ եւս հաստատուն
չէ: Այս է որ այնչափ ուժով կը ճրճրայ եւ այնչափ
աղմուկ կը հանէ, ու ամէնուն ուշադրութիւնը իրեն
կը դարձնէ:

Այսպէս է սնապարծութիւնը: Դասարանին մէջ
լաւ, ամէնալաւ աշակերտները չեն որ աղմուկով կը
լեցնեն, շատ անգամ կը լուեն, միայն հարցուած
ժամանակ կը խօսին, չեն փափաքիր միշտ ամէն բա-
նի մէջ իրաւունք ունենալ: Խիստ բարի են ու իրենց
փոքր արժանիքները աղմուկով չեն ծանուցաներ: Գիտեն
անշուշտ որ սնապարծութիւնը անմտութեան
կը տանի մար և :

Ունեցած դիրքիդ վրայ մի՛ հպարտանար

Փոքրիկ աղջիկ, ծնողքիդ ունեցած դիրքին վրայ մի՛ հպարտանար, որովհետեւ այդ գիրքը քիչ կամ շատ գեղեցիկ, քիչ կամ շատ փայլուն, անունմը չէ, պաշտօն մը չէ՝ ուրիշէ մը աւելի բարձր՝ որ մարդուն արժանիք տայ, դիրքը՝ բան մը չինչանակեր:

Հնտանիքի մը արժանիք տուողը ստակն ալ չէ, հապա իր պատուալորութիւնն է, իր անդամներուն լաւ ընթացքը՝ աշխատութեան սէրն է:

Եթէ աշխատասէր և առաքինի ծնողներ ունենալու երջանկութիւնը ունիս, ուրախացիր ասոր վրայ՝ բայց ոչ ուրիշ բանի վրայ, որովհետեւ Աստուծոյ հրամանով՝ մենք կը ծնինք հոս կամ հոն. գործառներու կամ երկրագործներու մէջ, վաճառականներու կամ ծառաներու քով, և չենք ալ գիտեր թէ ինչո՞ւ համար այս կամ այն դիրքին մէջ կը գտնուինք:

Պատիւը, առաքինութիւնն և վարմունքն է միայն որ ընտանիքին փառքն, հարստութիւնը կը կազմեն:

Խելացի ըլլալուդ մի հպարտանար

Պղտիկ Լուիզ, ի՞նչ ըրիր խելացի ծնելու համար: Եթէ Աստուծ, եթէ բնութիւնը քեզ այդպէս օժտեցին, ատոր համար երջանիկ եղիր ներքնապէս, բայց երբէք մի՛ հպարտանար, որովհետեւ իրաւունք չունիս:

Բայց եթէ ստուգիւ խելացի ես, գիտե՞ս թէ ասով ինչ բան ընել կը պարտաւորիս: Հարիւր անդամ

առաւել բարի, հարիւր անդամ աւելի եղայրասէք, առաքինի ըլլալու ես քան քեզմէ քիչ օժտուածները, որուհետեւ զո՞ւն անոնց պէս պիտի չկրնաս քու սխալ-ներուդ համար ներողութիւն խնդրել եւ ըսել. « Զը գիտէի եւ չէի հասկցած » որովհետեւ դու շուտ եւ դիւրութեամբ կը սորվիս ինչ որ կը բացատրէն: Եի-չէ որ մարդ որչափ խելացի ըլլայ, այնչափ աւելի պարտականութիւններ ունի կատարելու :

Զարդարանիքիդ համար մի հպարտանար

Երեւակայեցէք երկիր մը ուը շատ մարդիկ զանազան ձեւերով կեցիներ կը ժողվեն, թել կը շարեն, մանեակ կը շինեն և ապա կը հպարտանան այս զարդարանքով ուրիշներու առջեւ քալելով: Դուք կը խնդաք ու կ'ըսէք. « Վայրենիները միայն այդպէս բան կ'ընեն » :

Պղտիկ աղջիկներ կան որոնք շատ կը հպարտանան իրենց ականջներուն, մատներուն և դաստակներնուն վրայ կը ել մետաղ մը որ ուրիշ արժէք չունի բայց եթէ հազուագիւտ և փայլուն ըլլալը: Աղջիկներ կան որ մեծ ուրախութիւն կ'ըլլան այս կամ այն գոյնով կերպասէ զգեստ հագած ըլլալնուն, կամ իրենց գըլ-խարկը փայլուն գոյն ժապաւէնի կտորով մը զարդարած ըլլալնուն համար: Երբ այսպէս հագուած են, իրենց ընկերակիցներուն մէջէն այնպէս հպարտութեամբ կ'անցնին ինչպէս վայրենիները իրենց խեցիկ մանեակով կ'անցնին իրենց նմաններուն առջեւէն :

Ի՞նչ յիմարութիւն: Ի՞նչ արժանիք ունիք այս կամ այն ձեւով հագուելնուդ համար: Միթէ ձեր հա-



գուստը , ձեր զարդարանքը զձեզ կը ներկայացնէ՞ , ձեր առաքինութիւններէն , ձեր լաւ յատկութիւններէն մէ՞կն է : Ձեր զարդարանքին մէջ ունայնամիտ մի ըլլաք : Հագուստ մը աւելի գեղեցկացնելու միակ միջոց մը կայ , այն է մոռնալ հագածը :

Յասմիկ . Շուշան

Յասմիկ շատ կը հպարտանայ իր ընտանիքին պատուալորութեան համար . անդադար կը կրկնէ . « Մեր ընտանիքին անդամները պատուալոր են . ոչ ոք գէշ բան մը ըրած է » : Անոր այսպէս խօսած ժա-

մանակ իր պղտիկ ընկերներէն մէկը գլուխը կը կախէ աշքերը արցունքով լեցուած : Շուշանն է ան :

Շուշան վիշտ ունի . որովհետեւ շատ ատեն առաջ իր ազգականներէն մէկը յանցանք մը գործած է , դատապարտուած և իրեններէն հեռու մեռած է : Գիւղին մէջ ամէն մարդ գիտէ այս պատմութիւնը , և քանի մը չար մարդիկ կան որ չեն ուզեր Շուշանին հօրը և մօրը հետ տեսնուիլ՝ ընտանիքին մէջ յանցաւոր մը գտնուած ըլլալուն համար :

Խե՞ղճ պղտիկ Շուշան . . . և սակայն անիկա շատ անմեղ է այս բաններուն մէջ . անիրաւութիւն ըըլլա՞ր եխնքը նենելը :

Տղա՞ք , երբ ձեր ծնողքին պատուաւորութեան և առաքինութեան վրայ բարձրածայն կը խօսիք , զգուշացէք ձեզմէ նուազ երջանիկ փոքր ընկերնիդ նուաստացնելէ : Դպրոցին մէջ գուք բազմաթիւ էք , կրնայ պատահիլ որ ձեր մէջէն մէկը Շուշանի կացութեան մէջ կը գտնուի . խնայեցէք անոր՝ ամշցնելու իր ընտանիքին համար : Ձեր ծնողքին վրայ սւնեցած հիացումնիդ թող առիթ չդառնայ ձեր ընկերներէն մին վշտացնելու :

Քմահաճոյքով մի առաջնորդուիր

Քմահաճոյքով մի առաջնորդուիր . երբ պարտականութիւն մը ստանձնած ես , մինչեւ վերջը տար , մի' թողուր զայն ուրիշ մը սկսելու համար : Երբ դասմը կը ուրատես , լաւ սորվելէ ետքը միայն ուրիշի մը անցիր : Երբ կար մը սկսար , մի' թողուր զայն կիսկատար՝ կիսասեղով (գրօնէ) պարապելու համար , և ատիկա ալ ձգեր՝ գուլպայ հիւսելու կամ ասեղնագործութիւն ընելու համար :

Առանց յարատեւութեան ոչ մէկ նպատակի կարելի է հասնիլ, և քմահաճոյքը յարատեւութեան հակառակն է :

Նոյն խոկ խաղիդ մէջ յարատեւ եղիր եթէ կ'ուղես անոր ամբողջ հաճոյքը վայելել : Ամէն վայրկեան խաղ փոխելը, ինչպէս կ'ընեն չար տղաք, զբօսնով գիտնալ ըսել չէ : այսպէսով կը ճանձրանան, կը յոդնին, կը տաղտկանան արձակուրդ կամ զրօսանք ունենալէն :

Երբ փոքրիկ բարեկամ մը ունիս, երկար ժամանակ բարեկամութիւնդ պահէ : Մի՛ ըսեր . « Անցեալ շարաթ այսինչն էր բարեկամ, հիմա մէկ ուրիշն է » Որովհետեւ կատարեալ բարեկամ չես ունենար երբ օր մը մէկուն կը յարիս, օր մը ուրիշին : Քմահաճոյքը մեր սիրան ու մեր միտքը անընդունակ կը դարձնէ լուրջ զգացումի և ճաշակի :

Քմահաճոյքը թշնամի է ընտանեկան խաղաղ երջանկութեան .

Ունայնամիտ աղջիկ մը

Ի՞նչ ըսել է ունայնամիտ ըլլալ : Ունայնամիտ ըլլալ կը նշանակէ յարիլ ոչինչ բաներու որոնք կ'զրօսցնեն, փոխանակ հետամուտ ըլլալու կեանքի լուրջ և կարեւոր բաներու :

Ունայնամիտ աղջիկ մը կը ճանչնամ որ միայն իր հաճոյքը և զարդարանքը կ'երազէր : Կը խորհիր յաջորդ օրուան արդուզարդին . շրջագայութեան, զրօսնքին վրայ : Երկուշաբթին և ուրբաթը կ'անցնէր նախորդ օրերուն վրայ ցաւելով և պատմելով բարեկամներուն ինչ որ ըրած էր կամ ինչ զարդ որ ունե-

ցած էր այն երջանիկ օրերուն մէջ : Արդ, դպրոցի մնացած չորս օրերէն ի՞նչ կը մնար իրեն բան սորվելու համար : Օր մը, միայն օր մը : Ստուգիւ խիստ քիչ էր այդ օրը : Այսպէս ալ թողուց դպրոցը առանց բան մը սորվելու :

Ա՛լ անձնատուր եղաւ ունայն բաներու, գէշ տանտիկին մը դարձաւ, գործածելով ընտանիքին ստակը արդուզարդի և սնոտի բաներու համար, եւ իրեն պատճառով զաւակները թշուառութեան ու դժբաղդութեան մէջ ինկան :

Ունայնամութիւնը միշտ յիմարութիւն է եւ երբեմն ոճիր մը կը դառնայ:

Ի՞նչ բանի օգտակար եմ

Վարդուհի դպրոցական շրջանը աւարտելով՝ ուսման վկայականը առաւ, իր ծնողքը հարուստ չեն, պէտք է որ ինք աշխատի . ի՞նչ պիտի ընէ : Շատ ամիսներ վարդուհի մնաց առանց պաշտօն մը գտնելու . դերձակուհիի մը քով դրին կար կարելու համար, յետոյ նորաձեւութեան վաճառականի մը քով, յետոյ լուսացարի մը քով եւ գեռ ուրիշ տեղեր ալ : Այս գործերէն ոչ մին շարունակեց Վարդուհի, դեռ չգիտեր թէ ի՞նչ բանի յարմար է, բայց իր ընտանիքը պէտք ունի անոր աշխատութիւնովը շահածին :

Վարդուհիին պէս մի՛ ընէք : Ձեր գտնուած հիմակուան տարիքին մէջ պէտք է խորհիք թէ ի՞նչ բանի յարմար էք : Դուք առանձին առանձին բաներու յարմարութիւն ունիք : Երբեմն պէտք է դուք ձեզի հարցնէք « Ո՞ր արհեստն է որ սորվելու փափաք 8

ունի՞մ։ Անոր մէջ պիտի յաջողի՞մ։ Ես ի՞նչ բանի յար-
մար ե՞մ։ Մտածեցի անպիս չըլլալ կեանքի մէջ և ձանչ-
նալ թէ ի՞նչ դեր ունիք կատարելու իրեն պատ-
ուառոր եւ արի երիտասարդ ալջիկ։

ԶՃԱՆՃՐԱՆԱԼՈՒ ԻԱՄԱՐ

Մարդարիտ կը ձանձրանայ յաճախ եւ գրէթէ
ամէն տեղ. բայց պիտի ըսէք թէ դպրոց կ'երթայ և
շատ զբասանք եւ խաղալիք ունի։ Ուրեմն ինչո՞ւ
կը ձանձրանայ։ Օ՞հ, շատ պարզ է, միայն մէկ պատ-
ճառով մը։ աշխատութիւնը չխիրեր։

ԶՃԱՆՃՐՈՒԹԻՒՆԸ աշխարհ եկած է ծուլութեան հե-
տեւանքով. կ'ըսէ առածը, և այս ճշմարիտ է։ Փոր-
ձեցէք օր մը կամ երկու օր բոլորովին պարապ նըս-
տիլ, պիտի տեսնէք թէ ի՞նչպէս կը ձանձրանաք։ Ընդ-
հակառակն եռանդով աշխատեցէք, ժամերը շատ ա-
րագ պիտի անցնին և իրիկուան դէմ պիտի ըսէք.
«Կարելի՞ է որ այսչափ ուշ ըլլայ, ի՞նչպէս օրը շուտ
անցաւ։»

ԶՃԱՆՃՐԱՆԱԼՈՒ համար ուրիշ միջոց մըն ալ կայ.
սովորութիւն ընել ըրածին վրայ խորհիլ, սրտով
փարիլ գործին։ Այսպէսով ըրած աշխատութան մէջ
շատ հետաքրքրական բաներ երեւան կուգան որ
մինչեւ այն առեն ուշադրութիւն գրաւած չէին, աշ-
խատիլը հաճայք մը կը դառնայ եւ ձանճրութիւնը
կը վասրուի։

Երբ օգտակար բաներու աշխատին, պարտակա-
նութիւննին հաճոյքով կատարեն, երբ մտածեն ու

փափաքին շուրջը եղողները երջանկացնել, այն ատեն
երբեք չեն ձանձրանար։

Այն որ կ'ըսէ թէ « կը ձանձրանամ » արդեօք
կ'զգա՞յ թէ՝ աւելորդ բեռ մըն է։

ՄԵՂԼՈՒԹԵԱՅ ՊԼՄ

Տղա՛ք, երբ պարտականութիւն մը, գործ մը ունիք
կատարելու եւ թէ այդ պարտականութիւնը, այդ
աշխատութիւնը ձեզի գժուար կը թուի. վաղուան
մի՛ սպասէք կատարելու համար։ Ձեր մեղկութիւնը
ձեզի պիտի ըսէ. « Սպասեցէ՛ք, մի՛ շտապիք շա՛տ
շատ ձանձրալի է »։ Եթէ այս զգացումին տեղի,
տաք՝ այն ատեն բնաւ չէ կրնար կատարել։

Ո՞չ, ո՞չ, մեղկ, վարանոտ, դանդաղ մի՛ ըլլաք
գործի մը մէջ, որ քիչ մը աշխատութիւն կը պա-
հանջէ։ Ընդհակառակն, աշխատեցէք եռանդով եւ
ուրախութեամբ կատարել ինչ որ ձեզի պատուիր-
ուած է։

Արթնալնուդ պէս ելէք առանց անկողիններ-
նուդ մէջ ասդին անդին դառնալու, եթէ այնպէս ը-
նէք՝ մեղկութիւն կ'ըլլայ։ Փութով հագուեցէք եւ,
մազերնիդ սանտրեցէք առանց նստելու աս-
դին անդին, ինչպէս կ'ընեն անհոգ ու ծոյլ տղաքը։
Արագ քալեցէք դպրոց երթալու ատեն և հոն եղած
ժամանակնիդ վայրկեան մը պարապ մի՛ անցնէք։
Մեղկութեամբ կատարուած գործ մը միօտ դժուար իր
քուի։ Մարդ ինքինքը մեղկութեան տարով, այլ եւս
առաքինի ըլլալու յոյսը չունենար։

ՄՐՏՏՈՒԹԵԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Փոքրիկ աղջիկ, դուն կ'ըսես . «Արիութիւնը այրերու համար է, մենք քաջարտութեան պէտք չունինք» :

Կը խաբուիս, փոքրիկ աղջիկ, ընդհակառակը շատ պէտք ունիս անոր, ո'չ թէ այս վայրիկեանիս՝ այլ երբ մեծնաս : Չես կրնար գիտնալ թէ՝ քեզի կամ ընտանիքիդ ի՞նչ պիտի պատահի, թերեւս ամենածանր հիւանդութիւն մը գայ : Պէտք է զանոնք կրել գիտնաս առանց տկարանաւու, Ասոր համար հիւակուընէ վարժուէ :

Կատարէ՛ ընտանեկան պարտականութիւններդ առանց գանգատելու, որչափ ալ դժուար ըլլան : Համբերութեամբ տար փոքր ցաւ մը, վէրք մը, նեղութիւն մը՝ առանց շարունակ աղմկելուեւ արտասուելու : Գործդ ամբողջովին կատարէ առանց մէկ կողմ'ձըգելու : Եթէ ցաւ կամ վիշտ մը ունիս, ջանայ աղմրկալից կերպով չի յայտնել : Եթէ ընտանիքիդ մէջ գժրազդութիւն պատահի, առանց արտասուքի մասնակցէ : Վերջապէս յիշէ՛ որ արիութիւնը տարափոխիկ է : Եթէ դուն արխասիրս ես, ոու ռուշիներդ ալ այնպէս կ'ըլլսն :

Լաւ հպարտութիւնը

Երբեմն կ'ըսէք . «Այս ինչ աղջկան տունը գացի, շատ հպարտ է » : Այսպէս խօսելով ըսել կ'ուզէք թէ ամբարտաւան ու արհամարհող է . ստուգիւ այս նը-

շանակութեամբ իր հպարտութիւնը ծաղրելի ու տարօրինակ է :

Բայց կայ լաւ հպարտութիւն մը, իրաւացի և արդար հպարտութիւն մը, որ ամէնուն ներելի է :

Ահա՛, օրինակի համար, այրիացած կին մը, որ իր տղաքը մեծցուցած է նեղութեամբ եւ պատուաւոր կերպով, ըրածին վրայ կը հպարտանայ և իրաւունք ալ ունի : Տղայ մը հպարտ է, եւ իրաւունք ունի, երբ գժուար աշխատանք մը ջանասիրութեամբ և յարատեւութեամբ կը կատարէ : Աղքատ մէկը յուզեր ողորմութիւն ընդունիլ, բայց գործ կը խնդրէ պէտք եղած գրամը շահելու համար . կը հպարտանայ ասոր համար, իրաւունք ունի : Նոյնպէս եթէ յաղթեցիր պակասութեան մը, որուն համար քեզի կը յանդիմանէին, եթէ չարիք գործելու միտումին յաղթեցիր, իրաւունք ունիս հպարտանալու : Ահա՛ լաւ հպարտութիւնը : Լաւ հպարտութիւնը՝ արժանապատուութիւն է . բայց պէտք չէ դուրսէն յայտնուի :

Ներելի է ըրած բարիկիդ համար հպարտանալ, բայց այս զգացումը պէտք է որ արփդ մէջ գաղտնի մնայ :

Լաւ խոտը

Հին պատմութիւն մը, որ թերեւս կարդացած էք, կ'ըսէ :

Երկու կին օր մը շուկայ կ'երթային բանջարեղէն ծախսելու : Ճամբան երկար էք, օդը շատ տաք եւ կողմիւերը որ գլուխուն վլայ կը կրէին՝ ծանր էին, կիներէն մին շարունակ կը գանգատէր . միւսը առանց տրանջալու ճամբան կը շարունակէր :



Գանգաւողը ըստ միւսին . « Ուրեմն բան չունի՞ս կողովիդ մէջ, որովհետեւ ծանր չիթուիր ու չես գանգաւոիր :

— Ո՞չ, այո՛, պատասխանեց միւսը, իմ կողովս ալ քուկինիդ նման լեցուն է, բայց տարած բանջարեղիններուս մէջ սքանչելի խոտ մը դրիւ և յս խոտը Համբերութիւն կ'ըսուի, ան ինձի կ'օգնէ քաջութեամբ ճամբաս երթալ »:

Կը հասկնաք այս առածը, այնպէս չէ՞ Առանց համբերութեան կարելի չէ կատարելագործուիլ , որովհետեւ կատարեալ ըլլալու համար ամէն օր պէտք է մարդ իր վրայ հսկէ եւ առ ալ համբերութեամբ ձեռք կը բերուի :

Նախաձեռնութեան ողի

Երբեմն կը լսէք թէ . « Հօր, մօր կամ անգրանիկ քրոջ նախաձեռնութեան շնորհիւ աղքատութեան մէջ ինկած ընտանիք մը կրցաւ քիչ շատ վերականգնիլ և աւելի քիչ խեղծութիւն կրել »: Ի՞նչ կը նշանակէ ասիկա : Կը նշանակէ թէ , այն ընտանիքին մէջ մէկը՝ հայրը , մայրը , եղբայրը կամ քոյրը դժբաղդութենէ վհատած չէ , եւ հնարը գտած է օգտակար ըլլալ իր շուրջը գտնուողներուն : Սպասած չէ որ իրեն աշխատելու գործ բերեն , ինքը հետամուտ եղած է իր սեփական կամքով այնպիսի պարագաներ ստեղծել , որ իրեն գործ հայթայթեն . նախաձեռնութեան ոգի ունեցած է :

Թերեւս ըսէք. « Այնպէս ըրաւ, որովհետեւ մը-
տացի էր և ամէն ուզող մտացի չկրնար ըլլալ » : Տը-
դա՛ք, բնաւ մի՛ հաւատաք ասոր : Մարդուս դէպի ի-
րենները ունեցած սէրը . զանոնք երջանկացնելու



փափաքը, կամքի զօրութիւնը, ահա՛ ասոնք նախա-
ձեռնութեան ոգի կուտան : Երբ որոշում մը տալու
պէտք ունենաք, սիրտերնուդ հետ խորհրդածեցէք :
Չեր ամենալաւ խորհրդատուն ան է :

Ինչ որ կրնաս այսօր ընել՝ վաղուան
մի՛ քողուր

— Շատ ժամանակ ունիմ, կ'ըսէ Սիրանոյշ : Այս
գիշեր պառկելէ առաջ դասս կը սերտեմ : Այսօր
հինգշաբթի է, կ'ուզեմ խաղալ :

— Բայց, ըստ մայրը, եթէ հօրեղբօրդ աղջիկը
դայ այս իրիկուն, ինչպէս խոստացած էր, ի՞նչ պի-
տի ընես :

— Լաւ, այն ատեն դասս վաղն առտու կը սոր-
վիմ, ըստ Սիրանոյշ :

Ստուգիւ իրիկուան հօրեղբօր աղջիկը եկաւ : Սի-
րանոյշ դասը չորվեցաւ առջի օրուան խաղալուն
պատճառով : Յաջորդ օրը ուշ արթնցաւ, հաղիւ ժա-
մանակ ունեցաւ շտապով հագուիլ եւ դպրոց վազել
առանց դասը սերտելու : Կրնաք երեւակայել թէ ի՞նչ
պատահեցաւ : Սիրանոյշ յանդիմանութիւն լսեց ու
պատճուեցաւ :

Շատ անգամ փոքրիկ աղջիկները Սիրանոյշին պէս
կ'ընեն իրենց պակասութիւնները ուզգելու համար .
« Դեռ ժամանակ ունիմ, երբ մեծնամ, ինքզինքս
կ'ուզեմ » կ'ըսեն : Կը մեծնան, կը ծերանան՝ չեն ուզ-
դուիր, իրենց ամբողջ կեանքին մէջ կը մնան իսենթ-

ու խելառ, ծոյլ, ստախոս եւ շատախօս :
Պակասութիւն մը կը նմանի զգեստի փոքր պա-
տըռուածքի մը, եթէ վաղուան սպասեն պատուածը
կը կտելու, կը մեծնայ ան եւ չիկարկուիր, նքէ պա-
կարկտելու, կը մեծնայ ան եւ չիկարկուիր, նքէ պա-
կասութիւնները ուղղելու համար միտք ետքին սպասեն ,
պատըռի մուտքան մոլոքեան կը դառնայ :

Զգուշանանք բարկութենէ

Օր մը Սաթենիկ սաստիկ բարկութեան վայրկեանի մէջ գետին նետեց ձենապակիէ աման մը : Ուրիշ անդամ, գուլպա հիւսելէն նեղացած, շիւղերը քաշեց, բուրդը կտրեց և գործը քակեց: Ուրիշ օր մըն ալ հայ-հոյեց տունի ծեր ծառային որ իրեն դիտողութիւն մը ըրած էր շատ իրաւամբ:

Ահաւասիկ Սաթենիկ շատ յառաջ է գացեր, բարկութիւնը անցնելէն ետքը այլ եւս չունէր այնքան սիրած ձենապակիէ ամանը . գուլպան կրկին ոկսելոր էր . վշտացուցած էր այն բարի ծառան զոր շատ կը սիրէր :

Ի՞նչ անմիտ եւ չար խորհրդատու է բարկութիւնը: Երբեք լաւ բան մը չէ. արտադրած ան, ընդհակառակը, բարկութեամբ մեր բոլոր արժանապատութիւնը եւ խոհեմութիւնը կը կորսնցնենք, այնպիսի գործեր կ'ընենք, որու վրայ ետքէն խորապէս կը ցաւինք, մենք մեզի եւ երբեմն ալ մեր շուրջը գտնուողներու անիրաւութիւն կ'ընենք :

Զգուշանանք բարկութենէ: Երբ կըզգանք թէ պիտի բարկանանք, մտքերնիս ուրիշ կողմ դարձնենք, ջանանք մոռնալ բարկութեան առիթը:

Նախ դիմադրենէ պատիկ անհամբերութիւններուն որ մեզ կը տանին դեպ ի սաստիկ բարկութիւն՝ առանց մեր նեմարելուն :

Տածկամիտ չըլլանք

Վարդուհի մօրմէն հրաման կ'առնէ հաւաքել իր փոքր բարեկամուհիները ամբողջ օրը միասին անցը-

նելու եւ քիչ մը բան ուտելու համար: Սիրանոյշ կ'ընդունի հրաւերը միւսներուն պէս. բայց ընդունած ատեն շփոթած կերպարանք մը ունէր զոր Վարդուհի չնշմարեց: Սմբողջ շաբթուն տղաքը կը խօսակցէին համախմբուած ժամանակ ունենալիք հաճոյք-ներուն վրայ, միայն Սիրանոյշ բան մը չէր ըսեր:

Համախմբումի օրն հասած էր, Վարդուհի զուրտեղը Սիրանոյշին սպասեց. չէր գար ան: Ետքը իմացան որ ուրիշ հրաւեր մը ընդունած էր. որ իրեն աւելի հաճելի էր:

Սիրանոյշ ծածկամիտ էր:

Շածկամիտ տղաքը ապագայ ստախօսներ և կեղծաւորներ են: Ինչո՞ւ համար անկեղծութեամբ չըսելինչ որ ընել կ'ուզենք: Ի՞նչ մեծ վնաս կար Սիրանոյշին համար մէկ հրաւերը միւսէն նախամեծար սեպելուն մէջ, ինչո՞ւ համար պահել, կեղծել:

Շողոմորդ մը եւ ստախօս մը

Գիտէ՞ք, ի՞նչ է շողոքորթութիւնը. շահաւէտ սուտ մըն է, որովհետեւ շողոքորթը կը փափաքի միշտ բան մը շահիլ կամ քաշել անորմէ զոր կը շողոքորթէ, նոյնպէս կեղծաւորութիւն մըն ալ է, որովհետեւ գըրեթէ միշտ շողոքորթը խորհածը չըսեր: Ահա այս է որ շողոքորթին այնչափ ցած նկարագիր մը կուտայ այնչափ արհամարհելի կ'ընէ զայն, Յիշեցէք լաւ այնչափ արհամարհելի, Ազուկը, Աղֆոնդէնի առակը, Ազուտն ու Աղուկը, Տևոէք, Աղ- ուէսը ի՞նչ միջոց ի գործ կը դնէ իր նպաստակին հասնելու համար: Սուտը կեղծաւորութեան կը միացընէ Ագուտին ձեռքէն պանիրը առնելու համար:

Ո՞չ մէկը շողոքորթենք : Երբէք ստիպուած չէնք
մէկուն հաճոյախօսութիւն ընել, մանաւանդ երբ այդ
մասին բան մը չենք խորհիր : Եթէ մէկուն համար
շատ լաւ բաներ չենք խորհիր, բնաւ իրեն այնպէս
չըսէնք . խօսակցինք, բայց զինքը չիշտղոքորթենք,
մանաւանդ անկէ բան մը ստանալու դիտունով :
Որչափ որ մէկը տողոքորթեամբ բարձրացնենք, այն-
չափ ինքովինքնիս կ'սորեացնենք :

Հաւատարիմ եղիր

Պղտիկ աղջիկ, վարժուէ հաւատարիմ ըլլալ խոս-
տումներուդ, հաւատարիմ՝ յանձնառութիւններուդ,
հաւատարիմ՝ պարտականութիւններուդ, հաւատա-
րիմ՝ զգացումներուդ :

Կիները շատ կը մեղադրուին փոփոխութիւնը սի-
րելնուն համար . մէկի կը թողուն իրենց հաճելի
եղած ամէն բան, ուրիշ մը գտնելու համար : Կ'ըսեն,
թէ կիները թեթեւ ու փոփոխամիտ են : Աշխատէ՛
որ բնաւ այս մեղադրանքը քեզի չընեն :

Լուրջ չես ըլլար, քանի որ մտքիդ, սրտիդ մէջ
փոփոխամութեան ձաշակ կայ : Երէկ առարկայ մը
քեզի գեղեցիկ եւ հաճելի թուեցաւ, այսօր կը մեր-
ժես . բայց երբեք փոխուած չէ ան, դուն ես փոխ-
ուած, քու ձաշակէ փոխուած : Ասանկ մի՛ ըներ՝ հաս-
տատուն կերպով կապուէ սիրած բաներուդ եւ այն
բաներուն, զոր պարտականութիւն ունիս սիրելու :
Հաւատարիմ եղիր ծնողիդ, հաւատարիմ՝ բարեկամ-
ներուդ, հաւատարիմ՝ խօսիդ . կը վստահացնեմ ենզ
որ սիրտ շատ հանգիս պիտի ըլլայ եւ ամեն մարդ ենզ
պիտի լարգի :

Ամէն զիւեր ինչորինքը հարցաֆնենել

Էլիզան լաւ սովորութիւն մը ունի : Ամէն իրիկուն
քնանալէ առաջ ինքնիրեն կը հարցնէ . « Սյոր ի՞նչ



գէշ բան ըրի » : Եւ օր շանցնիր, աւա՛զ, որ պակա-
գէշ բան ըրի » : Եւ օր շանցնիր, աւա՛զ, որ պակա-

տարեալ աղջիկ մը չէ . քեզի պէս է , փոքրիկ աղջիկ , շատ պակասութիւններ ունի , բայց կ'ուզէ բարելլալ եւ պիտի ըլլայ անշուշտ՝ ամէն իրիկուն այս պէս հարցուփորձելով ինքինքը :

Այո՛ , նմանէ էլիդային . երբ սենեակին մէջ ամէն բան հանդարտ եւ լուռ է , բան մը չիխանդարեր քեզի , քու հոգիիդ խորը մտիր , հարցուր քեզի . էլիդային պէս , թէ չար բան մը ըրի՞ր : Պիտի տեսնես որ ծովութիւն ըրիր , խենթութիւններ , շատախօսութիւն , թերեւս ստախօսութիւն , անհնաղանդութիւն , յամառութիւն ըրիր : Դուն պիտի վճռես վաղը այնպէս չըլլալ եւ պիտի քնանաս յառաջադրելով քաջարտութիւն ունենալ աւելի բարի ըլլալու : Մարդի պակասութիւնները այն ատեն լաւ կը հանջնայ՝ երբ ինքինքը հարցափորձէ : Բարիին ճամբռն մէջ կը կատարելագործուին ամէն որ լաւ որոշումներ տալով :

Եթէ գործաւոր կամ պատօնեայ ըլլամ

Եթէ գործաւոր ըլլամ , գիտեմ թէ ինչ պէտք եմ ընել գործու կատարեալ ընելու համար :

Երբ գործատան կամ գրասենեակի մը մէջ աշխատիմ , որոշեալ ժամին պիտի երթամ եւ աշխատութեան ժամերուն մէջ ժամանակս պիտի չկորսնցնեմ : Պիտի յիշեմ որ իմ եւ տիրոջս մէջ պայման մը կայ հաստատուած . թէպէտ եւ ասոր վրայ խօսած չենք : Քանի որ որոշեալ գումար մը կը վճարէ ինձի որոշեալ ժամերու աշխատութեան համար , եթէ կորսնցը նեմ ժամանակս , նոյն իսկ հինգ բոպէ , գողութիւն

ըլլամ կ'ըլլամ ի վեսա անոր , քանի որ ստացած գումարս միշտ մի եւ նոյնն է :

Բարի օրինակ պիտի տամ ամենուն . օրինակ պիտի ըլլամ խոհականութեան , քաղաքավարութեան , գործունէութեան , տիպար օրինակ այն մարդերուն , որոնք իմ քովս պիտի գտնուին :

Եթէ որ եւ է նկատողութիւններ ունիմ յայտնելու , զանոնք պիտի ներկայացնեմ քաղաքավարի եւ վայելուչ կերպով իմ վրայ հսկելու պաշտօն ունեցող անձին : Եթէ ստիպուած ըլլամ պաշտօնա թողուլ՝ պիտի չաշխատիմ ուրիշ գործաւորներու եւ պաշտօնեայներու ալ հեռանալուն պատճառ ըլլալ , որոնց պարուստի միջոցը միայն իրենց օրական վարձքն է : Լաւ գործաւոր մը պիտի ըլլամ :

Եթէ վաճառական ըլլամ

Եթէ վաճառական ըլլամ , պիտի յիշեմ որ ուղղամտութիւնը պէտք է տիրէ իմ ամէն գործառնութիւններուս մէջ :

Երբ գնորդ մը մէկ մէթր կտոր կամ մէկ քիլօ ապանք ուզէ , ճիշդ մէկ մէթր պիտի չափեմ եւ ոչ թէ 95 հարիւրորդամեթր , ոչ ալ մէկ քիլօյին տեղ 900 կրամ պիտի տամ , քանի որ ամբողջին գինը կը վընարէ : Եթէ պակաս տամ , կը նշանակէ թէ կը գողնամ : Եթէ մէկուն կը հաւտացնեն թէ առած կտորը բուրդ է , մինչդեռ լաւ գիտեն բամբակախառն ըլլալը , գողութիւն կ'ընեն :

Վաճառականի մը ուղղամտութիւնը հոն է , որ

ծախած առարկաներուն մէջ ոչ ոք կը խաբէ , ո՛չ քանակով եւ ո՛չ տեսակով :

Պիտի յիշեմ որ ուղամտութիւնը վաճառականին պատիւն է :

Վաճառականութեան մէջ լաւ եւ վատ զորձերը

Տիկին Անտրէ եւ տիկին Վիքթորին մանրավաճառի խանութ ունին : Տիկին Անտրէի խանութը աւելի ճոխ է : Օր մը Տիկին Վիքթորին կը նեղուէր , ստակի պէտք ունէր : Կը դիմէ դրացուհիին եւ անոր կ'ըսէ . « Գործերս լաւ չեն երթար , գնէ բոլոր ապրանքներս , ես կը քաշուիմ վաճառականութենէ » , և յն ատեն Տ . Անտրէ ինքնիրեն կ'ըսէ . « Պիտի օգտուիմ դրացիս նեղ զիճակէն , ապրանքները իրենց արժէքներն վար գնով պիտի գնեմ , լաւ առուտուր մը պիտի ընեմ » : Տիկին Անտրէ շատ աժան գին մը առաջարկեց գեղեցիկ եւ լաւ ապրանքներուն եւ խեղճ Տիկին Վիքթորին հարկէն ստիպեալ , տուաւ . թէ եւ քիչ մը ստակ առաւ , բայց ոչ այնչափ որչափ պէտք ունէր : Տիկին Անտրէ շատ գէշ վարուեցաւ :

Թո՛ղ արդարութիւնը առաջնորդ ըլլայ մեր վաճառականական գործերուն : Մէկու մը նեղութենէն չօգտուինք գնելով անոր ունեցածը , եւ բոլորովին զայն կործանենք անոր կորուստովը հարստանալու համար : Ցիւենք Աւետարանի խօսքը , թէ ինչ որ կ'ուզէք թէ ուրիշները ձեզի ընեն՝ դուք ալ նոյնը քրէք անոնց :

Եթէ ուրիշներուն իով պատօն ունենամ

թերեւս օր մը ստիպուիմ ուրիշներուն քով մտնել անոնց աշխատութեան օգնելու կամ անոնց ծառայելու համար :

Վարած համեստ պաշտօնիս համար երբեք ինք-զինքս նուաստացած պիտի չհամարեմ , որովհետեւ զի-սեմ թէ մարդուն արժանիք տուղը լրած զործը , վա-րած պատօնը չէ , այլ այն յատկութիւնն է որ կը ցու-ցընե իր պարտականութիւնը կատարելուն մէջ :

Ինձի վատահուած շահերուն վրայ պիտի հսկեմ , ինչ որ ինձի չվերաբերի՞ ինձի պիտի չսեպհականնեմ : Խօսքերուս և վարմունքիս մէջ չափաւոր և խոհեմ պի-տի ըլլամ , վաճառատան մէջ անցած դարձած բաները մէկուն պիտի չպատմեմ : Շողոքորթութիւն պիտի չը-նեմ ընծայ ստանալու կամ ժառանգութեան մէջ մաս ունենալու համար , վերջապէս որոնց քով որ ապրիմ՝ ընտանիքի անդամի պէս պիտի ըլլամ : Այս պայման-ներուն մէջ պիտի յիշեմ թէ ուղամտութեան եւ գաղ-նապահութեան դիմ զործելը ցածութիւն է եւ վսա-նութեան գեղծում :

Եթէ ընտանիքի մայր ըլլամ

Ամէն օր կը լսեմ որ կ'ըսեն . « Պզտիկ աղջիկ , ինչպէս երջանիկ ես . վայելէ երջանկութիւնդ , երբ ընտանիքի մայր ըլլամ պիտի տեսնես թէ կեանքը որչափ դժուարին եւ տառապեցուցիչ է : »

Ասիկա անհանգիստ կ'ընէ զիս քիչ մը ... կը խոր-հիմ թէ այս կոչումը շատ դժուար ըլլալու է քանի

որ ամէն մարդ համաձայն է նոյն բանը կրկնելու: Եթէ այսպէս է, հիմակուընէ կ'ուզեմ խորհիլ այն պարտականութիւններուն վրայ, զոր պիտի ունենամ ընտանիքի մայր եղած ժամանակս, կը փափաքիմ կանխաւ ատոր համար պատրաստուիլ լաւ դիտաւորութիւններ առաջադրելով: Համբերութիւն պիտի ունենամ, որովհետեւ պիտի յիշեմ թէ մայրս որչափ համբերութեան պէտք ունէր զիս մեծցնելու համար: Խոհեմութիւն պիտի ունենամ չընելու ո՛ւ և է ճեռնարկ ընտանիքիս շահերուն դէմ, խնայող պիտի ըլլամ, որպէս զի միայն ճիշտ պէտք եղածին չափ ծախսեմ: Պիտի սիրեմ աշխատուքիւնը, իմ տունս տեղոս պիտի փափաքիմ մաքուր պահել, գեղեցկացնել. Ժամանակս սլիտի չգործածեմ դրացիներու հետ շաղակրատելով, այցելութիւններով կամ պարապ տեղը դուրս ելլելով: Վերջապէս բոլոր սրովս պիտի սիրեմ եւ խնամեմ ուրեզ եղողները: Այսպէսով ինձի բնադրուար պիտի չըլլայ անօնց կեանքը բաղյը եւ երջանիկ դարձնելը:

Երէ կեանքիս մէջ միայնակ ծերանամ

Ամէն կին ընտանիք չկազմեր, Այէն կին ամուսին և զաւակ չունենար խնամելու: Կան որ կը ճերանան իրենց ծնողքին մօտ և երբ անոնցմէ ալ զրկուին, մինակ կը մնան: Ասոնք պառուած աղջիկներ կ'ըստին: Տղա՛ս, մատադատի դպրոցակա՛ն, ո՞վ կ'ապահովցնէ քեզ թէ դուն ալ օր մը պառուած աղջիկ պիտի չդառնաս:

Եթէ պարագաներուն բերումովը այդպէս կեանք մը վարես, մինակ մնալովդ իրաւոնք չունիս անձնա-

սէր ըլլալու: Բարութեան, անձնուիրութեան, մարդասիրութեան, ազնուութեան և ընկերսիրութեան պարտականութիւնները ամէնուն համար են: Ընտանիք չունենալով, քրոջ քաղցր պարտականութիւնը կատարելու պիտի նուիրես ինքզինքդ. թշուառներուն քով բարեսէր, գործունեայ և մարդասէր քրոջ դերը պիտի կատարես: Ընտանեզուրկ կինը կրնայ իր սիրան ամբողջովին նուիրել աղքատներուն: Այսպէսով իր կեանքը գործունեուրեան մէջ կ'ըլլայ եւ վիւըը կը նեռանայ իրմէ:

Իմ առաջադրութիւններս

Ահա թէ ի՞նչ ընել կը փափաքիմ կեանքիս մէջ:

Կը փափաքիմ սիրել իմ պարտականութիւնս, որովհետեւ պարտականութիւնը սիրել, Աստուած սիրել ըսել է:

Կը փափաքիմ աշխատութեան յարել, և չանցնել օրս գոնէ մէկ ժամ աւանց օգտակար բան մը ընելու:

Կը փափաքիմ զիս շրջապատողները երջանկացնել, եթէ պէտք ըլլայ, անձնական հաճոյքս իսկ մոռնալով:

Կը փափաքիմ գործս ամբողջովին կատարել և միշտ ուրախութեամբ ընել զայն:

Կը փափաքիմ չուրջս բարիք ընել, խորհիլ անոնց վրայ որոնք կը տառապին և ինձմէ աւելի քիչ հարստութիւն ունին: Խւրաքանչիւրին պիտի տամ ինչ որ անոնց պէտք է:

Կը փափաքիմ լաւ աշակերտուհի մը ըլլալ, յետոյ պատուաւոր փոքր աղջիկ մը՝ ապա պատուաւոր կին մը ըլլալու համար:

Կը փափաքիմ ամեն օր ինքզինքս կատարելագործել:

Մարմինին մայրութիւնը

Միթէ պչրանքի՞ն համար է որ ձեռքերնիս, երեսնիս կը լուանք, եղունգներնիս կը մաքրենք, մազերնիս կը սանտրենք, բաղնիք կ'երթանք և հագուստնիս կը խողանակենք։ Ո՛չ, պչրանքը բնաւգործ չունի այս անհրաժեշտ խնամքներուն մէջ, զորի դործ կը դնենք մաքրութեան համար։

Եթէ կը փափաքինք որ մեր մարմինը և զգեստները մաքուր ըլլան, այն յարգանքին համար է որ կը տածենք դէպի մեր անձը և դէպի մեր հոգին։ Մեր մարմինը պատուելով կը ծառայենք մեր հոգիին օգտին, ու կը գործածէ մարմինը իբր ծառայ։ Ո՞վ կը նայ աղտոտ և անհաճոյ ծառայ մը պահել։

Անձերնիս մաքուր պահելով, մեզ տեսնողներուն յարգանք և ակնածութիւն կը ներչնչենք և անոնց համակրանքը կը գրաւենք։ Մաքութիւնը շատ հիւանդութիւններէ կ'ազատէմեզի։ Փոքրիկ աղջիկ, մաքուր եղիր առանց պչրանքի։ Դիւրին է աս։ ջուրը ձրի է և օճառը շատ սուզ չէ։

Հանոյիդ՝ ուտել խմելու մէջ մի՛ փնտուեր

Անցեալ օր իօժէնիին տունը հանդէս կար՝ իր ծննդեան տարեղարձին պատճառաւ։ Մայրը անոր փոքրիկ ընկերներէն շատերը հրաւիրած էր իրենց հետ հաշելու։ Պատրաստած էին քաղցրահամ անուշելէններ, պտուղներ, կարկանդակներ, ամէն տեսակ շաքարեղէններ։ Իօժէնի, որ որկրամոլ էր, այնչա՛փ կերաւ, այնչա՛փ, որ հանդէսին կէսին հիւանդացաւ



և պէտք եղաւ զայն հանուեցնել, անկողին դնել և գեղ խմցնել, մինչդեռ իր փոքրիկ բարեկամուհիները պարտէզը կը պարէին։

Այս պատմութիւնը մինակը չէ իր տեսակին մէջ։ Քանի՛ անգամ ասանկ բաներ ձեզի ալ պատահած են կամ կը պատահին։ Դուք ծումկալ եղած չէք, ընդհակառակը որկրամոլ եղած էք և ձեր միտքը ինչպէս նաեւ ձեր մարմինը նեղուած են։

Վարժուեցէք ուտել ձիշտ այնչափ՝ որչափ պէտք է ձեր ախորժակը գոհացնելու համար։ Կերակուրը թէ լաւ ըլլայ թէ գէշ, ձեր ստամոքսները միշտ միեւնոյն քանակութեամբ՝ կը պարունակեն և միշտ ձեր առողջութեան վաստ է, երբ չափը կ'անցընէք։

Ժուժկալութիւնը չծանրաբեռներ միտքը, և մարմինը առողջ կը մնայ։ Առանց ծումկալութեան կենդանիներու դասակարգին կը հաւասարի մարդ։

Խնայել սորվինք

Թերեւս ըսէք, «Խնայողութիւնը ինծի չվերաբերիր, որովհետեւ ո՛չ ստակ ունիմ և ո՛չ ալ ուրիշ բան ըիր», կը մոռնաք որ նոյն իոկ այն պայմանին մէջ, մը», կը գտնուիք, կրնաք խնայողութիւն ընել: Հագուստներ չունի՞ք, որոնց տեղ նորեր պէտք է չինել՝ երբ մաշին տետրակնե՞ր, գրքե՞ր՝ որոնք պէտք է նորոգուին երբ հիննան:

Աշխատեցէ՞ք, որքան կարելի է՝ որպէս զի ձեր հագուստները երկար ատեն դիմանան: Զգուշացէ՞ք ասդին անդին քաքրտելէ որպէս զի զանոնք չի մաշին. ձեր գրքերը շաղտոտէք և ձեր տետրակներուն թերթերը չպատուէք: Եթէ մէկ ամիսէ ետք, այսպէսով մէկ երկու տետրակի գին խնայէք (որ ձեզի շատ քիչ բան կը թուի) և եթէ շարունակէք այսպէս ամէն ամիս, դպրոցական տարիէն վերջը պիտի տեսնէք որ ձեր խնայածը՝ դահեկաններ կազմած է:

Մտարերեցէ՞ք որ՝ խնայած դրամներով կարելի է նոյն խոկ մարդասիրական գործեր ընել աղքատներուն հանդեպ:

Այն որ խնայել զիսցած չէ

Մեծ քաղաքի մը փողոցին մէջ կնկան մը հանդիպեցայ որ ցնցոտիներ հագած կը մուրաք: Իր պատմութիւնը հարցուցի: Պատմութիւնը շատ տիսուր էր, այնչափ՝ որչափ իր յանցանքները խոստովանիլը:

Առանց շատ հարուստ ըլլալու դիւրակեաց է

եղեր: Ընտանիքի հոգ չունենալով, միայն իրեն համար կ'աշխատի և լաւ կը վաստկի եղեր: Բայց զարդարանքի փափաքը, փայլելու ձգտումը, միայն լաւ բաներ ուտելու սովորութիւնը, կ'սպառեն բոլոր վաստկածը: Երբէք խորհած չէր խնայել: Ծերութիւնն ալ վրայ հասնելով քիչ գործ կը գտնէ, որովհետեւ առաջուան պէս արագ չիրնար աշխատիլ, քիչ քիչ գործը այնչափ կը պակաի, որ այլեւս բան մը չունենար աշխատելու: Տկարութիւնը և հիւանդութիւնը վրայ կը հասնին: Այն ատեն, կ'սկսի իր թշուառութիւնը, ու կը հասնի այն աստիճանին ուր զինքր աեսայ:

Դուք այն տարիքին մէջն էք ուր մարդ կրնայ լաւ խորհիլ: Ցղաքս, մտածեցէք որ միշտ երիտասարդ չպիտի մնաք և թշուառութիւնը ձեր մէջէն անոնց կը հետամտի, որոնք չեն գիտեր իմաստութեամբ աշխատիլ և համբերութեամբ խնայել: Խոսյողութիւնը ընկերական պարտականութիւն մըն է:

Խնայողութեամբ ծերութեան հանգիստ

կը պատրաստեն

. Այնպիսի ժամանակի մը մէջ ենք, ուր դրամը քիչ կը վաստկուի և ապրուստը սուղ է: Շատ մարդիկ միջոց կը փնտռեն որ իրաց այս դառն վիճակը բարութեն: Բայց, աւազ՝ այս միջոցները գտնել և գործադրել գիւրին չէ. — սակայն մէկ միջոց մը կայ, որ ամէն մարդու ձեռքին տակն է:

Երբ դպրոցէն ելլէք և գործ մը ընտրէք ու ստակ վաստկիք, առաջին օրէն մտածեցէք շատ փոքր մաս

մը մէկ կողմ գնել՝ ձեր ծերութեան հանդիսաւն ապահովելու համար։ Պիտի գայ օր մը ուր ձեր յոդնած բազուկները այլ եւս պիտի չծառայեն, այն ատեն ձեր ըրած խնայողութիւններովը պիտի ապրիք, առանց ուրիշն վրայ բեռ ըլլալու։

Ի՞նչու համար խնայողութիւնը պարտակա-

նութիւն մրն է

Խնայողութիւնը մեզի համար ո՛չ միայն օգտակար և շահաւետ է, այլ և ընկերական պարտականութիւն մըն է։

Ընկերութիւնը ժողով մըն է մարդոց՝ որոնք հասարակց նպատակի մը համար կ'աշխատին և փոխադարձարար կ'օգնեն իրարու։ Եթէ անոնցմէ մէկը գործ մը չընէ, արդիւնք մը առաջ չըերէ, բանի մը պէտքը չզգայ, ահա այն ատեն ուրիշներու բեռ կ'ըլլայ։

Պձնասէր և շոայլ գործաւորը, որ իր երիտասարդութեան մէջ բան մը խնայած չէ և բոլոր վաստկածը զարդի ու սնոտի բաներու մսխած է, ծերութեանը ժամանակ ընկերութեան բեռ է։ Երանի թէ մէկ հոգի ըլլար այսպէս վարուողը։ բայց հարիւրաւոր, հազարաւոր, միլիոնաւոր են ասանկները։

Ան որ կրնայ խնայողութիւն ընել ու չըներ՝ մարդկային ընկերութեան հանդէպ անիրաւութիւն կը գործէ և իր անձնական երջանկութիւնը վտանգի կ'ենթարկէ։

Պննասիրութիւնը խնայողութեան դէմ է

Պզտիկ աղջի՛կ, քեզի կը ճանչնամ առանց քեզ տեսած ըլլալու և բան մը պիտի ըսեմ, որ վստահաբար ճշմարտութիւնն է։

Դուռ քիչ մը պճնասէր ես, ո՛հ, չատ քիչ, բայց այդքանը իսկ շատ է։ Դուռ կը սիրես ժապաւէնները, ժանեակի կտոր մը, գլխարկիդ վրայ ծաղկի մը և եթէ երբեմն ուտելիքի և զարդարանքի մէջ քեզի ընտրութիւն ընել տան, վերջինը կ'ընտրես։

Եթէ այս միտումդ յուղղես, վերջը երբ մեծնասու քիչ մը դրամի տէր դառնաս, բոլոր խնայածդ զարդարանքի կը ծախսես։ Եւ սական ի՞նչ է ժուպաւէն մը, կերպաս մը, ծաղկի մը։ Ոչինչ, չնչին րան մը, սակաւատեւ բան մը, որ ամիս մը վերջ, շաբաթի մը վերջ, թերեւս վազը, պիտի թոռմի, աւրուի, գունատի։

Այս ամէնը մէկ կողմ ձգէ, պարզութեան յաւ սովորութիւնը առ, որ հասակդ առած ժամանակ վարժուած ըլլաս զարդի համար քիչով գոհ ըլլալ և նեղ օրերու համար մէկ կողմ գնես սնոտի բաներու տալիք ստակդ։

Ի հարկին վեճանձն ըլլանք

Աննայի ծնողքը սովորութիւն ունէին երբեմն երեմն քանի մը մանը դրամներ տալ անոր։ Աննա խնայող է, իր դրամը տուփին մէջ կը դնէ կը պահէ։ Մինչեւ հոս լաւ է, այնպէս չէ։

Բայց Աննա վեհանձն չէ։ Բնաւ քաջութիւն չունի

այն թանկադին տուփը բանալ և քանի մը դահնկան հանել մօրը համար ծաղկեփունջ մը, մեծ մօրը համար որ և է բան մը գնելու և կամ հեռաւոր բարեկամի մը յիշատակ մը դրկելու համար Աննա խնայողութիւնը կը չափազանցէ : Պէտք է յարմար ժամանակին



ծախսել գիւնալ, նոյն խոկ եթէ ողովութիւն տալու համար ալ պէտք չըլլայ . կարելի է մէկուն հաճոյք պատճառելու համար ծախսել Պէտք չէ այնչափ հեռատես ըլլանք որ զրկենք ուրիշները գոհունակութիւն մունենալէ երբ ատիկա կ նանք ընել քիչ մը վեհանձնութեամբ : Խելացի խն սյողութիւնը՝ խելացի վեհանձնութեալ նոյն է : Թէ մէկին թէ միւսին համար անհոգ չըլլանք :

Բախտի խաղ

Երբեմն կիները շատ խաղացող էին : Ժէ . ՃԹ . դարերու մէջ հազուագէպ չէր տեսնել կիներ , որոնք իրենց ամբողջ հարստութիւնը թղթախա-

զով կորսնցուցած էին : Այսօր այս խաղասիրութիւնը կանանց մէջ պակած է :

Սակայն պէտք է ասկէ զգուշանաք , որովհետեւ կրնայ նորէն շատնալ : Պէտք չէ որ բախտի այն փոքրիկ խաղերուն յարիք , որոնք կը հաստատուին հասարակութեան տեղերու կամ տօնավաճառներու մէջ : Զեզի կ'առաջարկեն շատ պղտիկ գումարով շահիկ փորձել , շատ վաստկելու համար քիչ վճարել կուտան , տասը փարա , քսան փարա , երեսուն փարա , բայց ետքէն կը տեսնէք որ ամենափոքր առարկայի մը համար իր գինէն տասն անգամ աւելին վճարած էք :

Երբեմն ալ գրացիներու մէջ կ'առաջարկեն խաղի մը մասնակցիլ . մեծ բան մը չէ . միայն քանի մը փարա . բայց խաղը կ'երկարի . կը կորսնցնես , կ'ողես տուածդդ ետ առնել և ահա կը տեսնես որ զգուարութեամբ խնայուած ստակը կ'երթայ : Զգոււացիք բախտի խաղերէն , որոնց միւս սկիզբը յանկուցիչ է եւ վերջը վասնգաւոր :

Աշխատութիւնը կը վաճէ ձանձրոյթը

Հայր մը ծոյլ աղջիկ մը ունէր : Օր մը անոր ըսաւ «կը փափաքիմ քեզի հաճոյք մը պատճառել , այս վայրիեանէն սկսեալ այլեւս գործ մը պիտի չընես , մատներդ պիտի մասն առանց բան մը ընելու , որովհետեւ աշխատութիւնը շես սիրեր , և այսպէս անգործ պիտի մասն որչափ որ կ'ուզես» :

— Ո՞չ , հայրիկ , շատ չնորհակալ եմ , աղաղակեց

ուրախութեամբ, վստահ եմ թէ միշտ այսպէս պիտի
տեւէ:

Հայրը ժպտեցաւ եւ բան մը չըսաւ: Երկու օր



ետքը պղտիկ աղջիկը կը խնդրէր հօրմէն որ իրեն
ձեռագործ մը, ասեղ մը և մատնոց մը տայ:

Այս բանը ձեզի կը զարմացնէ, այնպէս չէ՞: Դուք
ալ միեւնոյն փորձն ըրէք, միեւնոյն արդիւնքը պիտի
ունենաք: Որովհետեւ անզործութիւնն ու պարապու-

թիւնը մեզի համար բնական չեն: Զեռքերնիս ստեղծ-
ուած են աշխատելու համար և մեր միտքը աշխա-
տութեան պէտք ունի չտկարանալու և չընդարձանա-
լու համար: Այն աղջիկը որուն վրայ խօսեցայ,
շուտով յոգնած էր շրջագայութեան երթալ գալէ,
տան շանը հետ խաղալէ, կամ պատկերներ նայելէ:
Բնազդմամբ աշխատանքի կը դառնար, "որ զի՞նքը
կ'զրուցնէր, ժամանակ անցնել կուտար": Աջասու-
րիւն սիրելի՝ ձանձրութեան դիմ ինքզինքը ապահովել է:

Ե.— ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄՐ

Թերեւս ձեզի այլանդակ երեւի, տղա՛քս, կենդա-
նիներու հանդէպ պարտականութիւն ունենալը. խոր-
հեցէ՛ք սակայն որ անոնք արարածներ են, զոր մեր
իմացականութիւնը՝ մեր գործին ծառայեցուց. բայց
մեր իշխանութիւնը կը դադրի հոն, ուր կ'սկսի անոնց
տանջանքը:

Կենդանիները Աստուծոյ արարածներն են, և
անոնց հետ խստութեամբ վարուիլը Արարիչին գործը
արհամարել կը նշանակէ՝ և ստորնութիւն ալ է, որով-
հետեւ մեր իմացականութեամբ և խելքով անոնց
տէրն ենք, և գերազանց անոնց վայրենի ուժէն:

Դո՛ւք, մասնաւորապէս, փոքրիկ աղջիկներ, ան-
զութ չէք կենդանիներու հանդէպ. բայց կամչոտ
էք, և խաղալու համար շատ անգամ կը նեղացնէք
շունը, կատուն, ոչխարը, այծը կամ տանը թռչու-
նը: Այսպէս մի՛ ընէք: "Անոնց հետ առարկայի մը
պէս մի՛ վարուիք: Խորհեցէք թէ կը չարչարուին, կը

նեղուին, թէ կը յիշեն գէշ վարմունքները կամ անհամ ու անտեղի կատակները, որոնց ենթակայ եղած են: Խնայեցէք անոնց: Չեն գանգատիր, սոսոյդ է, բայց նայեցէք անոնց աչքերուն, երբ զանոնք չարչարէք ու անոնց վլաս հասցնէք, իրենց նայուածքին մէջ պիտի տեսնէք թէ՛ ձեզ կը յանդիմանեն՝ ծեր խրասարտութեան եւ ստորենութեան համար:

Կենդանիները նեղելէ զգուշանան

Հին ժամանակ, — պիտի հաւատա՞ք — գիտնական մը կար, որ կ'ենթադրէր թէ՝ կենդանիները նեղութիւն չեն զգար ինչպէս տունկերը և փայտերը, բարեբախտաբար շատ մարդ չգտաւ որ իրեն համակարծիք ըլլային:

Այո՛, կենդանիները իրենց մարմիններովը կը նեղուին գրեթէ մեզի չափ: Իրենց կարողութենէն վեր աշխատութեան մը ենթարկել, զայն չափէն աւելի բեռնաւորել, ահա՛ խսկական յանցանքը, որուն համար մեր խիզճը կրնայ մեզ յանդիմանել:

Կան անհրաժեշտ պէտքեր, որոնց պարտինք համակերպիլ, օրինակի համար, մեր սնունդին համար կենդանիները սպաննելը, եթէ կը ճանչնանք այնպիսի մարդիկ, օրոնք այս դժոնդակ պաշտօնը կը վարեն՝ ամէն միջոց ի գործ դնենք զանոնք քաջալերելու որ հնար եղածին չափ շուտ կատարեն այս տիսուր գործը, այնպիսի եղանակով մը՝ որ կարելի եղածին չափ քիչ նեղուելով մեռնի կենդանին:

Մենք պարտականութիւն ունիեմ ամեն արարածներու, եոյն խսկ կենդանիներուն՝ չպատճառել անօգու նեղութիւն մը:

Կենդանիներու նանդէպ ունեցած զուրգուրանիք չափագանցելու չէ

Անցեալ օր, տիկին մը տեսայ որ իր շունը շըրջագայութեան կը տանէր: Վիզը կապուած ժապաւէնէն բռնած էր և երբեմն երբեմն կը ծռէր զայն շցելու՝ գգուելու և համբուրելու համար, ամէն տեսակ փալաքչական անուններ տալով: Յետոյ մտաւ կարկանդակավաճառի մը խանութ և անոր կարկանդականներ կերցուց: Յետոյ օդը աւրուած ըլլալուն, գրպանէն տեսակ մը հագուստ հանեց և անոր հագցուց ու ապա թեւին տակ առաւ կուրծքին սեղմելով, այնպէս որ հովէ և ցրտէ լաւ մը պաշտպանուի: Միշտ զայն կ'անուանէր: «Փոքրիկ սիրելիս, պվտիկ աղաս»: Ինքզինքը անոր մայր կը կոչէր:

Ահա զգայնիկութեան կատարեալ չափազանցութիւն մը ասիկա տեսնելով՝ մարդ միտքը կը բերէ աղքատ աղաքները, որոնք առանց հացի և հագուստի մնացած են, կը խորհի թէ՝ այն աղաքը շուներին անբախտ են, թէպէտ և իրենք հոգի, իմացականութիւն և խիզճ ունին, որ աւելի բարձր է քան այս շուներուն ունեցած մտացիտութիւնը: Ո՛չ, մինք իրաւունք չունինք այսպէս դուրգուրանք շույլել անտոււններուն: Եթէ մենք անոնց յարգելի և բարեկամական անուններ տանք, մի և նոյն ժամանակ յիմար և գէշ գործ մը ըրած կ'ըլլանք: Եթէ խեղճերը ըլլային այլ եւս, այն ատեն ներելի էր կենդանիները փալաքչել: Պիսէ և միայն բաղցրութեամբ վարուինք: Ահա՛ ինչ որ կը պարտինք անոնց:

ԿԵՆԴԱՆԻՑԵՐՈՒՆ ԻԵՏ ՂԱՐՈՒԵԼՈՒ ՄԵջ

ՇԱԽ ՌԵՆԹՈՒԲ

Ազարակապանուհի մը էշուն վրայ նստած շուկայ կ'երթար և ճամբան կ'զբունուր (եթէ կարելի է այսպէս ըսել) ձեռքի գաւաղանով անոր փոքրիկ հարուածներ տալով։ Խեղճ կենդանին կը սոսկար ամէն մէկ հարուածին, բայց հնազանդութեամբ կը շարունակէր իր ընթացքը։ Վերջապէս անդամ մը աւելի զօրաւոր հարուած մը ընդունեցաւ, կենդանին մանչեց, գաւաղանը կոտրեցաւ ազարակապանուհիին ձեռքին մէջ, որ բարկութեամբ կտորները հեռուն նետեց։ Խեղճ էշը, ականջը բոլորովին արխւնուայ կանդ առաւ ու ճամբուն մէջ տեղ անշարժ մնաց, թէ ի՞նչ կ'անցնի իր մթին իմացականութեան մէջ, չենք գիտեր. բայց այն վայրկեանէն յետոյ ա'լ չհնազանդեցաւ, և ազարակապանուհին ի զուր կը քաշէր սանձէն որպէս զի քալեցնէ. կենդանին անշարժ իր տեղը մնաց։

Շուկայի ժամանակն անցաւ ու ազարակապանուհին չկրցաւ քաղաք համարի իր բանջարեղիները ծախելու համար։

Կենդանիները իրենց համար վայրենի զօրութիւն կամ կամք ունին մեղի դէմ ինքզինքնին պաշտպանելու համար։ Անոնց հետ եթէ միշտ քաղցրութեամբ վարուինք անոնք մեղի հնազանդ պիտի ըլլան։ եթէ անդութ ըլլանք անոնց հանդէպ՝ պիտի ընդվիզին, կամ նեղութենէ պիտի մեռնին։ Այսպէսով անոնց մատուցած ծառայութենէն պիտի զբկուինք և մեր անդութեանը համար պիտի պատժուինք։

Ի՞նչպէս պիտի ոչնչացնենք վնասակար կենդանիները

Կան կենդանիներ, որոնք իրենց վայրենութեամբը կամ գործած աւերմունքովը ամենամեծ չարիքը պիտի հասցնէին մարդկային ընկերութեան, եթէ անոնց դէմ պաշտպանուելու միջոցները չունենար ան։ Գայլերը, վագրերը, թունաւոր օձերը այս տեսակէն են։ Ուրիշ աւելի պղտիկ կենդանիներ ալ կան, ինչպէս են դաշտային մուկեր, տեսակ տեսակ թռչուններ, միջատներ, որոնք վնասակար են։

Իրաւունք չունինք պարապ տեղը զանոնք նեղելու վանդակներու մէջ չարչարելով և իրապէս տանջել՝ կամաց կամաց մեռցնելով։ Եթէ իրաւունք և պարտականութիւն ունինք անոնցմէ ազատելու, թէ ինքոզինքնիս և թէ ուրիշները պաշտպանելու համար, նոյնպէս և պարտական ենք շատ արագութեամբ ոչընչացնել զանոնք։ Բնուած վայրենի կենդանի մը անօթութենէ մեռցնելը, ջղջիկ մը կամ բու մը շտեմարաններու և վարախներու գրանը ողջ ողջ գամելը, անդութիւն է և անվայել քաղաքակարթուած մարդուն։ որ հոգի ունի և կը հաւատայ տիեզերական բարութեան, արդարութեան։ Այն որ անգուք է կենդանիներու հանդեպ՝ դիւրաւ կրնայ նաեւ չարուքիւն բնել իր նմաններուն։

ԴԵՂԵցիկ կնանին

Ճամբուն եղերքին վրայ հին ոստախիտ գեղեցիկ կնձնի մը կար։ Անոր ճիւղերուն մէջ թռչունները

իրենց բոյնը կը դնէին և ամառուան ամբողջ գիշեր-ներ սոխակներ հոն կ'երգէին։ Ցերեկը արեւէն ու անձ-րեւէն կը պաշտպանուէր յոգնած ճամրորդը, նոյնպէս անոր ստուերին տակ կը նստէին երկրագործներ՝ հանգստանալով և խօսելով։

Օր մը տղաք կը խորհին ճիւղերուն վրայ մագըլ-ցիլ և մէկիկ մէկիկ հոն բոյն դրած թոչուններուն հաւկիթները գետին նետելով կոտրել։ Ասով թոշուն-ները կը հեռանան։ Շուտով կնձնին կը մերկանայ և այլ եւս ստուեր չտարածեր։ աշխատող երկրագործ-ներն ալ չեն խմբուիր անոր շուքին տակ։

Ինչո՞ւ համար տղաք այս յիշարութիւնը գոր-ծեցին։ Օգտակար և հաճելի բա՞ն մը ըրին արդեօք։ Անշուշտ ըրածներնին գէշ բան մըն էր։ Բնութեան մէկ գեղեցիկ գործը ոչնչացուցին։ Հրջակայ մարդոց անբախութիւն պատճառեցին, գեղեցիկ թոչուննե-րուն ուրախութիւնը հեռացուցին, և յոգնած ճամ-րորդին համար անկէ վերջ այլ ևս ապաստանելու և հանգստանալու անկիւն չմնաց։

Ինչ որ օքտակար է, ինչ որ զեղեցիկ է, ինչ որ բը-նուքեան զարդն է եւ մարդոց ուրախութիւնն է՝ չոչըն-չացնեն։

Զ. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Մարդկային աշխատութեան արդիւնքը յարգենի

Տղաք, երբ առանց խորհելու ձեր տետրակներէն մաքուր թերթեր կը պատռէք և մէկդի կը նետէք, երբ թեթեւամսորէն գտածէ արձանիկ մը կը կոտրէք, երբ միրատով մեքենաբար կը կտրէք ասուիի կտոր մը, անշուշտ չէք խորհիր թէ վլսասկար գործ մը կ'ընէք։ Ձեր այդ ոչնչացուցածները, շատ աշխատութեան, շատ ջանքի, շատ մտածութեան արդիւնք են։ Քանի-

գործաւոր, քանի՛ հնարիչ աշխատած են յառաջ րե-բելու այն ամէնը զոր գուք կ'ոչնչացնէք խնդալով, այն թղթի թերթը, այն ապակիէ կամ յախճապակիէ ամանը կամ այն ասուիի կտորը։

Առանց պատճառի բանի մը մի վլսաէք։ Այն առարկաները զոր գուք կ'արհամարէք, կրնան ուրիշի մը օգտակար ըլլալ։ Նոյնպէս կրնան ու է արժէք մը ունենալ այդ ամէնը, զոր գուք իսպառ ոչնչացուցիք։ Երբեմն ալ ձեր ծնողները բաւական աշխատանք կրած են զանոնք ձեռք բերելու համար։ Անօրուս ևեղը բան մը մի կոտրէք, բան մը մի՛ ոչնչացնէք։

Մարդասիրութիւնը արդարութեան նով

Ձեր մայրը և իր դրացուհիներէն մէկը փոքրիկ հող մը գնեցին միասին, իւրաքանչիւրը վճարեց կէս զինը։ Բայց այն գործաւորը, որ յանձն առած էր հողը երկուքի բաժնել, կը սիալի և դրացիին բաժի-նը պատիկ կ'ըլլայ։ Ձեր մայրը, կ'անդրադառնայ, շուտով սիալը ուզզել կուտայ և դրացիին բաժինը անոր կը վերադարձնէ։ Ձեր մայրը սրտին մէշ ունե-ցած արդարութեան գգացումին կը հնագանդի, ար-դար է ան։

Սակայն, քանի մը տարի յետոյ դրացին բոլոր ունեցածը կորսնցուց։ Մնաց միայն այն փոքրիկ հողը, որ իր ընտանիքին պիտոյքին չըաւեր։ Շատ անդամ ձեր մայրը անոր կ'օգնէ ստակ կամ տղոցը համար հագուստ տալով։ կամ մէկուն կը յանձնարարէ որ փոքրիկ գործեր տան։ Ձեր մայրը մարդառէք ալ է։

Տղաք, յիշեցէք որ արդարութիւնը միայն բաւա-կան չէ ամէն մարդ երջանիկ ընելու։ Արդարութեան

մօ՛ զոր մեզ կը ներշնչի բանականութիւնը, դնենք մարդասիրութիւնը, զոր մեր սիրտը կը թելադրէ:

Կարեկից ըլլանի

Զեր ծանօթներէն մէկը կրնայ մեծ դժբախտութեան մը հանդիպել: Ժամանակ մը վերջը երբ անոր հանդիպելով առիթ կ'ունենանք խօսելու, պէտք է շատ փափկութեամբ գարուիք և ըսէք թէ իրեն վըշտակից եք: Այն անձը ձեր համակրութենէն քաջալերուելով, տեղն ի տեղը ձեզի կը պատմէ իրեն պատհած դժբախտութիւնը:

Քանի որ բաւական չէք ճանչնար զայն, պատմած շատ մը մանրամասնութիւնները ձեզի չեն հետաքրքրեր, բայց պէտք է համբերութեամբ մտիկ ընէք և նոյն իսկ երբեմն քաղցր խօսքեր աւելցնէք: Այսպէսով իր վշտացած սիրտը կ'սփոփուի, որովհետեւ կրնայ մէկուն խօսիլ որ կը հետաքրքրուի և իր վիշտը կը հասկնայ:

Այսպէս վարուելով, ձշմարիտ մարդասիրական զործ մը ըրած կ'ըլլաք: Աստուծոյ մեզի հրամայած մարդասիրութիւնը՝ չկայանար միայն ողորմութիւն ընելուն մէջ, Բաւական չէ ստակ տալ: Պէտք է նաև իիչ մը նեղուիլ զիտնալ, վետակ սրտերը միսիրարելու և սփոփուելու համար:

Ողորմութիւն ըրէ՛, երբ կրնաս, բայց միւս
մարդասէր եղիր

Դպրոցի ճամբուն վրայ, կոյր ծերունի մը ողորմութիւն կը խնդրէ: Սաստիկ տաք է: Խեղճ ծերուկը

գլխարաց մնացած է արեւին տակ, որովհետեւ հովը թռուցած էր գլխարկը: Թէեւ ձեռքով ասդին անդին փնտռած էր, բայց չէր կրցած գոնել: Շատ աշակերտուհիներ քովէն կ'անցնին, փափաքելով ստակ տալ, բայց զրապաննին բան մը չունենալով տիրութեամբ կը հեռանան, որովհետեւ բոլորն ալ բարի տղաք են: Անոնց մէկը Մարիսում անունով, ինքնիրեն ըստ: «Այս ծերունիին ողորմութիւն չեմ կրնար տալ, բայց ուրիշ կերպով կրնամիրեն օգնել» և գետնէն վերցնելով կոյրին զլխարկը իրեն տուաւ որպէս զի արևին տաքութենէն այլ եւս չնեղուի:

Մարիամ լու հասկաւ իր պարտականութիւնը: Անա նշմարիս պարտականութիւնը, որ զիտ խօսեն մը, գործով մը միսիրաւել նեղութեան մէջ զննուողը, անոր բարիկ ընել եւ զգացնելո՞ւ: Իր վրայ կը մտածեն:

Բարեգործութիւն մը երբեք չկորսուիր

Տիկին Մ. օգնեց իր դրացիներէն մէկուն Տիկին Ն. ին անոր գումար մը փոխ տալով: Տիկին Մ. առանց նեղուելու չէր որ ըրաւ այս օգնութիւնը, բայց բան մը չյայտնեց, որպէս զի դիւրաւ ընդունիլ տայ:

Բաւական ժամանակ անցնելէն ետքը Տիկին Ն. վերադարձուց փոխ ստացած դրամը: Հիմա օգնելու կարգը իրեն եկաւ: Բայց Տ. Ն. չուզեց ստակ փոխ տալ իր վրացին, որ երբեմն այնչափ բարի եղած էր իրեն համար: Տ. Մ. անոր քովէն հեռացաւ իւրովի ըսելով, Բարեգործութիւն մը չկորսուիր ըսելը պարապ բան է եղեր:

Զեր կեանքին մէջ շատ անգամ առիթ պիտի ունե-

Նաք Տ. Մ.ի պէս խորհելու : Բայց այնպէս մի՛ ըսէք ,
որովհետեւ կը վհատիք բարեգործութիւն ընելէ :
Ընդհակառակը մտածեցէք թէ բարեգործութիւն մը
չկորսուիր : Բարեգործութիւն ընողը շատ անգամ
նիւթապէս չվարձատրուիր , շատ անգամ ապաշնորհ-
ներու կը հանդիպի , բայց բարիք գործելուն համար
իր խիզճին մէջ հանգստութիւն . գոհունակութիւն մը
կ'ունենայ . Խւրովի վայելած երջանկութիւնը բարեգոր-
ծուրեան վարձառութիւնն է : Ահա ասոր համար կ'ըս-
ոի թէ բարեգործութիւն մը երբեք չկորսուիր :

Ամէն հօմարտութիւնը ըսելը աղէկ չէ

—Ես անկեղծ եմ , կ'ըսէ ԷՄատլէն , ինչ որ խոր-
հիմ ան կ'ըսեմ : Այսպէս , Լիւսի քեզ տգեղ կը գտնեմ ,
Մարի , դուն խելացի չես , Մարգարիտի հագուստնե-
րը միշտ անյարմար են , Վարդուհին ստախօս է և
Աննիկի ծնողըը կոշտ են : Կը տեսնէ՞ք , ձեզ չեմ շո-
ղոքորթեր , ճշմարտութիւնը կ'ըսեմ , որովհետեւ ան-
կեղծ եմ :

Լա՛ . Մատլէն յիմարութիւնը՝ կ'ընէ այսպէս խօ-
սելովք : Այս' , այս ամէնը ճշմարիտ է , բայց պէտք
չկայ պարապ տեղը ըսել : Ի՞նչ բանի կը ծառայէ :
Ահա Լիւսին , Մառին , Վարդուհին և Աննիկ շատ
վշտացած են որ իրենց ընկերն այս բաներն ըստած է ,
մանաւանդ որ գիտեն թէ Մատլէն այսպէս կը խորհի ,
Մատլէնի պարտականութիւնն է իր ընկերները ու զ-
ղելը , ազնուացնելը , զանոնք խրատելը , յանդիմա-
նելը : Ո՛չ , ուրեմն թո՛ղ լուէ , որովհետեւ եթէ այս
սովորութիւնը չփոխէ՝ ոչ մէկ բարեկամ կ'ունենայ :
Այն ատեն միայն հօմարտութիւնն ըսէք երբ բացարձա-
կապէս պարտաւորուած էք :

Երբէք իրաւունք չունինք խաբելու

Վերգինէ լաւ խնայող և տնտանի-
քին շահերը կը պաշտպանէ , բայց ափսոս որ իր
եռանդը երբեմն զինքը շատ հեռուն կը մղէ և անց-
եալ օր փորձութենէ մը յաղթուեցաւ : Ձեզ պիտի
պատմեմ : Մսալվաճառէն գնում մը ըրած էր , հասա-
րակ մսավաճառ մը , որուն խիզճը շատ մաքուր չէր ,
և շատ անգամ իր վաճառքին արժէքէն աւելի առած
էր : Օր մը հաշուին մէջ սիստելով տասնոց մը պակաս
հաշուած էր : «Ճասնոց մը , բան մը չէ , ըստած էր ինք-
նիրեն հաշուը ստուգելով . . . շատ անգամ ինձմէ
աւելորդ տասնոցներ առած է : Այս տասնոցը կը պամ-
էեմ , իմ շահս է» , և չվերադարձուց :

Ի՞նչ կը խորհիք այս մասին : Ես ամէն պատուաւոր
մարդու հետ կ'ըսեմ թէ Վերգինէ անիրաւ էր : Մեր
անձնական շահը պիտի չփնտուենք երբ առաքինու-
թեան դէմ է : Նոյն խոկ տասը փարան պիտի շիւրա-
ցընենք , երբ իրաւունք չունինք : Ես այսպէս կը
խորհիք , կարծեմ ձեր կարծիքն ալ այս է , այնպէս
չէ , թէ Վերգինէ պարտէր մսավաճառին տասնոցը
վերադարձնել : Ուրովիետեւ անգամ մը խաբուած ըլլա-
լուն համար իրաւունք չէ խաբելլ :

Ստելը ուրիշին անիրաւութիւն կը պատճառէ

Հին գրքի մը մէջ պատմութիւն մը կայ զոր դուք
լաւ գիտէք : Տղու մը պատմութիւնն է աս որ իր
ըրած մէկ յիմարտութիւնը չխոստովանելու համար թոյլ
տուաւ որ իր ընտանիքէն մէկը իրբեւ յանցաւոր
պատժուիք : Իր հայրը , մայրը չուզեցին այլ ևս ու է
պատժուիք :

յարաբերութիւն ունենալ անոր հետ . երբեմն այն-
չափ միացած ազգականներու մէջ խռովութիւն ինկաւ
և մեղադրուած անձնաւորութիւնէն բաժնուեցան . այն
անձը ամէնէն լքուած մեռաւ խեղճութեան և կա-
րուութեան մէջ :

Զէք գիտեր թէ՝ սուտի մը հետեւութիւնը ի՞նչ
կ'ըլլայ , բայց կրնաք վստահ ըլլալ , որ մէկուն աղի-
տարեր կ'ըլլայ : Կրնայ պատահիլ որ միշտ մէկը ձեր
ստախոսութեան պատիքը կրէ և կամ ոմանք երկար
ժամանակ և ոմանք ընդ միշտ նեղուին : Տեսէք
ուրեմն զձեզ արդարացնելով ձեր ըրած ստախօսու-
թեան անիրաւ հետեւութիւնը , երբ ո՛ւ և է առարկայ
մը աներեւութանայ , եթէ գողցուած չէ ու մէկը
գտնէ զայն կոտրուած , անմիջապէս ըսէք եթէ ընո-
ղը գուք էք , մի՛ թողուք որ ուրիշը մեղադրուի :
Սուլը միայն կարն ժամանակի համար կրնայ խօսողին
օգտակար ըլլալ :

Ինչո՞ւ նամար պէտք է ուրիշին գաղտնիքը պահել

Անգամ մը մարդ մը կար , որ երկար ճամբորդու-
թիւն մը պիտի ընէր , ուստի ոսկիով լեցուն տուփ մը
յանձնեց իր դրացիին : Դրացին խոստացաւ պահել
առանց ձեռք դպցնելու : Տուփը իր դարակներուն
ամէնէն խոր անկիւնը պահեց և ապահովեց ճամբոր-
դը , թէ այնպէս պիտի պահէ իրբեւ թէ իրեն բան
մը արուած չէ :

Բայց երբ ճամբորդը մեկնեցաւ , դրացին զնաց
տուփը հանեց բացաւ , բարեկամներուն ցցուց , ոսկի-
ներէն առաւ և անոնց հետ մէկտեղ ծախսեց :

Ի՞նչ կը խորհիք այս գործին վրայ : Այդ դրացին
գող մըն էր , այնպէս չէ՞ :

Գաղտնիքներ կան , որ աւելի թանկագին են քան
ամենաթանկագին տուփը : Երբ մէկը իր գաղտնիքը
բարեկամներուն կը վստահի , անիկա պէտք է ամե-
նայն խնամով պահէ մաքին մէջ , պէտք է մոռնայ :
Եթէ երկան հանէ՝ վերը կարդացած պատմութիւն-
ներնուդ պէս կ'ընէ , ան ալ տեսակ մը գող է բարե-
կամին գաղտնիքը կը գողնայ և իր ծանօթներուն կը
բաժնէ . ինչպէս դրացին կը բաժնէր ուկիները :
Գաղտնիք մը լսողին չպատկանիր , ալ միւս զայն լսո-
ղին : Եւեւան հանելը գողութիւն է :

ԱՅԻՐԱՎՈՐԻՒՄ

Անցեալ տարի , Մարգարիտ խենդութեան վայր-
կեանի մը մէջ մէծ յանցանք մը գործեց : Իր երեք
բարեկամուհիները գիտցան այդ յանցանքը : Ոչ ոքի
խօսեցան այդ մասին , բայց իրենց միտքը պահցին
ու այլ ևս չուզեցին Մարգարիտին հետ տեսնուիլ :

Բայց Մարգարիտ իր ըրածին վրայ զղաց , նե-
րողութիւն խնդրեց իր ըրած անմտութեանը համար ,
իր պատիքը կրեց և անկէ ի վեր զգյուշ էր , լուս ,
իր պատիքը կրեց և անկէ ի վեր զգաց թէ՝ պէտք է ըրած
աշխատող , որովհետեւ զգաց թէ՝ պէտք է ըրած
գէշ գործին հետքը անհետացնել , մէկ խօսքով օրի-
նակելի ընթացք մը ունեցաւ : Սակայն երեք բարե-
կամուհիները անհաշտ մնացին . ահա անիրաւութիւնը :

Տղաք . յիշեցէք , որ այդ երեք փոքր աղջկնե-
րուն ըրածը լաւ չէ : Մենք իրաւոնք չունինք դատա-
րոր ըլլալ մեր նմաններուն հոգւոյն մէջ անցած բա-
ներուն : Մենք պէտք է մոռնանք անոնց անցեալը՝
երբ յետոյ իրենց ընթացքը կը բարւոքեն : Մենք պէտք
երբ յետոյ իրենց ընթացքը կը բարւոքեն :

ուրիշերն մեզ հետ այցակա ըլլան, Զեղմէ ո՞ր մէկը կրնայ վստահ ըլլալ թէ բնաւ պէտք պիտի չունենայ ներողութեան:

Ճարպիկ ձեռք

— Ես շար չեմ, կ'ըսէ Ալէքսան, բայց «ճարպիկ» ձեռք ունիմ:

Ալէքսան շատ դիւրաւ ինքոյինքը կ'արդարացնէ, իր «ճարպիկ» ձեռքը միշտ պատրաստ է հարուածելու իր ընկերոջ գէմքը՝ անոր հետ ունեցած կռուին վրէժը առնելու համար: Այդ ճարպիկ ձեռքը օր մը իր գլխուն գէշ փորձանք մը պիտի բերէ:

Օր մը երկու փոքրիկ տղաքներ կը վիճարանէին: Անոնցմէ մէկը Ալէքսանի պէս ճարպիկ ձեռք ունէր: Իրեն տրուած անհաճոյ պատասխանի մը վրայ երկու զօրաւոր ապտակ իջեցուց ընկերին երեսին: Ծեծուող ընկերը այս անտկնկալ հարուածէն խելքը կորսնցուց եւ այնպէս ուժով գետինը ինկաւ, որ չորս ակուաները կոտրեցան: Ճիշտ առջեւի ակուաներն էին եւ տըշան խաթարուած պիտի մնար եթէ ատամնարոյժ մը արհեստական ակուաներ չչիներ: Բայց վիրաւորուած տղին ծնողքը դատ բացին «ճարպիկ» ձեռք ունեցող փոքրիկ տղոն ծնողքին դէմ, եւ ասոնք ստիպուեցան բաւական մեծկակ գումար մը վճարել իբրեւ տուգանք:

Ահա զորնելու գէշ սովորութեան արդիւնքը. այս նիւթական արդիւնք է, բայց այս չէ միտյն, որովհետեւ բարոյական տեսակէտով զարնող տղան կ'սորենանայ կուտուրեանը պատճառով:

Ուրիշին ստացուածիը յարգեցէ

Ուրիշին ստացուածքը՝ այսինքն հող՝ եթէ ունի, իր տունը եթէ ունի. կամ իր հագուստները, իր գործածութեան առարկաները և իր ստակը՝ իրեն կը պատկանին:

Երբեմ փոքր աղջիկներ, նոյն իսկ շատ պատուաւոր, խղճմտութեամբ չեն յարգեր ուրիշին ստացուածքը:

Ճամրէ մը կ'անցնին. շատ տաք է, ծառէ մը պառղներ կը քաղեն, այդիի մը մէջէն՝ խաղըդ, առանց խորհելու ուրիշին պատճառած վնասնուն վրայ, «Օհ, կ'ըսեն, այս կալուածատէրը այնչափ պառղ ունի որ քաղածնիս բան մը չէ»:

Ուրիշ անդամ մրգավաճառին քովէն չեն հեռանար առանց տուփի սալորէն հատ մը, կողովէն չոր թուզ մը առնելու, ասոր համը կ'առնեն, անոր համը կը տեսնեն: «Օհ, կ'ըսեն, դարձեալ այնչափ քիչ բան է այս»:

Կ'ուզ, ք ձեր պատճառած վնասը գիտնալ: Ենթադրեցէք թէ ամէն անցորդ ծառէն պատու մը կամ ամէն յաճախորդ տուփէն սալոր մը առնէ, ահա շուտով ծառը առանց պատողի կը մնայ և տուփը պարապ:

Ծառայները անխնայ մի՛ զործածէ

Մենք այլիս այն ժամանակները չենք, երբ գերիներ եւ ըստրուկներ կային, բայց հակառակ ամէնօրեայ մեր ընկերութեան կազմակերպուելուն, գեղակը պատահին երբեմն ծառայները չորաչար գործածողներ:

Ագարակատէր մը ծառաներ, գործաւորներ ունի գոր ամէն վայրկեան կ'աշխատցնէ և զանոնք կը վարձատրէ իրեն մատուցած ծառայութիւններն ուն համոր, Բայց իրաւունք չունի տառը համար ամէն բան պահանջելու: Անոնք իր ծառայութեան մէջ են՝ ըրած պայմաններուն համար և ոչ ուրիշ բանի: Պէտք է անոնց ժամանակ տալ որ իրենց մասնաւոր գործերուն ալ պարապին, երթան իրենց ծնողքը տեսնելն կա՞ անոնց գրել, որպէս զի եթէ կը վարփաքին՝ կատարին իրենց քաղաքային և կրօնական պարտականութիւնները, Նոյնպէս պէտք է շարթուան մէջ գոնէ օր մը թոյլ տալ, որ հանգստանան:

Յարգել ծառային հանգստութիւնը, կը Եւանալի ապահովել իրենը:

Մարդասիրութիւնը՝ աշխատութիւնով

Փարիզի և քանի մը մեծ քաղաքներու մէջ մարդասիրական ընկերութիւններ կան որոնց նպատակն է թշուառներուն օգնել ոչ թէ անոնց ողորմութիւն տալով, այլ այնպիսի վրճակի մը մէջ զնելով որ իրենց աշխատանքով իրենց պէտք եղած դրամը շահին: Այս ընկերութիւնը դիւրին արհեստներու աշխատանոցներ կը բանայ և հոն ամէն կարօտեալ՝ օդտակար կերպով կրնայ գործել առանց արհեստ մը սորված ըլլալու:

Առ այժմ, տղաքս, դուք այս կերպ մարդասիրութիւն չեք կրնար ընել, բայց վերջը երբ աւելի մեծնաք և ճեր գործերուն տէրը ըլլաք, հետեւեալ խորհուրդը մտքելնիդ բերէք:

Երբ կրնաք մէկուն շահեցնել այնչափ՝ որչափ

կ'ուզէք ողորմութիւն վալ, մի՛ վարանիք: Եթէ ծուլութիւնը թշուառութիւն առաջ կը բերէ, թշուառութիւնն ալ փոխադարձաբար կը ծնի ծլութիւն, Մուրացող դժբախտները դիւրաւ կը վարժուին ապրիլ միմիայն մուրացկանութեան իրենց հայթայթած արդիւնքով: Վերջ ի վերջոյ այս ալ արհեստ մը կը դառնայ անոնց համար, կ'ստորնանան, անպատիւ կը լան ու ա՛լ աշխատանք չեն փնտոեր: Միւս՝ երկ կարելի է, մարդասիրութիւնը պէս է աւելի զոր տակ լլայ տան քէ ողորմութիւնով:

Լաւ գաղափար մը

Ագարակապանուհի մը դրան առջեւ նոտած բանջարեղէն կը մաքրէ աշխատաւորներու ապուրին համար: Ամառուան մէջ տեղ է խոտերը դեռ մարդագագետինն են և կարելի է նախազգալ թէ քրէ տաենէն մեծ փոթորիկ ծագի: Մեծ դժբախտութիւն պիտի ըլլայ, եթէ անձրեւը հունձքերուն վնասէ: Ագարակապանուհին այս խորհելով քիչ մը մտատանջ է:

Ահա ճամբուն վրայ մուրացկան մը կ'երեւի: Կը մօտենայ ազարակապանուհիին և ողորմութիւն կը խնդրէ: Ագարակապանուհին գթած է: Ճեռքը քըրպանը կը տանի ստակ հանելով աղքատին տալու համար: Բայց յանկարծ միտքը կը փոխէ: «Բարի մարդ, կ'ըսէ, դեռ այնքան ծեր չես, որ չկարենաս աշխատիլ: Կ'ուզեմ քեզի քիչ մը դրամ շահեցնել, ասիկա տիլ:» Զայն կ'առաջնողորմութիւն մուրալէն աւելի լաւ է»: Զայն կ'առաջնորդէ մարդագետինը, հեծանող մը կուտայ, ամբարանոցը կը ցուցնէ և կը խնդրէ որ խոտը հոն լեցնէ: Մարդը կ'ընդունի և երկու օր այսպէս կ'աշխատի,

շահելով իր սնունդը, պառկելու տեղը և քիչ մըն ալ ստակ: Ահա՝ լաւ գաղափար մը, մարդասիրութիւն ընելու ճշմարիտ և իմաստուն եղանակ մը:

Կրնայ ըլլալ որ մուրացիկը երկրագործի մը պէս յաջողութեամբ ճարպիկութեամբ չէ աշխատած, կրնայ պատահիլ որ գործը պէտք եղածին պէս չէ կատարուած, բայց գոնէ չէ մուրացեր, և ազարակապանուհին առանց նուաստացնելու ստակ տուեր է անոր:

Մարդասիրութիւն ընենի յարատելութեամբ

Մարդասիրութիւն ընելը կրնայ հաճոյք մը ըլլալ, սրտի հաճոյք մը, բայց խաղ մը չէ: Կան տղաք, նոյն իսկ մեծեր, որ մարդասիրութիւնը, ողորմութիւնը զբօսնելով կ'ընեն. պէտք չէ այսպէս ըլլայ:

Վարդուհին, օրինակի համար, օրեր կայ որ կ'ուզէ հանդիպած բոլոր խեղճերուն բարիք ընել: Եթէ ըստակ ունի, առնոց կուտայ, եթէ թոյլ տան՝ տանը մէջ գտնուած ամէն բան պիտի տայ:

Վաղն՝ ա'լ առնոց վրայ չխորհիր: Մուրացիկի մը քովէն կանցնի առանց զայն տեսնելու, կը մոռնայ թէ խոստացեր էր աղքատ հիւանդի մը այցելութեան երթալ: Ալ չի յիշեր թէ փոքրիկ աղջիկ մը պիտի գայ զգեստ առնելու, որուն երէկ խոստացեր էր:

Վարդուհի ողորմութիւն կ'ընէ քմահաճոյքով, խաղալով, առանց յարատելութեան: Պէտք չէ այսպէս ընել: Մարդասէր, ողորմած եղէք և աղիաներուն բրած խոսումնիդ մի՛ մոռնաք:

Բամբասանիկ սոսկացէք

Երէկ կատարինէ Աննիկէն դժգոհելու տոկթ ունեցաւ: Այսօր կը կանչէ ընկերներէն մին ու անոր կ'ըսէ. «Դիտե՞ս... տեսայ որ Աննիկ վարժուհին գորոցը բացաւ և բոլորովին նոր գրիչ մը առաւ: Ալ անոր հետ չխաղանք, գողզ մըն է ան»: Ահա առ լուրը կը տարածուի զորոցին մէջ, որովհետեւ փոքր աղջիկները իրաբու կը հազորդեն: Շուտով Աննիկ ամէնուն երեսէն կ'իյնայ, առանց հասկնալու թէ ինչո՞ւ համար: Շատ դժբաղդէ է, որովհետեւ բամբասանքի զոհ է. չար կատարինէն Աննիկէն վրէժ առնելու համար հնարած է այս պատմութիւնը, Դիպուած մը գործը երեւան կը հանէ: Աննիկ անմեղ հրատարակուած է բոլոր ընկերներուն առջեւ և հիմա կարգը կատարինէին է՝ որ ընկերութենէն մերժուի:

Աւա՛զ, բանրասանքի բոլոր պատմութիւնները այսպէս չեն վերջանար: Որչափ անգամ անմեղը, անկարող ըլլալով իր անմեղութիւնը հաստատել, ամբողջ կեանքին մէջ արհամարուած կը մնայ:

Տղաֆ, երբէք մի՛ զիջանիք բամբասանք ընելու որ ցածութիւն, չարախօսութիւն եւ սախօսութիւն է:

Զարախօսին լեզուն սոսկալի զէնի մըն է

Պղտիկ աղջիկ, հսկէ խօսքերուդ վրայ: Շատ անգամ առանց չարութեան աջ ու ձախ կը պատմես ինչ գիտես, աննպաստ պատմութիւններ բարեկամները կիտես, աննպաստ պատմութիւններուն վրայ: Առնոնց չարուդ կամ ընտանիքիդ ծանօթներուն վրայ: Անռնոց չարիք հասցնելու գիտաւորութիւն չունէիր, բայց այդ պէսով չարիք կ'ընէս, որովհետեւ առնոնց վրայ եղած պէսով չարիք կ'ընէս,

վատահութիւնը, համարումը կորսնցնել կուտաս, կ'արգիլես զանոնք բարեկամ ունենալէ, անոնց թշշնամիները կը քաջալերես:

Ճանչցած մարդիկներուդ իրական պակասութիւնները և ճշմարիտ սխալները ամէն տեղ քիչ մը պատմելով, սուտ չես խօսիր, միայն ճշմարտութիւնը կ'ըսես, բայց աս անհաճոյ ճշմարտութիւն է և վլասակար անոնց, որոց վրայ կը խօսիս: Դու չարախոսութիւն կ'ընես. չարախոս ես:

Չարախոս մի՛ ըլլար: Քեզի հաճելի թող չթուի մէկուն պակասութիւնն ուրիշներու պատմել: Ճշմարիտ մարդասիրութիւնը քեզի կը պատուիրէ մօտդ եղողներուն նկատմամբ լոռութիւն պահել: Դուն ալ առանց պակասութեան չես: Ի՞նչպէս որ կ'ուզես ուրիշները վարուին մեզ հետ, դուն ալ այնպէս վարուի:

Չարախոսութեամբ եղած չարիք անդարմանելի է:

Սպասուհի մը, իր տասներկու տարեկան ձկասակէն ծառայութեան մտած էր, և այն տանը մէջ փոքրիկ գողութիւն մը ընելու դժբախտութիւնն ունեցած էր: Բանը երեւան ելեր էր, բայց փոքր աղջիկը այնպէս զղջացեր էր, որ տիկինը չէր ճամբեր: Բայց այն տիկինը քաղաքէն երթալով, սպասուհին ստիպուեր էր ուրիշ գործ մը փնտոել: Սակայն ինք անխոհեմաբար շատ պարի առաջ ըրած այդ պակասութիւնը պատմած էր, և չար շատախօս ծառայ մը ամէն տեղ կրկներ էր: Անկէ կը կասկածէին, թէպէտե շատ տարիներէ ի վեր հաւատաբութեան և բարի վարքի օրինակ տուած էր: Օր մը աներեւթացաւ և գիւղին

մէջ լուր տարածուեցաւ թէ արտասահման գացեր է այս անուանարկութէնէն ազատելու համար, և հոն մեռած է նեղութեան ու թշուառութեան մէջ:

Կը տեսնէ՞ք թէ չարախօսութիւնը որչա՛փ վտանգաւոր բան է: Չարախօսները չեն խորհիր թէ այն անձը որուն պակասութիւններն ու զաղտնիքը երեւան հանած են, կրնայ զղջալ, բարւոքիլ, լաւ զգացումներ ունենալ, բարի և պատուաւոր դառնալ: Այն գաղտնիքը, որուն համար ինքզինքը կը մեղադրէր՝ չարախօսութեամբ երեւան հանելը՝ զղջալն անօգուտ դարձնել է:

Չարախօսութիւնը բամբասանիք աւելի գետ է:

Ինչպէս չարախոս կ'ըլլայ մարդ

Մարդ չարախօս կ'ըլլայ երբ ուրիշին վրայ աւելորդ բամբասանքներ կ'ընէ հաճոյք զգալով անոր գործովը զբաղիլ, հետաքրքրուելով թէ ի՞նչ կ'ըսեն դրացիները, ուզելով հասկնալ անոնց գործերը: Հետաքրքիրը, եւ շատախօս ըլլալը կ'առաջնորդէ չարախօսութեան, որովհետեւ ուրիշին վրայ հազարաւոր աննշան բաներ ըսելով, վերջապէս կը հասնին խորհրդածութիւններ, ակնարկութիւններ ընել, որ կրնան անոնց կորստարեր լինել:

Կուզէ՞ք սովորութեամբ չարախօս ըլլալ: Զեր ընկերներուն բացակայութեանը՝ անոնց վրայ գէշ մի՛ խօսիք: Զեզի չվերաբերած բաներով մի՛ զբաղիք, խօսիք: Զեզի չվերաբերած բաներով մի՛ զբաղիք, ինչպէս կ'ըսեն հասարակօրէն: Եթէ մէկը ձեր առջեւն փոխէ վրայ չարախօսէ, ճարպիկութեամբ մը խօսակուրիշ վրայ չարախօսէ, ճարպիկութեամբ մը խօսակուրիշ փոխէ վրայ չարախօսէ: Աւելի շահեկան բաներ կան խօսելու բան քի ծանօթներու վրայ գետ խօսիլը:

Անճշդապան մի՛ ըլլար

Կը կարծուի թէ անճշդապահութիւնը մեծ պակասութիւն մը չէ, բայց եւ այնպէս անճշդապահութիւնը միշտ մէկուն վնաս կը հասցնէ, հետեւաբար արդարութեան դէմ պակասութիւն մըն է, զոր մարդ ինք իր դէմ կը գործէ :

Գործաւոր մը խոստացաւ այն ինչ գործը այն ինչ ժամին աւարտել : Կ'սպասէին, անոր համեմատ կարգադրութիւններ րրին : Գործաւորը նշանակեալ ժամանակէն շատ ժամեր ետքը վերջացուց : Այնպիսի պակասութիւն մը գործեց, որուն հետեւանքը կընարժանրակշիռ ըլլալ :

Վաճառական մը խոստացու այս ինչ օրուան համար այն ինչ ապրանքն ունենալ, և չունեցաւ : Յաճախորդը որ յետաձգած էր գնումը, որոշեալ ժամին չկրցաւ ունենալ ուզած այն ապրանքը : Ահա անոր պատճառով մեծ տհաճութիւն մը եւ թերեւս մեծ կորուստ մը :

Շրջագայութիւն մը պիտի ընեն . այն ինչ օրուան համար, այն ինչ ժամուն, այն ինչ տեղ ժամադիր եղած են : Հրաւիրեալներէն մէկը որոշեալ ժամին չիգար : Անոր կ'սպասեն : Ժամանակը կ'անցնի, կառախումքը կը մեկնի . չեն կրնար անկէ օգտուիլ : Վերջապէս ուշացող հրաւիրեալը կուգայ . բայց ծրագիրը խանգարուած է, շրջագայութիւնը կատարուած չէ, ամէն մարդ անճշդապահութեան պատճառուած ձանձրութիւնը կը կրէ :

Ճշդապահ եղի՛ր, խորհի ֆեզի սպասողներուն վրայ, որոնք եռ վրադ վատահ կ'սպասէին ուշագայութիւն մը ընելու համար :

Հակառակասիրութիւն

— Ահա շատ գեղեցիկ կերպաս մը, ըստ Վարդուհի :

— Ոչ, գեղեցիկ չէ, կը պառասխանէ իսկուհի, գոյնը նետած է, անձաշակ է :

Վարդուհի կը փոխէ խօսակցութիւնը :

— Այսօր շատ գէշ եղանակ մ'է :

— Օ՛հ, ո՛չ, այնչափ գէշ, կը պատասխանէ իսկուհի :

— Երէկ օրիորդը տկար կ'երեւէր :

— Ես շատ լաւ տեսայ զինքը :

Այսպէս շարունակաբարար :

Ահա թէ ինչ է հակառակախօսութիւնը :

Անշուշտ ստիպուած չենք ամէնուն համակարծիք ըլլալ . ընդհակառակը, լաւ է վարժուիլ անձնական կարծիք մը ունենալու, բայց եթէ այս կարծիքը հակառակ է անոնց որոնց քով կը գտնուինք, պէտք է ինչ ինչ փափոխութեամբ մեղմենք : Երբ վարդուհի և իսկուհի կը խօսէին, դիտեցիք որ իսկուհի ոչ մէկ զիջում կ'ընէր : Բառութեամբ, կոշտութեամբ կը հակառակէր անոր : Բարեկամական յարաբերութիւնները անկարելի է որ մնան հակառակասէր բնաւորութիւններու մէջ :

Բոլոր կրօնիները յարգելի են

Ինչ ինչ դպրոցներու մէջ այլակրօն աշակերտներ կան : Տղոցմէ ոմանք կը նախընտրեն յարաբերութեան մէջ չըլլալ այն ընկերին հետ, որ իրմէ տարրեր կրօնք ունի . կը խորհին, թէ անոնք որ ու-

ըիշ կերպ կը մտածեն, իրենցմէ տարբեր բան մըն են, Զիրենք գերիվեր կը կարծեն միւսներէն:

Համոզուեցէք որ բոլոր կրօնական հաւատալիքները յարգելի են, որովհետեւ բոլորն ալ ինչ որ ըլլայ իրենց անունները, կրնան հոգին ազնուացնել, բարձրացնել, մեծնել, եթէ կարենան լաւ մեկնուիլ:

Յարգեցէք ուրիշներու կարծիքը, եթէ կը փափաքիք որ ուրիշներ ալ ձերը յարգեն:

Մարդասէր եղիք

Այնքս ալ եղբայրներ ենք, և այս եղբայրութենէն աւելի բարձր եղբայրութիւն կայ, այն է մարդկային եղբայրութիւնը, որ աւելի վեհ և ազնիւ է միւսէն:

Օտարական մը օգնութեան կը կարօտի: Զըսէք, «Անոր համար բան մը պիտի չընենք որովհետեւ մեզի ազգակից չէ»: Խորհինք, որ մարդ է, կը նեղուի կամ կը տառապի, ինչպէս մենք կրնայինք նեղուիլ, տառապիլ: Մենք մեզի հարցնենք թէ ի՞նչ պիտի փափաքէինք, եթէ օտարութեան մէջ ըլլայինք: Նեղութեան մէջ գտնուղներուն համար եղբայրական սէր, գորով ունենալու է, ինչ որ ալ ըլլայ անոնց անունը և ծնունդը: Նիւթական նեղութեան մէջ իրարու օգնելու է:

Գործունեայ գուրը

Մարիամ ձմբան ցուրտ օր մը փողոցին մէջ կը հանդիսի աղքատ աղու մը, որուն կօշիկները այն-

չափ մաշած էին, որ բոպիկ ոտքերը կ'երեւային: Մարիամ լաւ սիրտ ունի, աչքերը արտասուրքով կը լեցուին այս խեղճ տղան տեսնելով: Բայց աղքատին քովէն կը հեռանայ և վայրիկեան մը ետք ալ անոր քովէն կը հեռանայ: Փոքրիկը յուզած էր Մարիամի սիրովայ շխորհիր: Փոքրիկը յուզած էր Մարիամի սիրով, բայց ան՝ կարեկցելէն զատ բան ըրած չէր:

Զապէլ կ'անցնի միեւնոյն փողոցէն. ան ալ կը հանդիսի նոյն աղքատին: Սիրաը կը յուզուի Մարիամանդիսի պէս, և այս թշրւառութիւնը տեսնելով աչքերը արտասուրքով կը լեցուին անոր պէս: Այն ատեն կը մօտենայ տղուն, կը հարցափորձէ ու կը լսէ անոր թշրւառութեան դժնդակ պատմութիւնը, Յետոյ անոր կ'ըսէ «ինձի հետեւէ», ու կը տանի մօրը մօտ ըսելով. «Մայրիկ, կ'աղաշեմ, այս աղքատ տղուն համար բան մը ընենք: Չեմ կրնար դիմանալ խորհելով թէ գրեթէ անիկա բռպիկ է, մինչդեռ ես լաւ կօշիկներ ունիմ: Պէտք է օգնենք որ այս դժբաղդը ցրտէն չնեղուի:» Եւ մայրը, իր աղջկան խօսքերուն և զգացումին համար շատ ուրախացած, միջոցը ըստ կ գտնէ այն աղքատին օգնելու:

Ահաւասիկ գործունեայ գութը, ան չըստականանար թշրւառութեան վրայ ողբալով, այլ կ'օգնէ ու կը միսիթարէ:

Գիրցիր անձնուէր ըլլալ

Փոքրիկ աղջիկ, հիմուկուընէ անձնուիրութեան վարժութիւն ըրէ: Կրնաս ասիկա, որովհետեւ կարելի է ամէն պարագայի և ամէն տարիքի մէջ անձնուէլ ըլլալ: Քեզի պիտի ըսեմ թէ ինչպէս:

Դպրոցը, պարտականութիւն մը քեզ կը ձանձրա-

ցընէ . խորհէ , թէ այդ պարտականութիւնը կատարելով հօրդ , մօրդ , ուսուցչիդ և քեզի սիրող մէկուն հաճոյք պիտի պատճառես : Ուրեմն կատարէ :

Երբ արձակուրդի ժամանակ տունը գտնուիս , կրնայ պատահիլ որ , հայրդ , մայրդ , եղբայրդ կամ քոյրդ հիւանդանան : Պէտք է որ մէկը անձնուէր ըլլայ , անկողնին քով նոտի ու զանոնք խնամէ . այն անձը դո՛ւն եղիր :

Ուրիշ անգամ՝ պէտք կ'ըլլայ ձանձրանալի ճամբարութիւն մը կատարել , քուկիններէդ մէկին համար որ գրել չգիտէ՝ նամակ մը գրել , կամ անհաճոյ զբաղում մը ունենալ՝ փոխանակ հաճելի խաղի մը : Ըրէ՛ այս ճամբարութիւնը , գրէ՛ նամակը . յանձն առ այս զբաղումը :

Այսպէսով անձնուիրութեան գործ մը կատարած պիտի ըլլաս , և կանուխէն պիտի զգաս այն ուրախութիւնը , զոր կ'ունենան գիտնալով թէ ուրիշին օգտակար եղած են :

Յօդարութեամբ պէտք է անձնուէր ըլլալ

Զապէ՛լ , ըստ մայրը , այսօր շատ տկար եմ , առանց մեծ յոգնութեան պիտի չկրնամ կարել եղբօրդ զգեստը , որուն շատ պէտք ունի : Որովհետեւ այսօր հինգշարթի է և դուն դպրոց չես երթար , արդեօք չե՞ս կրնար այս կարը վերջացնել :

Զապէլ շատ ցած ձայնով կը պատասխանէ . «Այո՛ , մայրիկ» , թթուած կերպով մը կը նոտի պատուհանին մօտ և կ'սկսի կարել : Միեւնոյն ժամանակ կը խորհի այն հաճոյքին վրայ , զոր պիտի վայելէր անտառ երթալով կաղին քաղելով կամ դաշտին մէջ ծաղիկ հաւա-

քելով , իր բարեկամներուն հետ օրուուելով , փոխանտկ դերձակուհիի մը պէս նստիլ և կարելու : Զապէլ անձնուէր կ'ըլլայ , որովհետեւ պէտք է , բայց իր ըրած զոհողութեան չափը կ'զգացնէ և մայրը այս բանին կը վշտանայ :

Տղա՛ք , եթէ դուք անձնուիրութիւն ընէք յօժարութեամբ ըլէք : Անձնուիրութեան գլխաւոր արժանիքը կը կայանայ աննշնարելի ընելուն մէջ :

Անձնուիրութեան բաղցրութիւնը

Փոքրիկ աղջիկ . թերեւս չգիտես անձնուիրութեան քաղցրութիւնը . դեռ չգիտես թէ մարդ ուրիշին հաճելի ըլլալու համար , ինքնիրեն հակառակելով ճշմարիտ ուրախութիւն կ'ունենայ :

Հակառակ քու մոտաղ հասակիդ . արդէն կրնաս շատ բան ընել քեզի շրջապատզներուն համար : Կը ընս զանոնք նեղութենէ մը աղատել՝ դուն ինքդ նեղուելով . կրնաս անոնց մօրդ տեղ աշխատառութիւն մընել , եթէ ան յոգնած է . սեղանի վրայ կրնաս լու պատառը եղբօրդ կամ քրոջդ թողուլ , դարձեալ կրնաս ուսանիլ , աշխատիլ , կարել , խոհանոցի կրնաս պատառը պարապիլ այն ժամերուն , որ աւելի պիտի գործով պարապիլ այն ժամերուն , որ աւելի պիտի գիտեսիրէիր խաղալ , որովհետեւ գիտես որ այսպէս ընեսիրէիր հաճոյք կը պատճառես մօրդ : Պիտի տեսնես , լով հաճոյք պատճառես մօրդ : Պիտի դաշտուն պիտի զգաս փոքրիկ աղջիկ , թէ ի՞նչ ուրախութիւն պիտի զգաս սրտիդ մէջ , երբ քիչ մը անձնուէր ըլլաս , երբ նըշմարես թէ տաս տասներկու տարեկան եղած ատենդ , արդէն բարի և օգտակար էակ մ'ես : Փնտուէ քու երջանկութիւնդ ուրիշներու երջանկութեան մէջ . ահա այս է երջանիկ ըլլալու միջոցը :

Ա. Պօթել

Տղա՛ք, աղօթքէ ետք, ձեր սիրտը աւելի թեթև
և ձեր հոգին աւելի գոհ չէ՞ք զգար:

Աղօթքը կը թեթեցնէ վիշտը և աւելի անխառն
կը դարձնէ ուրախութիւնը. մէկին կը խառնէ չգիտեմ
ի՞նչ զօրացուցիչ բան և միւսին երկնային բոյր մը:

Ի՞նչ կ'ընէք զուք երկրի վրայ և բան մը չունի՞ք
խնդրելու Անորմէ, որ ձեզ հոն դրած է:

Երբ կենդանիները կը նեղուին, երբ կը վախնան
կամ երբ անօթի են, աղիողորմ ձայներ կ'արձակեն:
Այս աղաղակներն աղօթքներ են, որ Աստուծոյ կ'ուղ-
ղուին, և Աստուած զայն կը լսէ: Արարածներուն մէջ
մա՞րդը միայն պիտի րիւալ այն էակը, որ իր ձայնը
երբէք չհասցնէ Արարչին ականջին:

Երբեմն դաշտին վրայէն հով մը կ'անցնի, որ
տունկերը կը չորցնէ և թարշամած թուլցած ցօղուն-
ները կը կախուին դէպի գետին, բայց խոնաւնալով
ցօղէն կը վերստանան իրենց թարմութիւնը և կը
բարձրացնեն թարշամած ու թուլցած գլուխները:

Ահա այսպէս մեր հոգիները երբեմն կը թուլնան,
կը թարշամին: Աղօթքը ցօղն է, որ կը թարմացնէ ու
կը կենդանացնէ:

Լաւգոյն աղօթք

Լսեցէ՛ք տղաք, մէկը ձեզի կ'ըսէ թէ ի՞նչպէս
պէտք է աղօթել: Կեանքը ձեզի արուած չէ շարու-
նակ անզբաղ աղօթքի հոգեզմայլութեան մէջ մնալու
համար: Ձեզի կեանք արուած է գործելու, բայց աղէկ
գործելու համար: «Աղօթք մը այն ատեն լաւագոյն
է և սուրբ, երբ շատ ժամերու աշխատութեան սկիզ-
բըն է և վերջը»: Աշխատութեան արգելք չէ և օգ-

տակար աշխատութեան տեղը չբռներ: Ուրեմն աղօ-
թէ՛, երբ աշխատութիւնդ ու գործերդ վերջացած
են կամ դեռ սկսած չեն բայց գործդ մի՛ ընդմիջեր,
պարտականութիւնդ կիսատ մի՛ թողուր աղօթքի մէջ
ընկղծելու համար: Բոլոր սրտով աշխատիլը՝ դարձ-
եալ աղօթել է:

Գիտե՞ս թէ՛ ի՞նչ պիտի խնդրես Աստուծմէ աղօթ-
քիդ մէջ: Մինակ բան մը, միշտ մի և նոյնը և միակ
կարեւորը: Անկէ պիտի խնդրես որ շարունակ ամենա-
լաւը ըլլաս: Այսպէս աղօթքը գրեթէ պիտի չփոխ-
ուի, երբ մեծնաս, որովհետեւ հոգւոյդ խորէն պիտի
գայ, երբ փոքր ես բոլորովին՝ տղայական պիտի
ըլլայ: Աղօթքը հոգւոյդ սովորութիւնը պիտի ըլլայ
և ոչ թէ շրթունքներուդ: Սրտիդ պէտք մը, գործ
մը պիտի ըլլայ: Սիրէ՛ աղօթել՝ ինչպէս կը սիրես
հայրդ:

Ա. ԱՏՈՒԱԾ

Տղա՛ք, կարդացէք հետեւեալ ոտանաւորը: Ան
կը խօսի Աստուծոյ վրայ: Ձեզի կ'ըսէ թէ կայ Աստ-
ուած մը: Ձեզի կ'ըսէ նաեւ թէ մեր խոճին մէջ ան
է որ կը խօսի: Ձեզի կ'ըսէ թէ արեւը, գիշերը, լու-
սաւորները, բնութիւնը, բոյսերը և կենդանիները,
և նոյն իսկ դուք իր ձեռագործներն էք, և ձեր հո-
գին՝ իր գլուխ գործոցը՝ երբէք պիտի չկրոսուի:
Գին՝ իր գլուխ գործոցը՝ երբէք պիտի չկրոսուի:
Տղա՛ք, կարդացէք այս ոտանաւորը, սորվեցէ՛ք և
մի՛ մոռնաք զայն:

Կեանք, ըսկիզբ եւ վախճան բո եւ աշխարհի ես դուն,
Որ ակնարկով մ ՚ընես անհունութիւնը բեղուն:
Ոզի տիեզերքի, Տէ՛ր, Հայը եւ Արարիչ
Անուններով կը պաղատիմ Քնեզ, ո՛վ Ստեղծող
Երբ արբին, կէսօրին, ընթացքովն օղավար

Կը հեղու զերմութիւն , կեանք , լոյս երկինքէն վար ,
իր շողերուն մէջ ճգօք՝ որ ինծի կեանք կուտան ,
Քու շունչդ կ'զգամ ու լոյսրդ ճշմարտութեան .
Եւ երբ զիշերը թափօրովն իր շողերուն
Նիրհած բնութեան նետէ մթին քօղ մ'երերուն ,
Անմահու թեան ծոցն ու խաւարին , առանձին ,
Խոկալով վեհութեանը վրայ բաղցըիկ զիշերին .
Համակուած լրութեամբ , անդորրութեամբ մը մթին
Հոգիս՝ յուզուած՝ պաշտէ էութիւնը բուկին :
Կ'զգամ , լոյս մը ներքին կ'ողողէ հոգիս ալ ,
Կը լսեմ ձայն մը որ պատուիրէ ինծ յուսալ :

Ի՞նչպէս կը պատեն Աստուած

Մեր առ Աստուած ունեցած առաջին պարտակա-
նութիւնն է զ/նքը պաշտելը :
Պաշտելը յարգանքի ամենարարձր աստիճանն է :
Մենք կ'արտայայտենք մեր պաշտումը առ Աստ-
ուած , իր անուան միացնելով մեր մտքի ըմբռնած
մեծագոյն կարեւորութիւնը , իր անունը երբեք թե-
թեւութեամբ պիտի չարտասանենք , արտաբերած
ժամանակ պիտի զգուշանանք հասարակ կերպով ար-
տասանելէ : Աստուծոյ անունը տուած ժամանակ պէտք
է զգոյշ ըլլալ , ինչպէս և պատւոյ խօսքի համար :

Աստուած պաշտելու ամենալաւ եղանակն է . մեր
բոլոր պարտականութիւնները ճշգիւ կատարել , որով-
հետեւ բարոյական օրէնքը նոյն իսկ Աստուծոյ օրէն-
քըն է խղճի մտօք կատարուած :

Այն որ պատուաւոր կերպով կ'աշխատի և իր պար-
տականութիւնների կը կատարէ , ան հաճելի է
Աստուծոյ , և Աստուծ առիթուրից բան չի պահան-
ջեր եթէ ոչ ըլլալ պատուած և աղնիւ մարդ :

7/1-1922

ՊԱՐՏԷԶ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

«Ազգային գրադարան



NL0151720

ԶՈՐԵԼ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԴՐԱՍ

1. Քարափական Ցնեսազիտութիւն (Մ. Քեշենան)	10
2. Պարտեղ Բարոյական և Գործնական Դաստիարակութեան	4
3. Տունեն Ներս (Քասիմ)	3½

ՄՈՏ ԱՏԵՆԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

4. Պատրանելի Մաղիկներ (Մ. Պարսամենան)	5
5. Մանկական Պարտեղ (Կ. Պալապան)	3½
6. Առուել Հին Օրերու (Յ. Գ. Մրմեհան)	5
7. Աւուցանելու Մերուր (Յ. Թ. Հինտեան)	2
8. Հօր ու Մօր Առաջնորդը	3
9. Ժողովուրդին Գիրքը (Քասիմ)	3½
10. Նոր Դասընթացք Գիտութեան .— Տարրական Եւ Միջին Դասընթացքները	

մարգ համար նորար յլութեան վ է նշրին թա ۳۱۹ տարին խլու ո
226 ամսուլ բաշտաման մուլ տպա այնաշնար

Գին 4 դր.